965

ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՈՍԿԱՆԵԱՆԻՑ

# ԹՈՂՈՔ

ՀԱՅՈՑ ԱԶԳԻՆ

ԵՒ

# ԻՒՐ ԾԽԱԿԱՆՆԵՐԻՆ

*Ծանակումն ծեծի հոգևոր իշխանութեան*
*և Բագւայ քահանայութեան վերայ.*

206
S-53

Գրեց Մեսրովբ ա. քահ. Տէր Ա[illegible]եանց

ТИФЛИСЪ
Тип. „Братство" Московская ул. № 5
1908 г.

ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՈՍԿԱՆԵԱՆԻՑ

# ԲՈՂՈՔ

# ԻՒՐ ԾԽԱԿԱՆՆԵՐԻՆ

*Շամախու թեմի հոգևոր իշխանութեան և բաքւայ քահանայութեան վերայ.*

Գրեց Մեսրովբ ա. քահ. Տէր-Ոսկանեանց

[stamp]

ТИФЛИСЪ
Тип. "Экономія„ Ав. Мугдусіакопова С-ми. Б-Ваик. 3.
1908 г.

Այս գրքոյկիս մէջ ընթերցողը կգտնի իմ նպատակս, թէ ինչի համար քահանայ դառայ, մինչդեռ ես վաճառականական ասպարէզում յաջող գործեր ունենալով, առանձին հազարներ էի դիզել: Դեռ ես բարոյապէս չփչացած ամեն մի անհատ, երբ իւրեն քիչ շատ ապահով է համարում, պարտաւորութիւն է զգում իւր մէջ լսել խղճի ձայնին օգնել իւրենից խեղճին, կարեկցել թշուառին, ձեռք մեկնել ընկածին կանգնեցնելու համար և, որքան հնար է, սրբել տառապեալների աչքին քրտինքն ու արտասուքն: Թէև գիտէի որ ծանր է այդ խաչը և թերևս իմ ուժից բարձր, սակայն չվհատեցայ քահանայ դառնալ. և ահա այդ ձգտումս հետևանքը այն եղաւ, որ 20 ամեայ քահանայութեանս ընթացքում գրեթէ $^1/_3$ ժամանակ կեանքս անցել է բանտերում ու աքսորավայրերում՝ ծանր զրկանքների ու դառնագոյն տանջանքների ենթարկուած. ես չեմ զղջում, որ այդպէս է եղել և լինում, և բնաւ հոգսել չեմ անում, որ այժմ ողորմութեան կարօտ աղքատ եմ և որպէս մի անպիտան պառաւած, հազիւ մի կեղտոտ անկիւն գտած՝ գրում եմ այս տողերը: Փոյթ չէ որ գրուածս զուրկ է ճարտասանական ճաճաուն ձևերից և չունի արտաքանական բարձր թռիչքներ՝ գեղեցիկ դարձուածներով համեմած, սակայն զուտ ճշմարտութիւն լինելով, կարող է լոյս սփռել մեր կղերական վարչութեան թանձրամած խաւարում կատարուած քամնելի ու նողկալի իրականութեանց վերայ, որոնք պատրաստ եմ հաստատել անհերքելի փաստերով—վաւերական թղթերով, որոնք կհրատարակեմ երկրորդ հատորում: Գիտեմ որ իմ այս գրուածը հետաքրքիր կլինի միայն թշուառներին ու ինձ նման արհամարուած ու պառաւածներին. իսկ բաղդաւորների ու պաշտօնեաների ծաղր ու ծանակին պիտի արժանանայ. բայց ես արդէն վաղուց ծաղրել եմ այդ ողորմելիներին, որոնք թաղած են իրենց հոգու կատարելագոյն մասը ղեխութեան ու անխրատութեան գերեզմանում:

Ով մարդկային սիրտ ու գութ ունի արդարութիւն աղաղակող ձայն լսելու և անմեղին տանջանքը զգալու, թող բարեհաճի նեղութիւն կրել կարդալու գրքոյկս:

Թէ ինչպէս Ճամախու Թեմի առաջնորդ Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանցը. մատնեց ինձ. բայց և ինքն էլ մեղաւոր յաւ: Թէ ինչպէս իմ ազատուելուց յետոյ Համբարձում Մելիքեանի տանը Մեսրովբ արքեպիսկոպոսը ինքն իրեն արդարացնելու համար գրեց մատնութեան նոր գիր, ինձ Սիբիրիա աքսորել տալուց: Բագուի քահանայութեան խորհրդով:

Թէ ինչպէս 24 բուրժուաներ ինձ զրպարտեցին կաթուղիկոսի-հայրենի առաջ և այդ մասին պատուիրակութեան պաշտօնով էջմիածին գնացող Կոնսիստորի անդամ այժմ Բագուի Տաճատ քահանայ Մարաղեանը և Համբարձում Մելիքեանը միայն կաթուղիկոսի յանդիմանութեանն են արժանացել: Թէ ինչպէս այդ դէպքից յետոյ Բագուի քահանաները իմ վարկը ժողովրդի աչքում վայր ձգելու համար ինձ զրպարտեցին, քրէական ծանր յանցանք բարդելով ինձ վրայ, իրենց արբանեակների ձեռքով գաղտնի քննութիւն շարունակելով. սակայն երբ դիպուածով երեան ելաւ այդ անամօթ անձերի չարիք արարքը, իմ օրինական պահանջը—այդ քննութեան պատճէն տալը չկատարեցաւ Ճամախու և Ս. Սինոդի ատեանների կողմից.

Թէ ինչպէս գեներալ Փաղէևը իւր դժգոհութիւնն էր յայտնում սրբազան առաջնորդին իմ, գործակալ Զաւէն վարդապետի և ուրիշների ներկայութեամբ ինձ անարդարութեամբ զրպարտելու առթիւ քաղաքական բարձրագոյն իշխանութեան և փոխարքայի առաջ: Թէ ինչպէս այդ դէպքի հետևեալ գիշերը գործակալը ժողովի պատրուակով հրաւիրել էր իրեն մօտ 5 քահանայ և ինձ, այդտեղ սրբազնագործ պաշտօնեաները վրաս թափելով պիտի սպանէին ինձ, սակայն մի հանգամանքի շնորհիւ հազիւ ազատեցայ այդ մտածուած մահափորձից. այդ մասին տուած 5 բողոքագրերը բոլորովին անպատասխան են մնացել թեմական իշխանութեան կողմից: Թէ ինչպէս քանդում, քայքայում են տունս, գերդաստանս զոհ բերելով անիրաւ գործակալի չար կրքերին:

Թէ ինչպէս բոլորովին անմեղ տեղը առանց մազի չափ անգամ մեկին դիպչելու կամ գրկելու, ինձ մարմնաւոր իշխանութեան ձեռքով աքսորում են Սեւան անորոշ ժամանակով:

Ուստի այս ամենի համար բողոքում եմ ձեզ, սիրելի ժողովուրդ, յանուն օրէնքի, որ մեռած տառ է մնացել ինձ համար, յանուն արդարութեան, որ խայտառակ վիրաւորուած է Ճամախու թեմի և Ս. Սինոդի ատեաններից իմ մասին: Ո՞ւմ դիմել, էլ ո՞ւմ բողոքել, որ լսող ու քննող չկայ: Բազմաթիւ խնդիրներով հայցել եմ տալ ինձ այն վճիռների պատճէնները, որով ինձ ամբաստանել ու պատժել են, բայց չեն

տալիս, թէև Սինօդը ստացել է ինձանից 30 րուբլի պատճէնի փող եւ այսպէս անցնում են ամիսներ ու տարիներ, և ես մաշւում եմ օտարութեան մէջ, անմեղ զաւակներս ենթարկւած են ամեն տեսակ զրկանքի, որոնց արիւնը պէտք է պահանջւի այդ վարչութեան անտա գորոյն ներկայացուցիչներից։

Մեսրովբ աւագ քահանայ Տէր-Ոսկանեանց

Նկատի ունենալով, որ պանդխտութեան որդեգիր թշուառ հայ ժողովուրդը ինչ ինչ պատճառներից ստիպուած թողնում է իւր հայրենի օրրանը և դիմում է հեռո՜ւ, հեռո՜ւ աշխարհներ բաղդ որոնելու, զրկուելով հայրենիքի նուիրական վայրերից՝ մնում է իրեն դրէ թէ անծանօթ և խորթ հասարակութեան մէջ. Ժամանակի ընթացքում փոխում է իւր կեանքի ներքին պայմանները, ենթարկւում է օտար տարրի ազդեցութեանը, մոռանում է մայրենի լեզուն և այսպէս թէ այնպէս չքանում են նրա մէջ այն առանձնայատկութիւնները, հայի բնածին սեփականութիւններն, այդ պատճառով էլ որոշեցի Անդրկասպեան և Թուրքեստան կոյս երկրում հաստատել եկեղեցի, ուսումնարան, արհեստանոց, դրամարան— ընթերցարան և նրանց գոյութիւնը յարատեւել, որպէսզի նորանուաճ երկրում ծնուեն ու աճեն հայ մանուկները՝ առանց արիւնն ու մարմին զարճած հեթանոսական դասակարգային աղանդութեանց՝ այսինքն միայն արտօնեալը դասը չը դառնայ երկրի տէրը, այլ անխտիր, ամենք էլ հաւասար զարգանան ուսումով ու արհեստով, որ մեծ վարդապետ Յիսուս Քրիստոսի քարոզած հաւասարութիւնը մարմնանայ նախապէս Անդրկասպեան և Թուրքեստան երկրի հայ ազգի մանուկ եկեղեցւում: Պիտի աւելացնեմ նաև, որ պարսիկ աւետարանականների հարցի համաձայն

Հարկ համարեցի թողնել վաճառականական ծաղկեալ ասպարէզը և ընդունել քահանայական պաշտօն։

1886 թ. հրաւիրւում եմ Ս. Էջմիածին։ Մակար կաթողիկոսը Ներսէս եպիսկոպոս Խուդավերդեանի ներկայութեամբ իմ ծրագիրը լսելուց յետոյ, իւր հայրական խորհուրդներն էլ աւանդ տալով, օրհնեց ինձ պահպանիչ աղօթքով և համբուրեց աչերով. «Նորանուած և կոյս երկրում գործիր, մինչ ես կենդանի եմ»։

Քահանայ ձեռնադրուելու պէս նաև ստանում եմ գործակալական և հոգևոր իշխանութեան կողմից հաւատարմատարութեան իրաւունք անդրկասպեան և թուրքեստան երկրում հայոց համար վերոյ յիշեալ հիմնարկութիւթիւնները կառուցանել։ Այդ նպատակով շրջում եմ նոյն երկրի քաղաքները, աւանները և ամէն տեղ ձեռք բերելով քաղաքային քարտէզները, որոնում եմ յարմար կենդրոններ եկեղեցի, ուսումնարան, արհեստանոց, և գրադարան-ընթերցարան կառուցանելու համար։ Համաձայն տեղային կանոնների գրագրութիւն եմ շարունակում քաղաքական իշխանութեանց հետ, և ինձ յաջողում է այդ. այն ժամանակի Կովկասի կառավարչապետ Դոնդուկով Կորսակովը յարգելով իմ խնդիրները, մակագրում է. «Անդրկասպեան և թուրքեստան երկրի հայոց եկեղեցիների բարեկարգչի խըն-

գիրը յարգելի է»։ և հրամայում է տալ իմ ու-
զած գետինները յիշուած հիմնարկութիւնները
կառուցանելու, որի համաձայն Մերվ քաղաքի
ամենայարմար կենդրոնում ստանում եմ 2 դե-
սեատին գետին։ 3 արշին բարձրութեամբ պարս-
պապատում եմ բոլոր տարածութիւնը։ Ստացածս
տիրապետութեան թերթը և հիմնարկութիւն-
ները կառուցանելու իրաւունքը ներկայացնում
եմ հոգևոր բարձրագոյն իշխանութեան թեմա-
կալ առաջնորդ Մեսրովբ Սմբատեանցի միջոցաւ։
Այսպէս՝ հայ մարդու հոգու ու մտքի մշտազ-
բաղ փայփայանքի առարկայ ծրագրիս հիմքը
քաղաքական իշխանութեան կողմից հաստատ-
ուած ու յարգուած տեսնելուց յետոյ, աներկ-
բայ սկսում եմ շարունակել ծրագրովս որոշուած
բարեկարգութիւնները և նիւթականն էլ կա-
նոնաւորել, որ անարգելք շարունակէի հիմ-
նարկութիւնների կառուցման գործը։

Նախապէս դիմում եմ խորհրդի կարգա-
կից ընկերոջս—Գրիգոր քահանայ Յովսէփեանցին,
կարդալով նրա համար յօրինած ծրագրներս
իւր բոլոր բարեմասնութիւններով, այն է՝ ա-
ռաջինը պիտի վերացնենք թեփշով գանձանակ
ժողովելն և նրա փոխարէնը եկեղեցիների երեք
շէմքերում էլ արկղներ յարմարեցնենք, որոնք
արդէն պատրաստ են և ամեն մի արկղ ունի 4
բաժանմունք որոշ վերնագրերով, որոնցից առաջինը

հայոց ազգի ընդհանրութեան կարիքների համար էր, որանից գոյացած արդիւնքը կորոշէ իւրաքանչիւր տարի ընդհանուր ժողովը գործադրելու եղանակը։ Երկրորդը ուսումնարան և արհեստանոց կառուցանելու և յարատևութեան համար էր, երրորդը գրականական ֆոնդի համար էր. չորրորդը եկեղեցւոյ սպասաւորների կենսաթոշակի, որ այլ ևս գանձապահից ծածուկ մոմեր չվերցնէին իրանց օգտին գործադրելու սնախնդրութեան և այլ հանդէսներում. իսկ գանձապահն էլ իզուր տեղը գողի անուն չի ժառանգ էր հասարակութիւնից։ Նոյնպէս հինգ ժապաւինած տոմարներ կային պատրաստած իրենց կտրոններով, որոնք ընդհանուր ժողովի համաձայնութեամբ, հոգաբարձուաց և գանձապահի ստորագրութեամբ պաշտօնական կնիքով վաւերացուցած կյանձնուին մեզ, և մենք կըգործադրենք ծրագրով որոշած եղանակով, այսինքն տոմարի առաջին մասը վերաբերում է մկրտութեան խորհուրդ կատարած ժամանակ հանդիսականներից ստացած խաչահամբոյրի քանակութեանը, որ կմուծուի տոմար, իսկ կտրոնը որպէս ապահովագիր կյանձնուի նւիրատուին և այդհանդիսում գոյացած գումարը պիտի մանկան անունով շահեցուի մինչև 7 տարի և ապա գործադրուի ինչպէս որոշած է ծրագրում մանկան կրթութեան համար։ Տոմարի 2 մասում

տօնախմբութիւն կատարողների տուրքերը կարձանագրելն նոյն կարգով։ 3 մասը նշան. օրհնութեան հանդէսին է վերաբերում։ 4 մասը հարսանեաց պսակ օրհնութեանը։ 5 մասը մեռելոց հոգեբաժինը կարձանագրել և առ գոյութիւն կունենայ մինչ այն ժամանակ, երբ մեռեալ չենք ունենայ, որ մեռելներից հոգեբաժին առնի։ Տոմարների 2, 3, 4, 5, մասի արդիւնքները հոգաբարձուք գործադրում են եկեղեցւոյ, ուսումնարանի, արհեստանոցի և գրադարան—ընթերցարանի կառուցման և նրանց յարատևութեան համար, ծրագրում որոշուած եղանակով։ Այս ամենի համար տարեկան ընդհանուր ժողովին մանրամասն հաշիւ կներկայացնեն առանձին, թէ ո՛վ, ի՛նչքան յիշեալ միջոցներով տուրք և նուէր ունի տուած մեր մատաղ սերունդին ազատութեան գերութիւնից ուսումով ու արհեստով ազատող-հաւասարութեան ասպարէզ մատակարարող հիմնարկութեանց համար։

Անդրկասպեան և Թուրքեստան երկրի քաղաքներում ու աւաններում գործող ու աշխատող ամեն դասակարգի հայերից պիտի ստացուէր վաստակած դրամից տուրք, որի քանակը դնուէր որոշուած ծրագրի մէջ, ուսումնարանի և արհեստանոցի կառուցման և յարատևութեան համար, և այս տուրքը պիտի շարունակուէր մինչև քանի տարի, որից յետոյ արհեստանոց-

ները կարող էին կառավարել թէ իրենք իրենց և թէ ուսումնարանները, ինչպէս նախատեսնուած է ծրագրում։

Այս առաջարկեցի Տէր-Գրիգոր հօրը ստորագրել այն խնդրին, որով երկուսս դիմում ենք Մակար կաթուղիկոսի կարգադրութեանը, որ Շամախոյ թեմական ատեանը Անդրկասպեան և Թուրքեստան երկրից աթոռահաս տուրք չվերառնի մինչև վերևը յիշուած հիմնարկութեանց կառուցման վերջանալը։

Այս բացատրութիւնները անելու ժամանակ նկատում էի Տէր-Գրիգորի մէջ ինչ որ լռելեան յուզմունք և դրա համար էլ կամեցայ մի քանի խօսքով Տէր-հօր սիրտը խաղաղացնել ասացի՝—Երբ տուրք տուողները կտեսնեն, որ իրանց տուրքը անկորուստ է և թէ ծառայում է սուրբ նպատակի, քաջալերուելով կաւելացնեն իրանց նուէրները և ապա անտարբեր մնացողներն էլ բարի նախանձով շարժուած կհետևեն նրանց։ Իսկ մենք, որ Յիսուսի աշակերտութեան պաշտօնն ունինք, երբ այս ձեռնարկութեան քաղցր պտուղներից ճաշակած կտեսնենք մեր հովւութեան յանձնուած ժողովուրդին, այն ժամանակ կհրաւիրենք նրանց ուշադրութիւնը հէնց իրանց կրթուած սերունդի վրայ, որ պիտի կոչուին լուսոյ որդիք, և ապա կասենք.—Երանի ես, հայ բարդ, որովհետև կատարեցիր մեծ Վարդապետ

Յիսուսի պատուէրը, գանձեցիր քո գանձդ անդ, ուր ոչ գողը մերձեցաւ և ոչ ցեցն ապականեց, այլ քո սերունդին լուսոյ որդի դարձրեց։

Բայց բաքոսի երկրպակու կարգակից ընկերս Տէր-Գրիգոր հայրը յանկարծ պատառեց երեսի դիմակը ու ասաց,—Այգամենը, ինչ որ կարդացիր ու ասացիր, ինձ համար մի գրոշ չի արժի։ Տէր-Ոսկանեանց, դարվիշութիւն մի անիր գուր տեղը. ես չէ թէ կստորագրեմ այդ խնդրին, որ ներկայացնես կաթուղիկոսին, այլ պատուէր ունիմ, որ պիտի ոչնչացնեմ բոլոր ծրագիրները որովհետև հոգեորականաց իրաւունքները այդ ծրագրով տալիս ես ժողովուրդին և մենք դերի պիտի դառնանք նրանց։ Սիր օրինակ առ այստեղ ապրող վաճառականներից, որոնք ապրանքը ծախում են իրանց իմացած գնով և ոչ թէ առնողի կամքով։ Ես երբեք իմ իրաւունքը չեմ տալ ժողովուրդին, որ ինքը ինչ կամենայ այն էլ տայ ինձ. ես երբէք չեմ թողնիլ, որ մեր աթաբաբա ատաթ գանձանակը ղուլթի դառնայ, այն էլ աչառը (բանալին) ուրիշի ձեռքում, ես երբէք ոչ մի դաւթար չեմ վերառնիլ, հէնց նրա համար, որ ինձ համեցէք փողերը նրա մէջ ստորագրուի ընդունած վարժապետներին քէփ ուզով անելու համար»։ Ինչքան աշխատեցի սիրալիր խօսքերով համոզել Տէր-Հօրը, որ կազմած ծրագիրը գործ դնելով ժողովուրդը կամովին

մեզ աւելի կվարձատրէ, քան թէ բանադրօսիկ եղանակով ենք վարձադրում, որ ոչ է օրէն մեզ հոգեւորականացս, բայց Տէր-Հօր գլուխը բոլորովին ուրիշ մտքերով էր տոգորուած. երևի ճշմարիտ էր ասածը, թէ ինքն էլ պատուէր ու ծրագիր ունի ստացած այս ամենի հակառակը գործելու։ Մեծ վարդապետ Ցիսուսի խօսքի համեմատ որոշեցի չկալ հակառակ չարին, այլ խաղաղութեամբ օրինակելի ճանապարհով գործել։ Նախ պատրաստածս արկղներից տարայ Դզլարվատի եկեղեցում յարմար տեղեր ամրացրի, բացատրելով ժողովուրդին ամեն մեկ տուփի նշանակութիւնը։ Բոլորի ուրախութեամբ չափ ու սահման չկար։

Գալով Աստրախան պարոն Սեւտխս Սւագեանցի տանը մկրտութեան հանդէսին փորձի համար բացատրեցի ծրագրովս որոշած մկրտութեան վերաբերեալ պարբերութեան իմաստը և գործադրելու եղանակը։ Հանդիսականները խորին յարգանքով ընդունեցին այդ նորութիւնը— մկրտուած երախի անուամբ խաչահամբոյր եկին 70 ռուբ. որ յանձնեցի պարոն Խուրշուտ Մնացականեանին պահել մինչ ծրագրում որոշուած տոմարները ստորագրուի հոգաբարձուաց և գանձապահի կողմից և ապա մուծուի այնտեղ. իսկ պարոն Ս.ե.տխս Լուազեանցը մեզ երկու քահանայից առանձին վարձադրեց իւր կողմից 30 ռուբլի տալով, որից 10 ռ. ես վերցրի և 20 ռ.

տէր ընկերոջս Գրիգոր քահանային։ Այս բոլորը նոյնպէս ցնծութեամբ և ուրախութեամբ ընդունեցաւ հանդիսականների կողմից։

Բայց Տէր-Գրիգորը ստացածը բաւական չհամարելով, երեկոյեան ժամերգութիւնից յետոյ իրա ձեռի հաստ գաւազանը վրաս չարժելով ասաց.—Ես քեզ չասացի թէ այդ յիմար ազգասիրութիւնից ձեռք քաշի» և սկսեց անպատկառ խօսքերով անարգել ու հայհոյել ուսանող մանկանց ծնողներին և ինձ, ասելով թէ այսօր Աւագեանցի տանը ժողոված 70 րուբ. քահանայական է հասոյթէ. իմ բաժին 35 ր. այս րոպէիս տուր ինձ, և լսեցի թէ էդ դութիներից գրեթէ Ղզլարլվայի եկեղեցում ժողովրդին էլ քարոզելիս, որ թեփշով գանձանակ չըժողովեն. առանց ձայն հանելու գնա դութիներըդ վերաս, թէ չէ գլխիդ էն օյինը կհանեմ, որ յաւիտեան արեգակի երես չես տեսնիլ»։ Յետոյ ինքը գնում է Ղզլարլվայ տուփերի նշանագրերը պատռում գանձապան Աստուածատուր Մեքինեանի և այլոց ներկայութեամբ, որոնց մասին դարձեալ բողոքում եմ Շամախւոյ թեմական Առաջնորդ Մեսրովբ Արքեպիսկոպոսին, բայց նա լռում է, որով ցոյց է տալիս իւր համաձայնութիւնը կատարուած խռովութեան հանդէպ։

Շամախու թեմական առանձին չափաբերական մատեանները, որ պիտի ուղարկէր իմ

հասցէով, որպէս գործակալի և բարեկարգիչ, այնուհետև ուղարկում էր Տէր-Գրիգորին և սա իմ բազմագլխի պահանջը բանաւոր և գրաւոր արհամարում էր, չափաբերական մատեաններն չէր դնում եկեղեցիներում, որ ամեն ոք իւր կատարած օրէնքները արձանագրէր, այլ պահում էր իւր տանը, և առանց իմ գիտութեան ուղարկում կոնսիստոր: Շամախւոյ թեմական ատեան այս մասին իմ բողոքներին չէր պատասխանում, որից իմանում էի, որ իմ դէմ չարութիւն էր նիւթւում:

Տէր-Գրիգորը պսակներ էր կատարում առանց օրինական յայտարարութիւն և աթոռահաս արդիւնք ներկայացնելու. այս մասին իմ բողոքներին Շամախու թեմական ատեանը դարձեալ չէր պատասխանում:

Անդրկասպեան երկրի կառավարչապետ Կուրոպատկինը գալիս է մեր Ասխապատի եկեղեցին այցելութեան, մի ուղերձ պատրաստեցի ներկայացնելու հետևեալ իմաստով: Զերդ Գերազանցութիւն. 1871 թւականում Աղէքսանդր II Կայսրի հրաւիրական հրովարտակի համաձայն հայերս գալիս ենք Անդրկասպեան ամայի անապատ երկրի, զանազան կենդրոններում բնակութիւն հաստատելու» ինչպէս տեսնում էք, այժմ այդ կենդրոնները նահանգական և գաւառական քաղաքներ են դառել և ամեն ուրեք աչքի երև-

ացող Եւրոպական վերջին ճաշակով շինութիւնները շինարար ու աշխատասէր հայերինն է։ Հայերս ենք, որ տեղացի վայրենի ազգութեանը սիրով ընդելացրել ենք աշխատասիրութեան-երկրագործութեան և այգեգործութեան։ Ամայի դաշտերը դարձրել ենք պտղաբեր բուրաստան։ Հայերս ենք, որ օրինակելի ձիրքով առևտրական կենդրոններ ենք հաստատել ամենուրեք և տեղացի վայրենի ազգաբանակութիւնը, որ միայն ասպատակութեան գործին էր ընդունակ, այժմ դառել է գործով—աշխատանքով պարապող։ Հայերս ենք—սիրով և քաղաքավարական եղանակով նրանց ընդելացրել ենք առևտրական արդիւնարար գործին։ Մի խօսքով հայն է, որ ամեն տեսակ անյարմարութիւն հարթելով, նեղութիւնները ու զրկանքները է տանում այս անապատ երկիրը չէն ու առևտրական վայր դարձրնելու։ Ձերդ Գերազանցութիւն, հայը բնածիր շնորհք է երկրի բարգաւաճման, և ուսումով ու արհեստով տարածում է իմաստութիւն ու լուսաւորութիւն։ Ձեր բարեպաշտ նախորդները Լամակին, Լազարև, Սկօպլև, Բէրբէրիս Կամարով սորանց ամենքի անկեղծ սիրոյ աջակցութեան և օգնութեան շնորհիւ կարճ ժամանակում հայերս կարողացանք երկրիս Բարգաւաճման գործին յարատևութեանը բաւական յարմարաւոր ընթացք տալ։

Իսկ այժմ, Ձերդ գերազանցութիւնդ ինչպէս ուսմամբ և հանճարով աւելի գերազանցեցէք ձեր նախորդներից, յուսով ենք, որ երկրիս բարգաւաճման գործն էլ աւելի կբարձրացնէք կատարելագործուած եղանակով: Մանաւանդ ուշադրութիւն կդարձնէք անմիջական կարիքի-ուսման, արհեստի, լուսաւորութեան և հանճարի գերագոյն եղանակով կատարելագործմանը, յուսով ենք անտես չէք անէ չինարար հայերին, այլ կառնէք ձեր հովանու ներքոյ, որոնք աշխատասիրութեամբ անդր կասպեան երկիրը իւր ծաղկեալ դրութեանը հասցնելով, օրինակելի կդարձնեն համայն աշխարհին:

Ձերդ գերազանցութեան այցելութիւնը մեր ազգային սրբավայրերն և երկնաւոր հօր սրբահին՝ վաստահացնում է մեզ, որ հայերս կարող ենք մեր բարեբարոյ կենցաղավարութեամբ արժանանալ ձեր հայրախնամ ուշադրութեանը և որդիաբար կհետևենք ձեր իմաստալից և հանճարհեղ ու գերագոյն գործնէութեանը: Ողորմած Տէր, չնորհաւորելով ձեր բարի գալուստը՝ անդրկասպեան երկրի հայերս միշտ աղօթարար ենք երկնաւոր Հօրը, որ պարգևէ Ձեզ երկար կեանք, օգնական լինի Ձեզ անվրէպ և անսայթաք ճանապարհով կատարել այն ամեն պարտականութիւնները, որ Ձերդ գերազանցութեանն հաւատացած է ամենաողորմած Կայսեր Ալէքսան-

դըր II-ից։ Մնամ ապօթարար և այլն։

Այս ուղերձը նախապէս կարդացի Տէր-Գրիգորի մօտ մի քանի մարդոց համար, որոնք գրուածքի միտքը նպատակայարմար տեսնելով՝ ուրախութեամբ շնորհակալութիւն յայտնեցին, իսկ Տէր-Հայրը որ լռու, ու խիստ տխուր էր, քմծիծաղ տեսքով արհամարանք արտայայտեց։

Բարձրաստիճան հիւրը իրա հետևող բազմութիւնով եկեղեցին մտնելուց յետոյ առաջնորդեցի մինչի սեղանի վերա՛ դրած խաչ աւետարանը. Նա երկիւղածութեամբ համբուրելով՝ յետ դարձաւ աշխարհականաց դասը, և ես ուղերձը ձեռքիս դիմացը կանգնած կամենում էի մի քանի խօսք ասելով, յանձնել, բայց Տէր-Գրիգորը յանկարծ կոչեց. «Կարիք ձայնդ» խլեց ձեռքիցս ուղերձը դրեց իւր գրպանը, սեղանից խաչը վեր առաւ իւր ձեռքը, Աւետարանը տուաւ իմ ձեռքը ու ծոցից հանեց մի թուղթ գրուած էր ռուսերէն խիստ, խոնարհ երկրպագելով հիւրին, ասաց այս խօսքերը. «Գեներալ Ալէքսանդրը բարով հազար բարի եկել մեր եկեղեցին, ես քո հաւատարիմ ծառան եմ. պատրաստ եմ շատ և շատ ուրախութեամբ և ամենահպատակ օրէն կատարելու քո բոլոր հրամանները։ Եւ ցոյց տալով իւր կողքին կանգնած Բաղրամօվին, թէ նա յետոյ կթարգմանէ իւր ասածներ գեներալին համար, ու-

վերջացրեց պահպանիչ աղօթքով և առաջարկեց խաչը նորէն համբուրելու բարձր աստիճան հիւրը ակամայից նորէն համբուրեց խաչը և լուռ ու մունջ դուրս եկաւ եկեղեցուց։

Յետոյ մի քանի մարդիկ մանաւանդ դանձապահը խիստ նկատողութիւն արեցին Տէր-Գրիգորին բարձր աստիճան այցելուի ներկայութեանը ինձ հետ անվայել վարուելու մասին, իսկ Տէր-Գրիգորը իւր սովորութեան համեմատ անպատկառ հայհոյանքներով սկսեց հարւածներ տալով, գետին գլորել դանձապահին, և դանձապահը գրպանից դանակը հանելով յարձակւում էր խփելու Տէր-Գրիգորին, ես միջամտելով ազատեցի Տէր-Գրիգորին և ասացի. Աբարքդ քահանայավայել չէ մանաւանդ սրբավայրում, եկեղեցոյ մէջ, յիշիր օրինաց պատւէրգ «լահանայ հարկանող լուծցի»։ Իսկ արժանապատիւ հայրը պատասխանում է, և «դու ումի՞ չունն էս, որ ինձ խրատում ես». ներկայ մարդոց համբերութեան բաժակը լցւած էր. յուզւած, կամենում էին յարձակւել Տէր-Գրիգորի վրան. աղաչում, թախանձում եմ ֆիզիկական միջոց չգործադրել, որպէսզի գործադրեց ինքը տէր-հայրը. այլ վարւել օրինական ճանապարհով, մարդիկ աւելի յուզւեցին ու գրգռւած ամէն կողմից բացականչեցին. «որն է օրինական ճանապարհը, Շամախոյ կոնսիստորիա՞ն, թէ նրա

առաջնորդ Ամբատեանը, մենք այս հրէշի մասին քանի տասնեակ բողոքներ ունինք տուած, ոչ մէկին պատասխան չկայ. այժմ այս կարգաւոր հրէշն աւելի խրախուսուած, տեսնում էք թէ ինչպէս է անում։ Ստիպուած, չարիքի առաջն առնելու համար ասում եմ. Նախ հեռագրով դիմենք Մակար կաթուղիկոսին և ապա խրնդրագրով բացատրենք հին ու նոր գործողութիւնները և Շամախոյ կոնսիստորի այդ մասին անտարբերութիւնը, սակայն ես հաւատացնում եմ, որ այդ ամենի մասին կաթուղիկոսի կարգադրութեամբ շուտով բաւակարութիւն կստանանք, ու հեռագրում ենք կաթուղիկոսին։

Հեռեւեալ առաւօտուն գալիս եմ եկեղեցի ժամերգութեան, ուր միայն դեռ ժամկոչը կար. չոգած ծնրադրութեամբ աղօթելուս ժամանակ, յանկարծ յարձակւեց վրաս Տէր-Գրիգորը անպատկառ հայհոյանքներով և իւր տեսակի հաստ գաւազանով հարւածում էր ինձ մինչ գաւազանի խոպառ ջարդ ու փշուր լինելը. ժամկոչի աղաղակի ձայնը լսողները թափւում են եկեղեցի. Տէր-Գրիգորը ամբոխի յուզմունքը տեսնելով, փախչում է միւս դռնով, հարւածներից ձեռներս վիրաւորւած, արունաթաթախ լինելու պատճառաւ առաւօտեայ ժամերգութիւնը մնում է անկատար, այս երկու արունոտչա դէպքերի

համար բողոքագրի հետ գաւառանի կտորների կապոցն էլ ուղարկում են կաթուղիկոսին։

Բայց մեր հողեւոր աշխարհի սև դրօշակի իսկական երկրպագու Սահակ վարդապետ Բաղդասարեանը, այն ժամանակ լինելով կաթուղիկոսի դիւանապետ, այդ խնդիրը կապոցի հետ ծածկում է Մակար կաթուղիկոսից, և Շամախի եղած ժամանակից նախապէս ծանօթ լինելով Տէր-Գրիգորին, սկսում է սակարկութիւն անել Շամախու կոնսիստորի ու Տէր-Գրիգորի հետ. առնում է 800 րուբլի այդ խայտառակ գործը ծածկելու համար, 400 րուբլի Սամուէլ Բաղիրեանցն է տալիս հայրապետ Բօշարեանի ձեռքով, Բաղիրեանցը բարեգործութիւնը արել է նրա համար, որ Տէր-Գրիգորը համագիւղացին և դատաընկերն է եղել։ Այս տեսակ եղեռնագործի գործը մինչև օրս ծածկած պահող Շամախւոյ թեմական առեանը արդարութիւն հայցողին անհնազանդ ու ըմբոստ յայտարարելով՝ տունը կործանում է, Սևան կաքորէ քաղաքական իշխանութեան ձեռքով և նրա անմայր զաւակներին զոհ կդարցնէ գործակալ վարդապետի չար կրքին։

Շամախու, թեմական առեանը, բաղդախնդիրների վայրը, որ թափուր ու ամայի է մարդուց—չունի ազգային առանձնայատկութիւն ունեցող մի անձ, որ գոնէ մի անգամ ձեռքը

դնէր իր խղճին յետ քաշւէր այն ստոր մասնութեան ծրագրից որով ուխտ էին կապում միանգամայն խորտակել թէ ինձ և թէ ազգային այն հիմնարկութիւնները, որոնք համաձայն իմ ծրագրին մի քանի տարիների ընթացքում միայն պիտի արդելք դառնային իրանց սատանայի արդիւնքին, այդ պատճառով իրենց ստոր չահատակութեանց համար գործիք դարցրին Նախիկին Միլիցեայի չափար, ապա եսասգու և յետոյ Տէր-Գրիգոր Ցովսէփեանցին կործանել ոչընչացնել այն ամենը, ինչ որ իրանց անձնական շահերից դուրս է։

Այն քաղաքական իշխանութիւնը. որ իմ խնդիրները հաճութեամբ ընդունել էր և օրինական ճանապարհով իրաւունք էր տւել հաստատուն կերպով ազգային հիմնարկութիւններ կառուցանելու, արդեօք ինչի՞ նոյն իշխանութիւնը առանց այլ և այլութեան որ և իցէ մի պատճառի քանդէց կործանեց ազգային հիմնարկութեանց պարիսպները, դեռինը յանձնեց Տէր-Գրիգորին և նրա համախոհներին, որոնց իրանց համար փառաւոր անեբ և ճիմեկքներ չինեցին՝ ի տեղի հայկական ազգային հիմնարկութեանց։ Եւ միթէ այստեղ է՞լ կայ լուսաբանութեան կարիք։

Այն քաղաքական իշխանութիւնը, որ ինձ յարգում ու պատում էր ամէն ուրեք իմ մար-

դատարական գերագոյն վարմունքներն դըւատի-լով, տալիս էր ինձ չնորհակալիքներով լի ու լի մկայականներ 1881 թ. № 3357 և 1882 թ. № 683 և № 602, և քահանայական պաշտօնը ստանձնելուց յետոյ սահմանում են ամէն տարի տալ ինձ ձրի տոմսակ առաջին կարգի իմ կենաց շրջանում Անդրկասպեան և Թուրքեստան երկրի երկաթուղիներով ամէն ուրեք շրջելու, արդեօք ո՞վ էր պատճառը և ի՞նչն էր առիթը, որ Մակար կաթուղիկոսի մահուան քառասնեաց հոգեհանգիստը կատարած՝ եկեղեցուց դուրս գալիս ձերբակալեց ինձ, նետելո՛վ մի գերեզմանաչափ մութ ու խոնաւ բանտ, և մատնիչն-Տէր-Գրիգորի ցուցմունքները բազմադիմի քննութեան ենթարկելով, ապացուցել էր, որ այդ ամէնը հոգեւորականին յատուկ ու բնածին նախանձի արդիւնք է եղել, որ յօրինել են այդպիսի զրպարտութիւնները, և այդ պատճառով որոշում է Տէր-Գրիգորին հրապարակաւ դատի ենթարկել չարամտութեամբ գործելուն համար., այս դէպքում Տէր-Գրիգորը ազատելու համար Մեսրոպ արքեպիսկոպոսի մի քանի նամակները թարգմանել է տալիս իւր սպայ որդուն և Բաղրամեանցին և ներկայցնում Կուրապատկինին, որը ստուգելու համար գրաւոր բացատրութիւն է պահանջում Մեսրոպ արքեպիսկոպոսից, բայց նա երկար ժամանակ չի պատասխանում, կըրկ-

նում են գրութիւնը. դարձեալ չի պատասխանում, քաղաքական իշխանութիւնը նկատի ունենալով իմ բանտում կրած տառապանքի չափն ու սահմանը, 3—4 անգամ է կրկնում գրութիւնը։ Սմբատեան եպիսկոպոսի չպատասխանելուն պատճառաւ տաչորում եմ 8 ամիս բանդում զրկւելով լոյսից, կազմալուծւում քայքայւում է առողջութիւնս այդ բոլոր ժամանակում Սմբատեան եպիսկոպոսը խորհրդակցում էր իրաւաբանական ճարպկութեան մէջ ներհատացած նախկին քաղաքագլուխ և հին ինդրիկանդ Եղիշէ քահանայ Գեղամեանցին հետ, թէ ինչպէս ինձ կործանեն, որ գործը փակւի. հրապարակական դատաստան չը կայանայ երևան հանելու իրանց արարմունքները, որ զզուելի է ու զարշելի։ Բանդում ինձ ճար մատակարարող փերշիկը միշտ իւր ներկայութեամբ էր ընդունել տալիս ճարը, բայց մի օր սովորական ժամանակից շատ ուշացաւ և գալուց նկատեցի որ մի տեսակ ազդեցութեան տակ ճնշւածի է նման և ինչ որ ակամայից ուշանում է, վերջապէս ճարը բաժակն ածելուց ձեռները խիստ զգալի կերպով դողացին։ Ասացի. «ինչի դողում ես, եթէ ճարդ վնասակար չէ, պիտի առաջ դու ընդունես, յետոյ ես»։ Նա ներողութիւն խնդրելով ասաց թւում է ինձ թէ պատրաստելուց սխալւել եմ երբ կամեցայ ձեռքից առնել նա ընդ դիմանալով թափեց գետին ու ամբի-

ջապէս բարբաջուեց գետինը. Նա զգուշացրեց ինձ ոչինչ չը խօսել այդ մասին, որովհետև լաւ չի անցնիլ ինձ համար. յամենայն դէպս բերած ճարերը կարող չեմ գործադրել, միայն լռելեայն։ Ես հնարաւորութիւն չունէի չլսել զինուոր փերչիլի ասածները, որովհետև ես ինքս էլ ենթադրում էի, որ Մեսրովբ եպիսկոպոսի 8 ամսեայ լռութիւնը, քաղաքական իշխանութեան չորս անգամ կրկնող Գրութեանը չպատասխանելը որ և իւր նպատակ պիտի ունենար։ Վերջապէս բաւական անցնելուց յետոյ Եղիշէ քահանայ Գևղամեանցի յօրինած պատասխանը Մեսրովբ եպիսկոպոսը ներկայացնում է քաղաքական իշխանութեանը համաձայն, որոյ կարգադրում է գործի որոշած եղանակը փոխել – ինձ հեռացնել անդրկապեան երկրից, իսկ գործը յանձնել դատաստանական պալատին։ Բագու եկայ. բայց Եղիշէ քահանան և թեմական առաջնորդ Մեսրովբ եպիսկոպոս Սմբատեանը ամենաանհերքելի միջոցներ են գործ դնում ինձ Բագւում չթողնելու համար, ուր առաջին անգամ 21 տարեկան հասակումս 1866 թւին էի եկել. 10 տարի եղբայր Կրասիլնիկեանների կերասինի գործարանում և ապա քաղաքի հիմնարկութեանց կառուցման գործերն եմ վարել ու իմ սեփական գործերով պարապել մինչ 1887 թ. մայիսին քահանայական պաշտօն ստանալս։ Այն ժամա-

նակւայ սինոդականները՝ որոնց թւումն էին Սեդրակեան Արիստակէս և Խուստաւերտեան Ներսէս եպիսկոպոսները, նախածանօթ լինելով Սմբատեանցի վարքուբարքին, այլ և Գեղամեանցի խորամանկութեանը, համաձայն Բագւայ 220 մարդոց ստորագրած համախոսականին հաստատում են ինձ Ս. լուսաւորիչ եկեղեցոյ միաբան քահանայ և հաւասար միւս քահանայից ստանալ բաժին. այս լինում է 1892 թ. 19-ին յունիսի։ Բայց յամենայն դէպս հին ինդրիկանդ Գեղամեան քահանան չի դադարում. ինձ դէմ շարունակում է հալածանքներ, երբ տեսնում է իւր վերջին սիստեմ սարքովի ինդրիկները իմ մասին ապարդիւն անցան Սեդրակեանի դիմացը, ծրագիրը փոխում է ուրիշ եղանակի. կեղծ մտերմութիւն ցոյց տալով՝ ինձ սկսում է և կեղծումներ կատարել տալ, մի օր ինձ խնդրում է իւր տիրացուի հետ գնալ իւր ծխականի նորածին մանկանը մկրտելու, և այդ ծխականը լինում է Մեսրոպ վարդապետ Մովսեսեանի ազկականը, Շէկահող գիւղացի, որի ապօրինի կինը այլադաւան է լինում. իսկ ես այդ չիմանալով՝ տիրացուին ասում եմ, կանչիր նորածնի հօրը, մկրտութեան արձանագրութիւնը կազմեմ, իսկ տիրացուն ասում է.—Ես վռազ եմ. ժամանակ չկայ երկար սպասելու. դուք մկրտութեան խորհուրդը կատարեցէք, ես արձանագրութիւնը

կկապմեմ։ Ես մկրտութեան խորհուրդն եմ կատարում. սենեակի միջանցքում արձանագրութիւն է կազմում տիրացուն. թողնում ենք գընում։ Տաղավարահարաց տօնին ես պատարագիչ եմ Աստուածածնայ եկեղեցում. տեսնում եմ յանկարծ Տէր-Եղիշէն իր տիրացուի հետ սեղանի վերան վերաբերման կարգը կատարելուց յետոյ սեղանից էլ ցած չիջաւ, սպասեց մինչև պատարագի վերջը։ Նշխարհի մկրտութեան խորհուրդը կատարելիս տեսայ նաւթի հոտ է գալիս և ձեռներս իւղոտ է։ Նայում եմ սկիհի մէջ բաժակի երեսին նաւթ է կանգնած. հարցնում եմ։—Տէր-Եղիշէ, այս ի՞նչ բան է։ Ասում է. Երեկ բաժակի մէջ նաւթ է եղել, մի՛ ընդունիր, ոչինչ բան է, դէն ածիր, գնա. և ինքը սարկաւագներին խորհրդաւոր ակնարկներ ձգելով, ցած իջաւ սեղանից. իսկ ես սարկաւագի միջոցաւ լուր տւի գանձապահին այս մասին և ասացի, որ կաթ ու մածուն բերեն փութանակի, թէ և նաւթը չի կարող վնասել, գուցէ թոյն են ածել սրբութեան մէջ, իսկ ես չարունակում եմ աղօթքները, ըստ կանոնի սրբութեան նշխարները մաս մաս ընդունելով. սարկաւագները խորհրդաւորութեամբ միջամտում, միջոցներ են ցոյց տալում, որ ես չընդունեմ սրբութիւնը, այլ դէն ածեմ, իսկ ես չեմ լսում, ընդունում եմ սրբութիւնը, մաքրում եմ սկիհը ըստ

կարգին, անկասկած հաւատացած լինելով, որ այս ամէն խարդախութիւնը սարքում է Եղիշէ քահանայ Գեղամեանը իւր պատրաստի վկաների ներկայութեամբ ինձ կրօնական զեղծում գործող յանցաւոր համարելով, աքսորել տալ Բաղւից մի որ և իցէ վանք. կամ Սևան, որ նախ՝ հնարաւորութիւն չունենամ պատրաստուելու պալատում՝ կայանալիք դատաստանական գործում երևան հանելու իւրեանց մասնութեան ստոր արարմունքը, և երկրորդ դիտաւորութիւններն էլ այն է, որ պալատի դատաստանական մարմինը ինձ երկրորդ զեղծում գործած և նոյն իսկ հոգևոր իշխանութիւնից դատապարտուած տեսնելով, դատեն ինձ որպէս յայտնի յանցագործի։ Այս մասին գործակալ Խորէն Սւագ. քահանայի միջոցով յայտարարում եմ կանխատորէն, մինչի այս օրէլ սպասում եմ պատասխանին, երևի ըստ կրօնականի անդր աշխարհից կլինի պատասխան։

Այս ամենից յետոյ Եղիշէ քահանայ Գեղամեանցը իւր փարիսեցու կեղծ վարմունքը այնպէս էր շարունակում, որպէս թէ անկեղծ բարեկամ։ Մինչ դեռ ես անհամբեր սպասում եմ Թիֆլիսի դատաստանական պալատում իմ գործի դատական քննութեանը, մի օր Եղիշէ քահանայ Գեղամեանը դիմում է ինձ, իրան յատուկ ծիրքով, եգիպտական կոմպլեմենտներով.—Թէ գործով գնում եմ Թիֆլիս, խնդրում եմ, իմ

օրէնքներս կատարես իմ տիրացուի հետ և գոյացած արդիւնքը յանձնես նրան, և խորհուրդ է տալիս մի հաւատարմագիր տամ իմ գործի մասին տեղեկութիւն իմանալու պալատում։ Համաձայնում եմ օրէնքները կատարել, իսկ, հաւատարմագիր չեմ տալիս, բայց չգիտեմ երբ և ինչ՛պէս գործը յանձնւում է ներքին գործոց նախարարութեան ատեանը։ 1893 թ. մարտ ամսում, նախագահութեամբ պատերազմական նախարար Վաննովսկու քննում են իմ գործը և միայն յանցաւոր ճանաչում Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանցին և զրկում են նրան թէ առաջնորդութեան և թէ որևիցէ հոգևոր պաշտօն վարելու իրաւունքից։

Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանը մինչ դեռ երազում էր, որ Տէր-Գրիգորի սպայ որդիքը մէկը Լօրիսմելիքովի, միւսը Լազարևի պաշտօնները ստանձնելով, Պետերբուրգում կմիջամտեն իրեն հայոց կաթուղիկոսական Գահը բազմեցնելու, յանկարծ ստանում է հրաման, որ իրաւազուրկ է և այդ պատճառով գալիս է Բագու, Եղիշէ քահանայ Գեղամեանցի ղեկավարութեամբ իջևանում է Տէր-Գրիգոր Յովսէփեանի խնամի Համբարձում Մելիքեանի տանը. այդտեղ Սմբատեանցը թէ իրեն պատիւը վերականգնելու և թէ Բագուի քահանայութեան ու հարուստ տանտիրոջ համակրութիւնը վաստակե-

լու համար ստորագրեց աւելի մի սև մատնութեան գիր, որ ուղղած ում հարկն էր, և այդ թուղթը պատրաստած էր Բաքուի քահանայութեան մարգարիտ (բացառութեամբ խորէն ա. քահանայ Միրզաբեկեանցի), ինտրիգների բովից դուրս եկած Ե. ք. Գեղամեանցի ձեռքով։ Այդ անամօթ մատնութեան հետևանքը այն եղաւ, որ ինձ աքսորեցին Սիբիրիայի մի խոր անկիւն հինգ տարի ժամանակով, իսկ Սմբատեանցը դարձեալ մնաց նոյն իրաւազուրկը։

Արդ՝ հարցնում եմ, Բագուի վահանայութեան, դուք, որ գրումէք «Մշակ» լրագրի 147 համարում, որ ես Ախալքաղաքից սկսած մինչև Բագու իմ ընկերներիս հետ չարունակ դաւադանով ու լկտի հայհոյանքով եմ խօսել»։ Արդեօ՞ք ո՛վ է լկտին. ե՞ս, թէ Բագուի քահանայութիւնը իւր առաջնորդով մէկ տեղ։ Թող պատասխան տան ժողովրդականները։

1893 թ. դեկտեմբեր ամսին ձերբակալուած աքսորուեցի Սիբիրիայի Տուրա քաղաքը, որի ոստիկանապետը հետաքրքրուելով իմ աքսորման պատճառով՝ ասումէ.— Տէր-հայր, ձեզ սխալմամբ են աքսորել. Ներքին գործոց նախարարութիւնը ձեզ արդար է ճանաչել, ուրիշն է եղել յանցաւոր. և այդ մասին ցոյց է տալիս պրաւիտելստվեննի վեստնիկի մարտ ամսի համարը, և այդտեղից երևում է, որ ինձ իրաւունք է մինչև անգամ

իմ հակառակորդներին պատժել տալու։ Այդ հիման վերայ անմիջապէս յայտարարում եմ ներքին գործոց նախարարութեանը ինձ սխալմամբ աքսորելու մասին, պատասխան եմ ստանում այսպէս. «Մեսրոպ եպիսկոպոսի վկայութեամբ դուք նորէն յանցաւոր համարելով Բարձրագոյն հրամանաւ աքսորուելէք Սիբիրա»։

Ինձ սիբիր աքսորելուց յետոյ Ս. սինօդը իմ ծուխի հովուութիւնը յանձնում է ժամանակաւոր Աբգար քահանայ Տէր-Յարութիւնեանցին մինչ իմ վերադարձը հասոյթից մաս որոշելով իմ ընտանեաց ապրուստի համար, բայց Աբգար քահանան իմ ծխերի հասոյթից ընդամէնը տալիս է իմ ընտանիքին 120 ռուբ. մինչդեռ մի տարուայ ընթացքում Գրիգոր Թումայեանի տանից ստացել 400 ռուբլուց աւելի արդիւնք. այստեղ խօսք չունիմ անելու, որ Բաւայ քահանայութիւնը լաւութիւն անելով իմ ընտանիքին, իւրաքանչիւրը ամիսը 5 ռուբլի օգնութիւն է տալիս եմ ընտանիքին, իսկ Խորէն Աւագ քահանայ Մերզաբեկեանցը չեզօք է մնացել այդ տուրքից, ինչպէս սիբիր աքսորել տալու խորհուրդից չեզօք էր մնացել։

Աքսորավայրից ազատուելով գալիս եմ Բագու։ Այն ժամանակ Թեմի առաջնորդը լինում է Մակար եպիսկոպոս Բարխուդարեանը, որ հրամանագրում է Բագուի Գործակալին Սինօդի որոշման

համաձայն քաղաքի իմ ծխերը յանձնում են ինձ, իսկ Տէր-Աբգարին իւր Բալախանի ծխերը, բայց Տէր-Աբգարը դարձեալ Մելիքեան Համբարձումի միջոցով աշխատումէ Ս. Սինոդի հրամանով աւ-անդ ուած ծուխս յետ չդարձնէ ինձ. իսկ առաջնորդ Բարխուդարեանը աշխատում է իմ ծուխը յանձնել ինձ, չընդունելով Համբարձում Մելիքեանի միջամտութիւնը։

Բաղւի քահանայութիւնը կարծելով՝ թէ իրեանց անցեալ գործողութիւնից եւ ոչ մի տեղեկութիւն չունիմ, դարձեալ կարիք է ունենում բարերար և բարեգործ Մելիքեանի տանը գաղտնի խորհուրդ կայացնել այս իմաստով.—Բարխուդարեանի պաշտպանութիւնը Տէր-Ոսկանեանցին առանց նպատակի չէ, նա պատմական մարդ է. Տէր-Ոսկանեանցի հետ շփւելով՝ կհետաքրքրւի նորա մասին կոնսիստորեայում եղած գործերով և ամէն գաղտնիք Տէր-Ոսկանեանցին յայտնի դառնալուց յետոյ, էլ չենք կարող ազատւել նրանից. Նախապէս յօրինելով մի տարօրինակ հարց, որին Բարխուդարեանը չէր համաձայնւել, միւս կողմով էլ իրանք միջամտումեն որ չը իրագործւի. այդ Սերգէեան Գաբրելի քահանայութեան խնդիրն է. և ապա անանուն նամակներով սպանութեան սպառնալիքներ տալով, առաջարկում են անմիջապէս հրաժարւել առաջնորդութիւնից և Շուշւու թեմից դուրս գնալ. այդպէս ձիրք ունի միայն Բաքուի

քահանայութիւնը։ Բարխուդարեանը հրաժարական ներկայացնելով ինքն էլ փախչում է Շամախուց, յետ որոյ մինչեւ նոր առաջնորդ Այվազեան Կարապետ եպիսկոպոսի գալուստը ես մնում եմ զրկուած։ Այվազեանը գալիս է Բագու. Բագուի բանիբուն հասարակութեան մի մասը նկատի ունենալով Աբգար քահանայ Տէր-Յարութիւնեանի Բագւայ քահանայից համակրութեամբ իմ դէմ գործ դրած խարդախ վարմունքը, կազմում են համախօսական 400 ստորագրութեամբ՝ այս իմաստով. կամ Տէր-Ոսկանեանցին միւս քահանաների հաւասար վիճակահանութեամբ ծուխ տալ, կամ մեզ ստորագրողներիս համար մշտնջենաւոր քահանայ հաստատել։ Այս դէպքում դարձեալ Բագուի քահանայութիւնը կարիք ունեցաւ բարեպաշտ և բարեգործ Մելիքեանի աջակցութեանը, որի հաճութեամբ նորա ազգական Պօղոս Մելիքեանին խրատում են գնալ այդ համախօսականին ստորագրել թէ իւր և թէ իւր ազգականների մի քանիսի փոխարէն, որ աւելի ունենան կազմուած համախօսականին խոչընդոտ հանդիսանալ կեղծ ստորագրութեան պատրուակով, այդպէս էլ Պօղոս Մելիքեանը կատարում է այդ պատուէրը։ Համախօսականը 2 ենժնէր և մէկ յայտնի վաճառական ներկայացնում են առաջնորդ Կարապետ եպիսկոպոս

Այվազեանին օրինապահանջ մարկաներով ի
գործադրութիւն, առաջնորդը քահանաներին
ժողովն է հրաւիրում և առաջարկում համախօ-
սականի 2 պայմաններից որն է իրանց հաճելի,
որ ինքն էլ իւր կողմից հաստատի, իսկ քահա-
նայքը առարկում են թէ համախօսականում
կեղծ ստորագրութիւններ կայ, ըստ որում չեն
համաձայնիլ համախօսականի ոչ մի պայմանին,
իսկ առաջնորդը հրամայում է ցոյց տալ կեղծ
ստորագրութիւնը. քահանայքը ցոյց են տալիս
Պօղոս Մելիքեանի ստորագրութիւնը և երկու
այլ Մելիքեանների անունները որ, Պօղոսի ձեռ-
քով է ստորագրած. մինչ ժողովի վերջանալ գա-
լիս է Համբարձում Մելիքեանը իւր հետ բե-
րել էր այս 2 Մելիքեաններին, որոնց փոխարէն
ստորագրել է Պօղոս Մելիքեանը, բողոքում են
ինձ դէմ. իսկ Կարապետ եպիսկոպոսը ասում է.
պարոններ, դուք բողոքեցէք Ձեր ազգական Պօղո-
սի դէմ. այստեղ Տէր-Ոսկանեանցի դէմ դուք ոչ
մի հաշիւ չունիք բողոքելու. Վերջապէս առաջ-
նորդը նկատելով Բագուայ քահանայից խարդա-
խութեան չափն ու սահմանը միւս օրը որ կիւ-
րակի էր, պատարագի ժամանակ բարձրանում է
սեղան ծովացած ժողովուրդի դիմացը Բագուայ
քահանայութեան անպատուում պախարակում թէ
դուք քահանայ չէք, այլ ժողովուրդի համար հրէշէք
պէտք է Ձեզ այդ ծովը թափել խեղդելու հա-

մար։ Բագւայ քահանայութիւնը նկատելով, որ
համախօսականի երկու հարցի որ մէկն էլ հաս-
տատուի, իրանք յաղթւած են։ Սկսում են ոսկու
փայլով ծրագիր յօրինել. առաջնորդին համա-
ձայնացնում են լռելեայն գործել այսպէս. իմ
քաղաքի ծուխը հաստատել Տէր-Աբգարին վերայ,
իսկ Տէր-Աբգարի Բալախանու ծուխը ինձ վրայ,
նպատակ ունենալով, որ մի առժամանակ անց-
նելուց յետոյ ոսկու ծառ Համբարձում Մելի-
քեանցի ոսկու տոպրակներին երկրպագող ինժի-
ներների միջոցով բողոք կյարուցանեն Կարապետ
եպիսկոպոսի կարգադրութեան դէմ, որ առանց
օրինական ընտրութեան իրանց համար քահա-
նայ է նշանակել։ Այդպիսով կտապալեն ինձ, այդ-
դաւանի ծրագիրը լռելեայն իրագործում է
յանկարծ ստանում եմ հրաման, ըստ առաջա-
գրութեան Թեմակալ առաջնորդի Սինօդը հաս-
տատել է ինձ Բալախանու ծխական քահանայ.
տալով մի 100 տուն ծուխ էլ քաղաքից, որից
յետոյ Բագւայ քահանայից և ոսկու ծառ Համ-
բարձում Մելիքեանցի մաղձոտ ծրագրին ինժի-
ներներից շատ շատերը ուշադրութիւն չեն
դարձնում, բայց Հ. Գիւլամերեանը և Ա. Տէր-
տէրեանը։

Իսկ հին ինդրիկանդ Եղիշէ քահանայ Գե-
ղամեանը իւր խարդախ ու խորամանկ բնաւո-
րութեամբ աշխատում է այնպիսի հարց յարու-

ցանել, որ Բագւի քահանայից ծրագիրն իրա-
գործելի ինձ տապալելու համար, մի կողմով հը-
րամայում են ինձ Բալախանու գործաւորներին,
բանւորներին ցուցակագրել, իսկ միւս կողմից
կուսակցութիւն են սարքում խոչնդոտ հանդի-
սանալ ցուցակագրութեանը աղմուկ բարձրացը-
նելով ինձ տապալելու համար. իսկ ես այդ
դաղտնի ծրագրից տեղեկութիւն չունենալով,
տեխնիկական ձևով մատեաններ եմ պատրաս-
տել տալիս Արօր տպարանում և սկսում ցու-
ցակագրութիւնը, հանդէս են գալիս Բագւի
քահանայից ծրագրի հերոսներից մի քանիսը.
չեն կամենում ցուցակագրւել ասելով Բալախա-
նու գործաւորներն պիտի ժողովի հրաւիրվին հա-
մաձայն նոր կանոնի, եթէ ժողովում կընարեք
ձեզ քահանայ, այն ժամանակ ցուցակագրեք մեզ
որպէս ծխական քահանայ. ես պատասխանում
եմ, պարոններ, Ձեր ասածները ճշմարիտ են քա-
հանացու ընտրելու ժամանակ, իսկ ես արդէն
վաղուցւայ քահանայ եմ, որ ընտրել են ձեր նա-
խորդները. այսպէս առաջին հերոսները համա-
ձայնում են ինձ հետ. շարունակում եմ ցուցա-
կագրութիւնը մինչև Արամայս ընկերութեան
հանքերը և այդ կենդրոնը չվերջացրած, յան-
կարծ ստանում եմ Մեսրոպ վարդապետ Մով-
սեսեանից մի պաշտօնական գրութիւն.—անմի-
ջապէս դադարեցնել ցուցակագրութիւնը. բա-

ցատրութիւն եմ պահանջում այդ մասին. ասում է. «Նախ բեր ցուցակդ ձիր տեսնեմ, յետոյ կասեմ», ներկայացնում եմ ցուցակը, զարմանքով բացականչում է. «Տէր-Եղիշէ, Աստուածդ սիրես, տես, որպիսի տարօրինակ ցուցակ է կազմում Տէր-Ոսկանեանը» այս ցուցակի յօրինուածքի գծագրութիւնը պատրաստել եմ տվել Արօր տպարանում:

—Սուրբ Հայրն ասում է ինձ, սպասիր, ժամի տասն է, հիմա կգան հրաւիրուած մարդիկը. քրէական յանցանք ես գործել պէտք է քննութիւն անել: Այս միջոցում Եղիշէ քահանայ Դեղամեանցը իւր ընտիր խորամանկ կոմպլիմենտներով վերկացաւ տեղից, ու վարդապետի ձեռքը սեղմելով՝ ասաց. «անշուշտ կյաջողացնեմ եթէ ոչ 6,ը՝ 5,ը անպատճառ»: Ու դուրս գնաց, ներկայ հանգամանքի ազդեցութեան տակ, ես այլ նշանակութիւն էի տալիս Տէր-Եղիշէի արտայայտած թւանշաններին, բայց իրականապէս այլ էր. Տէր-Հայրը արդէն ուսումնասիրել էր Մեսրովբ վարդապետի ինչպէս արտաքինը երկար բոյը նոյնպէս և ներքին ընդունակութիւնը աւելի երկար խելքն ու հանճարը, որ միայն անզուգական է—առաջին և վերջինն է հայոց հոգևոր աշխարհում, բաւորում աշխատում էր բարերարների հաշւով բարձրագոյն ուսում շարունակէ որպէս ապագայ հան-

ճարեղ կաթուղիկոսացու։ կարծիք չկայ, որ իրականապէս Տէր-հօր այդ վարմունքը ներկայ հանդամանքի տեսակէտից հեռու չէր այդ մասին իմ ունեցած կանխակալ կարծիքից։

Եկան քննութեան հրաւիրուած մարդիկը. քննիչ Մեսրովբ վարդապետը ընտանի վարմունքով ընդունեց նրանց և հարցրեց «ճանաչում էք այս տէրտէրին՚» մատնանիշ անելով ինձ։—Ինչպէս չէ, Տէր-Ոսկանեանցը չէ՞, իմ երախային դա է մկրտել. մի քանի տարի առաջ։ Մկրտութեան ժամանակ ի՞նչ է ասել Ձեզ։—Մոռացել եմ, հայր սուրբ, խնդրքում գրուել է ասածները։ Տօ հէրհօրհնած մի ամիս չկայ խընդիր գրելդ, մոռացե՞լ ես գրածներդ. ինչ գրել ես, այն եմ հարցնում, ասա՛, էլի։—Հայր սուրբ, խնդիրը ես չեմ գրել պատասխանեց բողոքաւորը։ Իսկ քննիչ սուրբ հայրը այլայլուած կեղծ ծիծաղը չրթունքին, չարունակեց, կամենալով ժամանակ վաստակել, որպէս զի քննութիւն ուղղին կարողանայ աւելի լաւ լարել, այսինքն այնպիսի խօսքեր առնէ նրա բերանից, որպէս ինքն է կամենում։ Այդ միջոցին ես] հարցրի քննութիւն ուղղից.—ապա խնդիրը ով է գրել.—Տիրացու Արմենակը և մեր ծխատէրը Տէր-Եղիշէն, պատասխանեց գանգատաւորը։ Այդ խընդրին ես ծանօթ էի, որովհետև կոնսիստորեայն մակագրութեամբ ուղարկել էր ինձ, որ ես բա-

ցատրութիւն գրեմ նոյնի վրան ու յետ դարձնեմ և ես կատարել էի այդ պատէրը ճշտութեամբ , յամենայն դէպս քննիչ վարդապետը խնդրագիրը կարդաց և հարցրեց քննութիւն տուողին.—Այսպէ՞ս է եղել:—Այո՛, այո, հայր սուրբ, այդպէս է եղել, քննիչ սուրբ հայրը ասում է ինձ.—Տէր-Ոսկանեանց, տեսնում ես, ինչ անիրաւութիւն և ինչ զեղծում ես կատարել:—Հայր սուրբ, կամ քննիչ բառի նշանակութիւնը չէք հասկանում, կամ յայտնապէս երեսպաշտութիւն եք անում, և դարձայ խնդրատուին ու ասացի.—Երեխի սխալում ես քո երեխային ես չեմ մկրր-տել. ինչպէս կարելի է, որ եթէ դու ասես կինրս ապօրինի է, ես օրինաւոր գրեմ, և ասես թէ այլադաւան է, ես ուսաւորչադաւան գրեմ և ապօրինի զաւակից էլ օրինաւոր գրեմ: Քննութիւն տվող բողոքաւորը խոստովանվեց, ասելով՝ Տէր-Հայր, ախր դուք չէիք գրողը:—Ապա ով էր:—Մեր ծխական Տէր-Եղիշէի տիրացու Ալեքսանն էր:—Ինչո՞ւ նա գրեց և ոչ ես:—Ես հէնց ձեզ մօտ էի, դուք ինձ չճանաչելով ասացիք, երախայի հօրը կանչիր արձանագրութիւնը կազմեմ, իսկ ինքը ասաց. ես ժամանակ չունիմ. դուք երախային մկրտեցէք, ես էլ արձանագրութիւնը կկազմեմ և ապա ինձ կանչեց դուրսը ասեց, թէ երախայի հայրը՝ որդուն մկրտելիս ներկայ չի լինել, ես ասացի ինքն էլ

գրեց. այս միջոցին քննիչ Մեսրովբ վարդապետ Մովսեսեանը խիստ զայրացած ասաւ.—Տէր-Ոսկանեանց, կոնսիստորը սխալուել է, որ քննիչը ինձ է նշանակել և ոչ ձեզ, վերջապէս նայեցէք չափաբերական Մատեանին տեսէք թէ առաջին օրինակը նոյն Ալեքսանի ձեռքով է գրուած, կնքահօր վերաբերեալ օրինակը մի ուրիշ ձեռքով, իսկ տիրացուի վերաբերեալ օրինակը գրուած է նոյն տիրացու Ալեքսանի ձեռքով, բայց ուրիշ տիրացուի անուն է գրած և ոչ իւր անունը, այս ամենից յետոյ խնդրում եմ կազմած արձանագրութեան պատճէնը անմիջապէս վաւերացնով տալ ինձ, իսկ քննիչ սուրբ հայրը ցասմամբ լցուած ասաց.—Տէր-Ոսկանեանց, ամեն բան ուզում ես քո արշինով չափել, յանդգնութեանդ սանձ դիր պատճէնը կստանաս կոնսիստորից։ Եւ այդ պատճէնը մի քանի անգամ պահանջելու համար է որ ստանում եմ միայն և միայն ապօրինի և գաղտնի կայացրած վճիռների հրամաններ ինձ այս ու այն կողմ աքսորելու համար իբրև ըմբոստ, յափշտակող և այլ զանազան ածականներով չարադրուած յանցապարծ ու մեղաւոր, որը միայն Շամախւոյ կոնսիստորի կազմին է վայել։ Մեսրովբ վարդապետի կոչումը թէև այն վարդապետի աշակերտութեան կոչումն է, որ ասում էր ոչ եկի պաշտօն առնուլ, այլ պաշտել, բայց ինքը ար-

գէն ընտրել էր այն շաւիղը, որով ձգտում էր Ս. Էջմիածնի աթոռակալը լինել, ըստ որում համակերպուել էր Բագւի միլիօնատէրերի քահանայութեան հետ իւր ներկայ և ապագայ անձնական շահերը պաշտպանելու համար. նախ՝ յիշեալ քահանաների շնորհիւ 'ի տրիտուր ինձ հալածելու նրանց ծխական իշխանների հաշւով մագիստրոսութիւն կստանայ, ինչպէս որ Ծանիքի ստացաւ, երկրորդ՝ նկատի ունենալով ծերունի կաթուղիկոսի մերձակայ մահը, որից յետոյ կաթուղիկոսական գահին կարժանացնեն իրան ինչպէս պաշտօնակալութեան իգէալիստի և ոչ իւր կոչման համապատասխան պաշտելու կոչեցեալի: Մեսրովբ վարդապետը այսպէս դիտաւորւած ամենաաններելի միջոցներ գործ դրեց Բագւի միլիօնատէրերի քահանայից ինձ տառապեալ բանւորութեան քահանայիս դէմ շարունակւող հալածանքների, ի վնաս ինձ աւելի զանազան գոյներով ներկեց և կրկնապատիկ ընթացք տւեց միայն և միայն միլիօնատէրերի քահանաներին հաճոյանալու. այս ասածներս հաստատելու համար Մեսրովբ վարդապետի ինձ դէմ բարձրագոյն իշխանութեան ներկայացրած ամբաստանագրութիւններն գրքոյկիս երկրորդ հատորում կզետեղւեն:

Բագւի քահանայութիւնը թեմական իշխանութեան թարմ ուժերը նախորդների ծրագրով

իրանց կողմը գրաւելով և ինձ դէմ լարելուց յետոյ, յետին մտքերով կազմում են մի այլ ծրագիր բարձրագոյն իշխանութեան առաջ իրանց չքմեղ կացուցանելու համար, սարքում են մի ամբաստանագիր։ Բագուի հասարակութեան կողմից Համբարձում Մելիքեանի ձեռքով ստորագրել են տալիս 24 մարդկանց, ո՛րոնք Բագուի առաջաւոր և բարեպաշտ անձինքն են ու իրանց ծխականները, և ներկայացնում կաթուղիկոսին, և այդ այլանդակ ամբաստանագրի իրագործման համար Համբարձում Մելիքեանցին և կոնսիստորի անդամ, որ այժմ Բագու է, Տաճատ քահանայ Մարաղեանցին պատւիրակութեան պաշտօնով ուղարկում են Ս. Էջմիածին, Տիկին Նողակաթ Մելիքեանցի 12000 ռուբ. էլ կաթուղիկոսին նուէր տանելով, իհարկէ ուշադրութիւնը գրաւելով, որպէս զի այժմ էլ հայոց կաթուղիկոսի կարգադրութեամբ աքսորել տան ինձ Բագուից—այն քաղաքից, որի մէջ գործելու եմ եկել 1866 թ. 21 տարեկան հասակումս. 38 տարի պարկեշտ կենցաղավարութեամբ գործել եմ և արդար վաստակիս քաղցր պտուղներից մինչ առատ մաս ու բաժին եմ հանել ազգային հիմնարկութիւններին—կրթական վայրերին, որոնց մասին ունեցածս պաշտօնական վկայագրերն ու սրբատառ կոնտակներն ընթերցողը կտեսնէ այս տխուր պատմութեանս երկրորդ

հատորում, իսկ իմ չարքաշ բանւոր ծխականներս Բագւի մեկենատէրերի քահանաների ինձ դէմ գործած քստմնելի արարքներն նկատելով, մի ուղերձ են պատրաստում իմ քահանայական պաշտօնավարութեանս առանձնայատկութիւնները դրւադելով, իրանց կողմից պատւիրակի միջոցով ներկայացնում կաթուղիկոսին. այդ այն ժամանակ է լինում, որ Համբարձում Մելիքեանը յիշեալ 12,000 ռուբ. ներկայացնում է կաթուղիկոսին և խնդրում Բագւի քահանայութեան ծրագրով կազմւած և 24 առաջաւորներից ստորագրած խնդիրը կատարել, կարգադրել աքսորել ինձ։ Կաթուղիկոսը հարցնում է Մելիքեանից—«Խնդրատուներից տանու երեցն Տէր-Ոսկանեա՞նցն է.» Մելիքեանը ասում է.—ոչ։—Ապա ի՞նչ կուզէք դուք նրանից, նրա ծխական ժողովրդականք իրմէն գոհեն և բազմաստորագիր ուղերձներով կդրւադեն իրենց տան երեց Տէր-Ոսկանեանցին քահանայական պաշտամունքի բազմադիմի առաւելութիւնները, իսկ ձեր խնդիրը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ամբաստանութիւն. Տէր-Ոսկանեանց ունի իրաւունք Ձեզ դատի ենթարկելու, իսկ Տաճատ քահանայ Մարաղեանցի թափած ճիգ ու ջանքեր լաւ լսելուց յետոյ ասել է.—Դու, ըշտէ, անխորամանգ Գեղամեանցին ընկեր դառիր ես, քահանայական պաշտօնդ մոռցեր ես։

Կաթուղիկոսը տեսնում է, թէ Բագուի քահանայութիւնը արդէն ուխտել է ինձ տապալելու նախապէս կոնսիստորի բախտախնդիր կաղմը իր ձեռքն առած ինձ դէմ լարելուց յետոյ, այժմ էլ սկսել է Բագուի բարեպաշտ իշխաններին առաջ քաշելու ինձ դէմ լարել, որ նրանց սև խսը ի կատար ածեն միացած ուժերով, և ահա Հայրենի այդ ամենի համար նորէն սրբատառ կոնտակով որոշում է իմ ծխերին հովելու եղանակը և հրամայում է արտաքոյ թեմից արտակարգ քննիչներով քննել գործը յանցաւորին պատժելու համար։

Ընդհանրապէս Շամախոյ կոնսիստորի կազմի բախտախնդիր արարածները նախանձանօթ են Բագուի քահանայութեան արինուուշտ գործնէութեան եղանակներին, թէ ինչպէս Մակար եպիսկոպոս Բարխուդարեանի որպէս մաքուր անաչառ, անկաշառ և պատմաբան մարդու թեմի առաջնորդ միայն իրանց չաղկր գործնէութեանը անհամապատասխան համարելով, դիմեցին իրանց բնածիր չնորհքին—յօրինեցին անանուն նամակներ մահու սպառնալիքներով խեղճին փախցրին թեմի առաջնորդութիւնից։

Մակարի յաջորդ Կարապետ եպիսկոպոս Այվազեանից խիստ յանդիմանած լինելով, Բագուի Ս. Լուսաւորիչ եկեղեցոյ բեմից՝ հրապարակօրէն ինձ դէմ գործ դրած հակա-քահանա-

կան վարմունքների մասին, սկսեցին կտրուկ միջոցների դիմել.—Նրանք լաւ ուսումնասիրած լինելով նրա պատասխօս և դիւրագրգիռ, բոլբոքող ու անհամբեր բնաւորութիւնը յօրինեցին մի խիստ ու ղայրացուցիչ բնաւորութիւն կրող գրութիւն ու ներկայացրին նրան, որ կարդալուն պէս յանկարծահաս է լինում։

Բաղէի քահանայութիւնը՝, Կարապետ եպիսկոպոսի յաջորդ Եսայի եպիսկոպոսին աշխատում են չթողնել նախապէս թեմական առեանը մտնել, կասկածելով՝ թէ նա էլ իւր նախորդին պէս առեանում իրանց գործնէութիւնը ուսումնասիրելով՝ կարող է աւելի յայտնի կերպով հրապարակ հանել իրանց սոր վարմունքը-իմ դէմ գործ դրած տեսակ տեսակ անխիղճ ու անամօթ ընթացքը, և այդ պատճառով յիշեալ 24 առաջաւորները ստորագրութեամբ հեռագրում են կաթուղիկոսին, որ նոր առաջնորդ Եսային առաջ Բաղու մտնի. այդպէս էլ կարդագրւում է. առաջնորդը՝ Բաղուն մտնելուն պէս Բաղէի քահանայութիւնը և իրանց սև եսին դերի այդ 24 իշխանները չրջապատում են նրան։ Լօթի ճրինկի ուհին ինտրիկանդ Եղիշէ քահանայ Գեղամեանցն էլ մերթ դեկտատորի ու մերթ սոփլերի դեր կատարելով, ով գիտէ, թէ ինչ տեսակի զրպարտութիւններ բարդելով վրաս, առաջարկւում է թէ ինչպէս թեմակալ ա-

ռաջնորդը իրան վերապահեալ իրաւունքները կարող է գործ դնել ինձ Բագւից աքսորելու, հակառակ դէպքում իրեն առաջնորդ չէնք ընդունում։ Առաջնորդ Եսային պահանջում է, որ ատամները գրաւոր տան իրանց բոլորի ստորագրութեամբ, որպէսզի սահմանեալ եղանակով քննութիւնը կատարուի և ըստ այնմ կարգադրի — անօրինէ ինքը, Բագւի առաջաւորները հրաժարւում են քահանաներից թելադրուած մեղադրանքները գրաւոր տալուց։

Ապա Բագւի քահանայութիւնը դիմում է է մի այլ միջոցի. Արսէն քահանայ Ցիւրինեանի թաղը, որ կայարանի շուրջն է և իւր ծխականների մեծամասնութիւնը ապրում է այն թաղում, պատւիրում են ծննդեան տօնին առաջին օրը նախապէս օրհնէ իւր ծխականների տները, ճիշդ իմանալով, որ ես անշուշտ կհանդիպեմ նրան և նա աշխատէ այնպիսի միջոց գործ դնել, որ ընդհարում տեղի ունենայ. Արսէն քահանան կատարում է նրանց պատէրը։ Դիտաւորեալ առաջին օրը նախապէս սկսում է օրհնել իմ ծխականների տները, իմ բազմադիմի խնդիրներն ոչինչի տեղ դնելով, վերջապէս իմ ծխական Վաղարշակ Ժամակոչեանի տան բակում դիմադարձ լինելուց յետոյ էլ, դարձեալ շարունակում է իւր յափշտակութեան գործնէութիւնը։ Նկատելով որ Տէր-Արսէնի արարքը ինչ որ դիտաւորեալ չա-

րութիւն է, թողում եմ իմ տնօրհնէնքը և այս մասին յայտարարութիւն ներկայացնում գործակալին. այս դէպքում էլ իմ յայտարարութիւնը ինչպէս միշտ, դարձեալ այս անգամ էլ պահում են գործակալի արխիւում, իսկ 12 օրից յետոյ Բագւի քահանայութիւնը Տէր-Արսէնին յայտարարութիւն է յօրինել տալիս և ներկայացնում առաջնորդին, որպէս թէ ես նրան ծեծել, անպատւել եմ հարապարակում, դարձեալ դաղտնի քննիչ են նշանակում։

Կոնսիստորին Անդամ Եփրեմ վարդապետին և Գարեգին քահանայ Ղուկասեանցին. ինձնից գաղտնի քննութիւն են կատարում, այդ ապօրինի քննութեան համար Բագւի քահանայութիւնը և նրանց 24 համախոհներ թէ ինչ են տւել Եփրեմ վարդապետին ինձ յայտնի չէ, միայն այս գիտեմ որ քահանայքը խոստացել են Գարեգին քահանային, եթէ քննութիւնը սարքէ իրանց կամեցած ծրագրով, իմ ծխական ինծեներներին և ունեորներին կյատկացնեն իրան ծուխ, այս ամեն անցքը այն ժամանակ ինձնից գաղտնի է կատարւել։

Մինչդեռ ես անհամբեր սպասում էի թէ նոր առաջնորդը կաթուղիկոսի սրբատառ կոնդակի համաձայն արտաքոյ թեմից քննիչ կնշանակէ արդարութիւնը երևան հանելու, որով այս ամեն դժարութիւններին վերջ կդնէ,

բայց զատկական տօնին չհասած, նոր առաջնորդից յանկարծ ստանում եմ հրաման, թէ ի զգուշութիւն և օրինակ Շամախւոյ թեմի բոլոր քահանայութեան՝ Մեսրոպը քահանայ Տէր-Ոսկանեանցին դադարեցնում եմ քահանայագործութիւնից չորս ամիս ժամանակով։ Ինչպէս երևում է, որբացան հայրը վռնդելուց մոռացել էր յիշելու, թէ այս իսպանեայի ինկվիզիտականութեան նախասահմանած կարգադրութիւնից միայն բացառութիւն են կազմում Բագւի միլիօնատէրերի խոստովանայ հայր քահանաների կամքը։ Գրքոյկս առ տեղեաւ լրջմտութեամբ ընթերցողը կտեսնէ թէ այս խօսքերը գրելուց ես միշտ խղճիս ձայնին եմ լսել և ոչ կամքիս. վերջապէս հեռագրերով, խնդրագրերով դիմում ենք թէ ես և թէ իմ ծխականներս որբացան առաջնորդին, որ թոյլ տայ զատկական տօնից յետոյ կրեմ իւր որոշած պատիժը. սակայն չի լսում, զիջում չի անում։ Նոյնպէս հեռագրով, խնդրագրով դիմում ենք կաթուղիկոսին, որ իւր № 1381 կոնդակի համաձայն առաջնորդի կարգադրութիւնը փոխի, բայց կամակոր առաջնորդը չի լսում կաթուղիկոսին։ Եղիշէ քահանայ Գեղամեանցը Բագւի քահանայութեան և իրանց համախոհների կողմից գալիս է Թիֆլիզ միջամտում կաթուղիկոսին որ այս դէպքում Բագւի միլիօնատէրերի խաթրի

համար առաջնորդի իրաւունքներին չի խառնուի, թէ ինչ պատասխան էր ստացել. ինձ յայտնի չէ, միայն նրա յետեւից ես եմ ներկայանում կաթուղիկոսին (և այդտեղ տեսայ, եթէ չեմ սխալւում, Պետրոս Սիմօնեանցին)։ Խնդրում եմ առաջնորդի ապօրինի կարգադրութիւնը փոխի. կաթուղիկոսը յայտնում է, թէ արդէն կարգադրութիւն արւած է ձեր հեռագրի համաձայն, իսկ առաջնորդը միացել է Բագւի ամիրաներին. դուք բողոքեցէք փոխարքային, թող դատի ենթարկէ առաջնորդին։ Այս խօսակցութեան ներկայ եղողն էլ հաւանութիւն է տալիս այդ եղանակաւ վարւելու կամակոր առաջնորդի հետ. իսկ ես պատասխանում եմ.—Վեհափառ Տէր, Հայրիկ ջան, ես պատրաստ եմ Կուր գետի սառը յատակը ինձ գերեզման անելու և ոչ այդ եղանակաւ վարւելու։ Հայրիկը խիստ զգացւած պատասխանեց. “Տէր Մեսրովբ, զաւակս, հոգ չէ, համբերիր, այդ ապտակը Եսայի եպիսկոպոսը քեզ չի տալիս, այլ ինձ է տալիս”։ Այս պատճառաւ կաթուղիկոսը մի խիստ յանդիմանութեան նամակ է գրում Եսայի եպիսկոպոսին, որի խիստ ազդեցութիւնից իսկոյն կաթւածահար լինելով, յանկարծամահ է լինում։ Այժմ էլ տեսնենք թէ Գարեգին քահանայ Ղուկասեանը իւր ընկերակից Բագուի քահանայութեան պատւէրը ճշտութեամբ կատարելուն համար ինչ եղանակով է վարձա-

տրւել, որի ապացոյց այն ժամանակւայ գործակալ Արսէն վարդապետ Ղլըտչեանի պաշտօնական գրութեան բովանդակութիւնը. կարճ լինելուն համար այստեղ շարունակում եմ.

„Բարեկրօն Մեսրովբ քահանայ Խոլխոռունի, սրանով պատւիրում եմ Ձեզ, Մեսրովբ քահանայ Տէր Ոսկանեանի ծխերին հովւել այս Զատկական տօներին՝ սկսել Բալախանիից, իսկ քաղաքի քահանաները կը հովւեն իւրաքանչիւրի թաղում գտնուած նորա ծխականներին, որի արդիւնքը լիովին կստանայ Տէր Ոսկանեանցը։ Այս կարգադրութիւնը ի զգուշութիւն Ձեր է նախ, և երկրորդ՝ լինելիք թիւրիմացութիւնների առաջն առնելու համար է, որովհետև դուք ևս կարող էք նոյն վիճակին ենթարկւել, ինչ որ կրում է Տէր Ոսկանեան քահանան“։

Գործակալ եկեղեցեաց Հայոց Արսէն վարդապետ № 148

Թէև առաջնորդը պատժողական հրամանի մէջ գրած էր, որ իմ ծուխը յանձնւի այն քահանային, որին ես եմ ուզում, սակայն այդ էլ չկատարեցին, որովհետև Բագւի քահանայութեան խոստումը Գարեգին քահանայ Ղուկասեանի վերաբերեալ անկատար կմնար, դրա համար էլ հակառակ թէ առաջնորդի գրաւոր կարգադրութեան և թէ իմ կամքին, գործակալ Ղլըտչեանի

միջոցին իմ ծխերի հովուութիւնը սարքում են իրանց կամքի համաձայն և իմ ծխականների ունևորներին վեր է առնում Գորեգին քահանայ Ղուկասեանը համաձայն իւր ընկերակիցների խոստմանը որպէս իւր սեպականութիւն, իսկ միւս քահանայքն էլ ոչինչ չեն տալիս, ասելով թէ ինչ ենք ստացել, որ ինչ տանք։ Սիրելի ընթերցող, Գարեգին քահանայ Ղուկասեանին այս դէպքի առիթով Ղարիչխաբասմազ աֆանդի անուն եմ տուել։

Եսայուն աջորդ Անանեա արքեպիսկոպոսը, չեմ ուրանում, որ անկաշառ և ամուր կամքի տէր էր, բայց կարելի չէր պահանջել, որ նա նկատի չունենար իւր նախորդներին և ինքը չենթարկուէր այդ շրջանին, ինչպէս էլ վերջը ենթարկուեց, իսկ ինձ ու իմ անօգնական, անպաշտպան, անմայր գերդաստանս հասցրեց այսպիսի դառն անտանելի և անելանելի վիճակի։

Բագուի 24 առաջաւոր իշխանները, հաւատ ընծայելով իրանց խոստովանահայր քահանայից կազմին, ստորագրեցին նրանց ինձ դէմ յօրինած ամբաստանագրին, ներկայացրին Կաթուղիկոսին ինձ դատապարտելու և Բագուից աքսորելու համար. ես էլ իմացած լինելով այդ դաղանիքը — որպէս մարդ իմ այդ աներևոյթ թշնամիներից վրէժ առնելու համար կարօղ էի նրանց ամբաս-

տանիլ. բայց այդ առաջաւորները ինձ ամբաստանեցին ոչ թէ իրենց խոստովանահայրի նման սև նախանձեց դրդուած, այլ հաւատալով նրանց, որպէս թէ ես ազգի և եկեղեցոյ մի վնասակար և անպատուաբեր անդամ եմ։ Դորա համար էլ ես անկեղծ սրտով եմ սիրում նրանց որպէս ազգային պատուի նախանձախնդիրների։ Բայց երկար տարիներ համբերութեամբ կրածս այդ անիրաւացի հալածանքներից ու տանջանքներից ճաշակածս դառն բաժակի մուրը քամելուց յետոյ, այլ ևս անկարող լինելով տանել այդ մեծաքանակ ոյժերի ինձ միայնակիս դէմ յարուցած հալածանքներն, ուստի Ձեզ եմ դիմում, հա՛յ ժողովուրդ, ո՞վ գութ ու խեղճ ունի անմեղ հալածուածիս ու տառապեալիս ձայնը լսելու. թող դատաստանի հրաւիրեն 24 առաջաւորներին և իրանց խոստովանահայր քահանաներին միայն իմ ներկայութեամբ իմ խոստովանքն էլ լսելու, և անմեղիս բռնութեան ճիրաններից ազատելու համար։

Ղազախու գաւառի Կողպ գիւղացի Աբգար աւագ քահանայ Տէր Յարութիւնեանցը 16 տարեկան հասակից սկսած երկար տարիներ լաքէյութեան, սպասաւորութեան պաշտօն է վարել Սարգիս եպիսկոպոս Տ. Գասպարեանցի համար և այդ ժամանակամիջոցում կարողացել էր ընտելանալ Էջմիածնայ եղանակաւոր „ալէլուեաներին“.

այրական հասակն առնելուց յետոյ յիշեալ ե-
պիսկոպոսի միջոցի. արժանանում է քահանայա-
կան աստիճանին իւր ծննդավայր Կողպ գիւղի
համար։ Քահանայութեան պաշտօնով փոխւում
է Ղազախ քաղաք. այնտեղից էլ դարձեալ Կողպ.
և վերջին անգամն էլ փոխւում է Բաթում սի-
նօդի անդամ յիշեալ Սարգիս եպիսկոպոսի շնոր-
հիւ, չնայած որ Բաթումը խիստ կարիք ունէր
քահանայի, բայց այդ տեղից էլ դարձեալ փո-
խադրւեց էլի Կողպ գիւղը. սինօդի անդամ Սար-
գիս եպիսկոպոսը հին աղ ու հացը չմոռանալով
նորէն դիմեց Շամախու թեմի առաջնորդ մեզ
ծանօթ Մեսրովբ եպիսկոպոսին Տէր Աբգարին
իւր թեմում պաշտօն տալու համար։ Մեսրովբ
եպիսկոպոս գովասանական նամակներով դիմեց
Բագուեցիներին, իսկ Բագուեցիները նկատի ու-
նենալով Տէր Աբգարի անցեալը մանաւանդ, որ
Բաթումում դեռ նոր էր պաշտօն ստացել. իսկ
Բաթումցիներն էլ խիստ կարիք ունեն քահա-
նայի ըստ որում Սմբատեանցի առաջարկութիւնը
չեն յարգում, այս հարցին աւելի ծանօթ է
Ներսէ-բէկ Սարումեանցը, բացի Սինօդի անդամ
Սարգիս եպիսկոպոսի միջամտութիւնը՝ նաև Սըմ-
բատեանցը հաւաստիացած էր, որ Տէր Աբգարը
իւր կարիքներին գոհացում կտայ մանաւանդ
ինձ վերաբերեալ հարցերում, դորա համար էլ
առանց այլ և այլութեան նշանակեց Բալախա-

նու ծխական քահանայ։ Այս այն Տէր Աբգարն է, որ իսկապէս իմանում էր, թէ ինչպէս բանդերի դժնդակ օդով քայքայած առողջութիւնս սիբիրայում էլ քաղց ու ծարաւից էր կաղմալուծւում, այլ և իմ ընտանիքի բաժինը գործ էր դնում իւր հաշիւները Առաջնորդ Մեսրովբ Սմբատեանցի հետ մաքրելու համար։ Այս այն Տէր Աբգարն է, որ ես սիբիրայից վերադարձած և Սինոդի կարգադրութեամբ աւանդ տուած ծուխս չկամեցաւ յետ դարձնել ինձ, այլ և արհամարհեց այն ժամանակւայ առաջնորդ Մակար եպիսկոպոս Բարխուդարեանցի պաշտօնական հրամանագրութիւնը։

Այս այն Տէր Աբգարն է, որ ծխաբաժնութեան ցուցակները Համբարցում Մելիքեանցի տանը խորհրդաւոր կազմելուց յետոյ, երբ հանգամանքները փոխելով Բալախանին իմ հաստատուն ծուխը դարձաւ, այն ժամանակ էլ կոնսիստորի անդամը, որ այժմ Բագու է և այս կործանելի հրդեհի բորբոքիչ նիւթ մատակարարողն է, Տաճատ քահանայի աջակցութեամբ իւր ցուցակից հանեց այնքան ծխականները, որքան կարող էր, որոնք մտել էին ինձ յանձնած Բալախանիի ունեւոր ծխականներից, իհարկ է, ինձնից գաղտնի, չնայած, որ քաղաքի ծխերի ցուցակից աւելացել էր 66 տուն ծուխ, բացի իւր ցուցակից հանածները, այս ու ամենայնիւ Տէր Աբգարը

չքաւականանալով, շարունակ յափշտակում էր իմ այլ ծխականներին, որոնց մասին բազմաթիւ պաշտօնական թուահամարներով խնդիրներ ունեմ տուած թէ գործակալին և թէ կոնսիստորին, որոնցից վերջինը Բալախանում բնակւող Գեղամ Գալստեանցի և իւր հարսնացուի պսակադրութիւնը ինձնից յափշտակելու համար էր, չնայած որ նոյն իսկ գործակալը իմ բողոքը իրաւացի համարելով, կարգադրել էր Տէր Աբգարին հրաժարուել իմ ծխականների պսակը կատարելուց, իսկ Տէր Աբգարը չէր լսել գործակալին, այդ այն ժամանակ էր, երբ երկրաշարժից Շամախին կործանուել էր և կոնսիստորի անդամ Տաճատ քահանան այս յափշտակութեան անցքից մի շաբաթ յետոյ եկել էր Բագու՝ կոնսիստորը Շամախուց Բագու փոխադրելու համար Բագուի քահանայից հետ խորհրդակցելու, որին աւելացնում են և մի այլ խորհուրդ, թէ Տէր Տաճատը ինչ ծուխ պիտի ունենայ կոնսիստորի հետ Բագու փոխադրուելու հարմար. այդ առթիւ Գեղամ Գալստեանցի մասին Տէր Աբգարի դէմ իմ տուած բողոքը թողնել տուին առանց հետևանքի գործակալի արխիւում, իսկ Տէր Աբգարը այդ մասին բողոք ներկայացրեց. կոնսիստորը փութանակի քննիչ նշանակեց կոնսիստորի անդամ Տաճատ քահանային, որ հէնց Բագւումն էր և դիտաւորուած բողոք է սարքել տալիս ինձ դէմ, դարան

մտած՝ անմեղիս որպէս զոհ որսալ իրա համար տեղ պատրաստելու, այլ և չնայած որ Շամախին կործանուած է գլուխ գնելու տեղ չկայ. Նոյն իսկ Տէր Աբգարի դէմ գրուած խնդիրները մեկ մեկու վրա դիզուած՝ ազատ ժամերում ոչ մէկին չեն պատասխանել, իսկ այժմ ամենայն Հայոց կաթուղիկոսի սրբազան կոնդակի հակառակ, որով արգելուած էր. Շամախու թեմին ինձ վերաբերեալ գործ քննելու, այլ արտաքոյ թեմից պիտի լինի քննիչ, բայց կամակոր Կոնսիստորեայն այդ բանի մէջ հակառակ Հայրապետի հրամանին վարուեցաւ Բագուի քահանայից ծրագիրը իրագործելու համար։ Քննիչ Տէր Տաճատը ձևակերպում է ինձնից գաղտնի քննութիւնը. դիտաւորուած սարքում են անորոշ ժամանակաւ ինձ Սևան աքսորելու, քննիչ Տաճատ քահանան որպէս դատաւոր իւր անօրէն վճիռը ներկայացնում է Սինոդի հաստատութեանը, իսկ Սինոդը փոխելով այդ վճիռը որոշում է մի ամիս ժամանակ։ Բագուի քահանայութիւնը և Տէր Տաճատը, տեսնում են թէ այդ կարճ ժամանակում չեն կարող իմ ծխականներիս յեղաշրջել ինձ դէմ։ Սկսում են նորէն այնպիսի ամբաստանագիր կազմել, որ նախ հայ ազգին ատելի դառնամ, ապա կարգալուծ անելով աքսորել տան «Կամչատկա»։

Ամբաստանութեան ծրագիրը կազմում են՝ որ ճեմարանավարդ Ներսէս քահանայ Տէր Կա-

րապետեանը իրա կողմից ինձ դէմ յօրինէ ամ-
բաստանագիրը, Տէր Աբգարին թողել են չէզոք,
որովհետև իր խնամի Ենօքը պէտի յերիւրած
յանցանքը հաստատէր՝ իսկ միացեալ քահանայից
կէս մասը վիճակահանութեամբ Տէր Ներսէսի
բողոքագրին պիտի ստորագրուէին իբրև վկայ։
Յանցանքի իմաստը այս էր որպէս. թէ օգոստոսի
1-ին գիշերուայ ժամի 2-ին մի ռուս գիմնազիստ
տղայի բռնաբարել եմ Պարապետում և այդ
միջոցում վրայ է հասել ոստիկանապետի օգնա-
կան Կերասենկօն, իսկ ես փախուստ տալով
մտել եմ յիշեալ գինեվաճառ Ենօքի խանութը,
որտեղ և եղել է Լևոն Խաչոյեանը և այդ եր-
կու մարդոց միջոցով Կերասինկօյին կաշառել եմ,
որ գործը ծածկել է. 4 քահանայից ստորագրած
ամբաստանագիրը ներկայացնում են Կոնսիստոր,
որ նկատի ունենալով, թէ կաթուղիկոսի Կոնդա-
կի հակառակ Տէր Տաճատի արած քննութիւնը
Սինոդը արդէն յարգել էր, բանի տեղ չդնելով
այդ մասին իմ բազմադիմի բողոքագիրը, այլ և
ըմբոստութիւն համարելով կրկնապատկել էր իմ
պատիժը։ Այդ առիթով խրախուսուած այժմ
էլ այդ քրէական գործի համար քահանայ
Գեղամեանցին է քննիչ նշանակում. չնայ-
ած, որ Տէր Եղիշէի հետ իմ ունեցած դա-
տը թէ Կոնսիստորի և թէ Սինոդի ատեան-
ներում քնացրած է առանց ուևիցէ պա-

տասխանի։ Բոգուի քահանայութիւնը իւր բնածիր շնորհքը ցոյց տալով և ամբողջ քաղաքում թմբկահարելով, իրանց սուր մտքի զագիր ծընունդը դարձնում են որպէս իրական ճշմարտութիւն հասարակութեան մէջ ինձ խայտառակելու համար։ Ժողովուրդը ինձանից հարցնում է. „այս ինչ բան է, որ ամբողջ քահանայութիւնը քեզ համար խօսում է այդ ամօթաբեր արարքը“։ Ես որ ոչինչ չգիտեմ, ինչ կարող եմ պատասխանել։ Դիմում եմ Եղիշէ քահանայ Գեղամեանցին, հարցնում եմ. այս ինչ բան է, ժողովուրդը ինձ ասում է որ ամբողջ քահանայութիւնը ասում են թէ Տէր Ոսկանեանցին կարգալուծ պիտի անեն գիշերուայ ժամի 2-ին Պարապետում ռուս ուսանող տղային բռնաբարելու համար, Գեղամեանցը ուրանում է, որ ինքը ոչինչ չի իմանում այդ մասին, բայց մտնում եմ եկեղեցին, տեսնում խորանում Տէր Ներսէսը Տէր Աբգարի հետ կռւում է, արտասանելով այսպիսի խօսքեր. „տղատ մեռնի. այժմ Տէր Ոսկանեանցը ինձ կարգալուծ անել տալով, աքսորել էլ կտայ. քահանայ, խնամի Ենօքը ցոյց է տուել, որ ինքը ոչինչ չի տեսել և չի լսել այդպիսի բան, մանաւանդ ու իւր խանութը ինչպէս իմիշքի խանութ փակում է ժամի 7-ին. Տէր Ոսկանեանցը գիշերուայ ժամի 2-ին ոնց կարող էր մտնել այդ փակ խանութը“. իսկ Տէր Աբգարը ասաց. „մի վախիլ, ես բանը էնպէս

կասկածեմ, որ Տէր Ոսկանեանցը կամչատկից էլ դէնը կգնայ"։ Այս խօսքերը լսելուն պէս յետ դարձայ Տէր Եղիշէի մօտ, զայրացած ասացի.— Դուք, որ քննիչ էք այդ տեսակ սարքովի լրբու- թեան գործին, ինչի՞ էք ուրանում, ինձանից ին- չի՞ էք թաքցնում. Տէր Ներսէսը Տէր Արգարի հետը կռւում էր խորանում յիշեալ խօսքերը ասելով, „թէ, բոլոր պատասխանատուութիւնը ընկնում է ինձ վրայ, որովհետև խնդիրը ինձ էք յօրինել տւել այն էլ իմ անունով"։ Տէր Եղիշէն ներողութիւն խնդրելով ասաւ. ես ուզում էի գործը փակել տալ, որ դու չիմանաս հիմա, որ իմացել ես, դու էլ բացատրութիւն տուր այդ մասին. ես խնդրեցի, որ նախ Տէր Ներսէսի խնդիրը կարդամ, տեսնեմ ինչ է գրել, որ այնպէս սարսափում է նա, և ստորագրող քահա- նայքը ովքեր են։ Գեղամեանցը ասաց. նախ իմ հարցին պատասխանիր և ապա բոլոր գործը կարդայ, որովհետև քննութեան օրէնքը այսպէս է պահանջում, ստիպւած էի քննիչ Գեղամեանցի հարցերին պատասխանել, որ գործի պատճէնն էլ ստանամ։ Ասածս գրեցի և ստորագրեցի, ա- պա տւեց գործը. նախ կարդացի Տէր Ներսէսի խնդիրը. և Ենօքի տւած բացատրութիւնը, որ ասում է.—Ես այդ մասին ոչինչ չգիտեմ և ոչինչ չեմ տեսել, որովհետև իմ խանութը փակում է ժամի 7-ին և ես ծառայիս հետ գնում եմ

տուն։ Իսկ խնդրին ստորագրող 4 քահանային էլ իրանց գործքի համապատասխան մի քանի փառաւոր հայհոյական և նախատական խօսքեր էր ասել ու ստորագրել։ Ոստիկանապետի օգնական Կերասինկօյի բացատրութիւնը ռուսերէն էր գրած, դրա համար էլ չկարացայ կարդալ։ Երրորդ վկայ Լևոն Խաչայեանից դեռ չէր առնուած բացատրութիւն, և կարդացի Տէր Արսէն Քիւրքճեանի հէնց նոյն օրը տրուած յայտարարութիւնը, որի իմաստն այս է. թէ ինքը այդ գործում խառնուել և խնդրին ստորագրել է Տէր Աբգարի ասածներին հաւատալով, և որովհետև Տէր Աբգարի ասածները սուտ են և միայն զըրպարտութիւն, ուստի խնդրում է ստորագրութիւնը օրինական չը համարի այդ գործում։ Ապա խնդրում եմ քննիչ Եղիշէ քահանայ Գեղամեանցին տալ ինձ գործի պատճէնը. իսկ քննիչը ասում է.—Լևոն Խաչայեանի բացատրութիւնն առնելուց յետոյ կստանանք դուք գրաւոր Ձեր պահանջած պատճէնը։ Ես յայտարարութիւնս ներկայացնում եմ քննիչ Գեղամեանցին, իսկ նա ասում է։—Լևոնը չի գալիս բացատրութիւն տալու, ստիպուած ոստիկանութեան միջոցով եմ պահանջում բացատրութիւն. այսպէս քննիչ Գեղամեանցը իրեն յատուկ բնական ձիրք դառած խաբեբայութեամբ բաւական ժամանակ ինձ խաղացնելուց յետոյ ասում է.—Կոնսիստորը գործը տարել

է, և յայտնել է, որ պատճէնը ինքը կտայ. դիմում եմ Կոնսիստոր, ուր յայտնում են թէ գործը արդէն Սինօդումն է. պատճէն չեն կարող տալ։ Դիմում եմ Սինօդ. պատասխան չեն տալիս. կըրկնում եմ խնդիրներս, ըմբոստ են անուանում։ Այս ամենը անիրաւութիւն գործող Բագւայ քահանայութիւնը թոյլ է տալիս իրան «Մշակ» լրագրի № 173 համարում հրատարակել թէ իրանք անմեղ են։ Իմ լկտի վարմունքիս համար Կոնսիստորը և Սինօդն պատժել են ինձ. արդեօք ո՞վ է լկտին, ես թէ այսքան անիրաւութիւն գործող Բագւի քահանայութիւնը և նրանց կամակից Կոնսիստորի և Սինօդի ատեանների վճիռ տուող անդամները։ Եթէ ես արւագէտ էի ինչի՞ ինձ կարգալուծ չարին. իսկ եթէ անմեղ էի, ինչի նոյն պատժին չենթարկեցին ինձ անմեղիս զրպարտող ու խայտառակող սրիկաներին։

Վրա հասաւ հայ-թուրքական ընդհարման արհաւիրքը, որի ժամանակ Բագւի քահանայութեան կազմը իրենց բնածիր յատկութեամբ մորփէական քնով քնած, միայն իրանց անձն ու գոյքն էին թագցնում և պաշտպանում։ Իսկ թրքաց թաղերի խորքերում հրդեհի ու խժդժութեան զոհ գնացող հայ ժողովուրդի մասին ոչ ոք չէր մտածում. միայն ես, անբարիշտ, յանդուգն ու դատապարտելի Տէր Ոսկանեանցս էի, որ կարկտի պէս տեղացող գնդակների սարսափներն արհա-

մարելով՝ Թրքաց Թաղերի խորքերում սրի ու հրդեհի մատնուած հայ ընտանիքներն ազատում էի։ Թուրք խուժանի ձեռքով հրդեհուած Հայոց եկեղեցին և եկեղեցու պատկանելիքերն եմ ազատում իմ ազդու խրատական խորհուրդներով ու յորդորներով նոյն իսկ հրդեհող Թուրք խուժանի ձեռքով։ Այս մասին իմ վերջին աղքատ կոպեկներս ծախսելուց յետոյ էլ, պարսից հիւպատոսի օգնականից եմ փող պարտք անում Թրքաց Թաղում հրդեհից ազատուած եկեղեցու սրբութեան անօթներն ու ոսկեղէն և արծաթեղէններն, կահ կարասիքներն տեղափոխելու համար ծախսում, այս ամենի մասին խնդրում եմ ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ գանձապահ պ. Մինաս Կաճկաճեանին հանդէս կանչէք, և դու պ. Կաճկաճեան, ձեռքդ խղճիդ դիր, քու որդոց արևով եմ քեզ երդւեցնում։ Իմ կրկնակի խընդիրներին ինչով պատասխանեցիր։ Դու, որ ճիշտ իմանում էիր, որ ես արդէն երկու անգամ Թալանւել էի, երեխայքս էլ ամարանոցից վերադառնալուս ճանապահին էին Թալանւել. այս ամենը դու յայտնապէս տեսնում էիր ինչպէս քո ձեռքիդ մատերը. բայց և այնպէս չկամեցար գոնէ պարսիկ պաշտօնեայից առածս չնչին գումարը վճարել։

Իսկ Տէր Աբգարը, որ արհաւիրքի բոլոր ժամանակներ փախած իւր Թանկագին կեանքն

էր պահպանում, խաղաղութեան պայմանները կայանալուց, հանգստութիւն տիրելուց յետոյ է գալիս։ Երբ նահատակների դիակներից անծանօթներին չէր թաղել, որոշած պահելով, գուցէ վերջը լինեն ճանաչողներ, որ անունները ճիշտ չափաբերական տումարներում արձանագրեմ ապագայում դժուարութիւնների չի հանդիպելու համար։ Եւ ահա այդ վերջին օրն է, երբ գերեզմանատան մի քանի ծանօթների դիակները թաղելու ժամանակ գալիս է Տէր Աբգարը նկարիչ Ռոստոմեանի հետ, նկարել տալու յիշեալ անծանօթ դիակներին իր հետ այդ նկարուելուն համար 46 ր. փող է առնում պարոն Կաճկաճեանից, ինչպէս գրւած է եկեղեցւոյ տարեկան հաշւում։ Թէ պարոն Կաճկաճեանը ինչի համար է եկեղեցապատկան այդ գումարը տուել Տէր Աբգարին, յուսով եմ, որ բարեխիղճ քննիչը կը լուսաբանէ։ Արհաւիրքի ժամանակ քաղաքական իշխանութիւնը տեսնելով թէ ինչպէս հրդեհւած եկեղեցին ու եկեղեցապատկան շինութիւնները ազատեցի նոյն իսկ հրդեհող թուրք խուժանի ձեռքով։ Թէ ինչպէս գիշեր ցերեկ անդադար գիղօրայքում Բալախանի կայարաններում ու քաղաքում հաշտութեան թափօրներում թուրք, ուրիշ համայնք իմ տւած քարոզներն էին խաղաղութեան ձայն հնչեցնում, գեներալ Ֆադէեւը իբրև վարձատրութիւն պարգև է ներկայացնում

ինձ բարձրագոյն իշխանութեանը, իսկ ես բարւոք չհամարելով հոգևորականութեան կողմից միայն իմ պարգևատրուիլը քաղաքական իշխանութիւնից, աշխատում եմ Ցաղէևի մօտ Ջաւէն վարդապետին էլ ներկայացնել տալ, թէ ինչպէս և ինչ եղանակով եմ աշխատել որդէն վարդապետին էլ յայտնի է: Բայց փոքրոգի ու անարգ վարդապետ Ջաւէնը երախտաւոր քահանային իրա հետ հաւասար պարգևատրուիլը չկամենալով, գաղտնի բանսարկութիւններով Բարձրագոյն Իշխանութեան՝ առաջ զրպարտում է ինձ որպէս անարժան պարգևատրութեան.

Այս մասին Ցաղէևը իմ և Ջաւէն վարդապետի ներկայութեամբ յանդիմանեց Թեմական առաջնորդ Անանեա արք եպիսկոպոսին. և, ինչպէս յայտնի է Ջաւէն վարդապետին, ապա թելադրեց ինձ բողոքել փոխարքային: Իսկ ես այն հոգևորականը չէի, որ պատուանշանի համար դիմէի փոխարքային, այլ տեսնելով թէ անմեղ տեղս զրպարտուած եմ քաղաքական իշխանութեան առաջ պաշտօնական յայտարարութեամբ նոյն գործակալի միջոցաւ դիմում եմ ս. Սինօդին տալ ինձ այդ մասին եղած գրագրութեան պատճէնը ազգային դատաւորներով պատիւ պահանջելու համար: Իմ ցաւը պարգևը չէ, որ այս տողերը գրեցի, այլ այն, որ ցոյց տամ վարդապետի սև ու վատթար լինելը:

Սրբազան առաջնորդին Շամախի ճանապարհելուց յետոյ, գործակալը իւր գիւանի ատեանը փոխադրում է շինութեան մի խուլ անկիւնը ժողովի պատրւակով. ինձ էլ հրաւիրում դիտաւորուած ինձ սպանելու համար—այդ դէպքի որպիսի եղանակաւ գործադրւելը 1906 թիւ 31-ին հոկտեմբերի №182, կոնսիստորին ներկայացրածս յայտարարութեամբ լուսաբանուած է, այս դէպքն անյաջող անցնելուց յետոյ, ոխրացուներին են գրգռում քահանայական խորհրդանոցում յարձակւել վրաս ու կատար ածել այն դիտաւորութիւնը, որը գործակալի դիւանատանը անյաջող էր անցել։ Այս դէպքի որպիսի եղանակաւ գործադրւիլն էլ լուսաբանել է 1906 թ. դեկտեմբերի 22-ին № 225 գործակալի միջոցիւ կոնսիստորին ներկայացրած յայտարարութիւնս։

Տեսնելով թէ Բագւի քահանայութիւնը ինձ դէմ դարան մտած՝ զանազան աններելի և նոյն իսկ ճիւաղական միջոցներ գործ դնելով, արդէն իրանց կամակից են դարձրել թէ կոնսիստորի կազմը թէ Սինոդի ժէնտէլմէն մասը և թէ Բագւի 24 աչքի ընկնող իրանց ծխական միլիոնատէրերին, ես միայն բաւական էի համարում երբեմն լռել և երբեմն էլ բողոքել, որով ըմբոստ անուն միայն ժառանգեցի, սակայն միայն գորովագութ Հայրապետ Հայրիկն էր միմիայն գործի խորը դիտում ու արժանի տնօրէնութիւն անում,

որ ինձ համար առանց քննութեան գործ չվճռուի և քննիչը Թեմից չի լինի։ Եւ իբրև տրիտուր իմ քաշած անօրինակ զրկանքին ու կրածս տառապանքներին պարգևատրում էր Նուաստիս խաչով կամերլաֆկայով ու աւագքահանայութեամբ։ Բայց թէ ինչպէս Շամախոյ կոնսիստորեայն կամակորութեամբ լցուած արհամարեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի այդ սուրբ պատուէրը-սրբատառ կոնդակը, Աբգար քահանայ Տէր-Ցարութիւնեանցի քահանայական կարգին հակառակ իմ ծխականներին յափշտակելու և ինձ անպատուելու մասին 2 ամսուայ ընթացքում պաշտօնական թուահամարներով և օրինապահանջ մարկաներով տուած խնդիրներս ան պատասխան թողեց. իսկ կոնսիստորի անդամ Տաճատ քահանայ Մարաղեանցի դրդմամբ Աբգար քահանայի սուտ ու սարքովի մինչև անքամ աննշան հարցի վերաբերեալ յայտարարութիւնը քննութեան առաւ, որից յայտնապէս երևում էր, որ յափշտակողը ինքը Տէր-Յարութիւնեանց էր և ոչ թէ ես, ամէն ուրէք անմեղ տեղը տուժող Տէր-Ոսկանեանցս։ Վրէժխնդրութեամբ լցուած կոնսիստորի ատեանը հակառակ կաթուղիկոսի կարգադրութեան կոնսիստորի անդամ Տաճատ քահանայ Մարաղեանցին քննիչ նշանակեց, որը հենց ինքն էր սարքել այդ խարդախ ամբաստանագիրը և որպէս քննիչ տարրական օրէնքի հակառակ ինձնից գաղտնի ձևակերպում է այդ

քննութիւնը իր ուզածի համաձայն, և որպէս կոնսիստորիայի անդամ այնտեղ էլ վճիռ է կայացնում որպէս դատաւոր ու ներկայացնում Սինոդին ի հաստատութիւն. իսկ Սինոդը իւր օրագրի մէջ ասում է. „Տէր-Ոսկանեանցն հանդէպ մեղադրանաց ոչինչ չի պատասխանել“։ Ի՞նչ կարող էի պատասխանել, որ քննութեանը ներկայ չեմ եղել և ինձ մեղադրող վկայի ոչ ձայնն եմ լսել և ոչ երեսը տեսել. այլ միայն Սինոդից հաստատած պատիժ կրելու հրաման եմ ստանում ու լսում, և որի մասին իմ օրինական բողոքը համարւում է ըմբոստութիւն, և ինձ ազգի ազգի զեղծումներ գործող, որի համար նորէն հրամայում են կրել կրկնակի պատիժ։

Սիրելի ընթերցող, եթէ կոնսիստորի և Սինոդի անդամները արդարութիւն և օրէնք ճանաչէին, կաթուղիկոսի կարգադրութեան հակառակ չէին վարւի։ Բայց ինչո՞ւ տարրական օրէնքի հակառակ քննութիւնը մեղադրեալից գաղտնի են կատարում և մինչև անգամ մեղադրեալը չէ իմանում, թէ իրա համար քննութիւն են կատարում թէ ոչ և ինչո՞ւ առանց մեղադրեալի ներկայութեանը և իմանալուն նորէն գաղտնի վճիռ են կայացնում և ի՞նչ է պատճառը, որ Սինոդը այդպիսի անիրաւացի գաղտնի կայացած վճիռն *էլ գաղտնի հաստատում է և միայն իւր հաստատման պատժական հրամանը արձակում

և հրամայում է անմեղ մարդուն պատիժ կրել. եթէ այդ անմեղ զոհը արդարադատութիւն է հայցում, նրան ըմբոստ առարկելով, պատիժն են կըրկնապատկում։ Արդեօք ի՞նչ է պատճառը որ կըրկնապատիկ վճիռներով փող եմ ներկայացնում պատճէն ստանալու, բայց փողին են ստացական տալիս, իսկ պահանջած պատճէնը՝ ոչ։ Ասացէք խնդրեմ, այս ամենից յետոյ ես, անիրաւացի դատապարտեալս, ինչպէս վերաբերվեմ դէպի Ձեզ՝ իշխանաւորներիդ. բարեհաճեցէք ասել, այսպիսի դէպքում ի՞նչ անուն կարելի է տալ Ձեզ՝ անարդար իշխանաւորներիդ։ Արդեօք սրանից էլ աւելի փաստ է հարկաւոր, որ Կոնսիստորի և Սինոդի ատեաններում ինձ դէմ գործադրած ապօրինի վարմունքները ապացուցանէ։

Եթէ Տաճատ քահանայ Մարաղեանցի կատարած քննութեան գործը տեսնէք թէ որպիսի աֆերիստութեամբ է Տէր-Աբգարի ինձ դէմ գործած աւազակաբարոյ գործողութիւնը յեղաշրջել ու փոխակերպել է, պիտի զարմանաք այդպիսի մի սատանային վայել հրէշութեան վերայ, որ գործեց Մարաղեանցը, որ դեռ ևս դարձեալ Աստծոյ տան սպասաւորի անունն է կրում և ոչ իր գործի համապատասխան անունը —այսինքն լիմբոսի սպասարկու։

Բացի քահանայութիւնը իրանց վաստակած կամակիցներով առաջնորդ Եսայի եպիսկո-

պոսի միջոցով՝ նոյնպէս հակառակ կաթուղիկոսի կարգադրութեան, գաղտնի քննութեամբ և ապօրինի վճռով նորէն 4 ամիս ինձ պատժել ուին։ Օրինական խնդիրներով պահանջածս պատճէնները չտուին ոչ բնութեանը և ոչ վճռի վերաքննեալը։

Չեմ մոռանալ այն անկեղծ վեհանձնութիւնը, որ այս միջոցում սրբազան առաջնորդ Անանեայ արքեպիսկոպոսը ունեցաւ ինձ վերաբերեալ, չլսեց Բագւի քահանայութեան աւէ կոսէներին մի առ ժամանակ ազատ շունչ քաշելով հովուում էի ինձ նման տարաբախտ, չարքաշ բանտոր ծխականներիս. բայց վերջ ի վերջոյ Բագւի քահանայութիւնը ինչ ինչ միջոցներ գործ դրեց սրբազան հօրը գրաւեց իւր կողմը։ Այստեղ օրինակի համար մի անեկդոտ պիտի պատմեմ. սրբակեաց եպիսկոպոսի մէկը պատարագ էր մատուցանում. յանկարծ տեսնում է թէ երգեցողութեան եղանակը փոխել են պարելու եղանակի. երեսը դարձրած՝ կամենում էր «խաղաղութիւն ամենեցուն» ասելու իւր բնական ձեւը, բայց չկարողացաւ, այլ ճարահատեալ սկսեց նրանց եղանակով պարելով ասել. «խա՜ղա՜ղո՜ւթի՜ւն ա՜մե՜նե՜ցո՜ւն։

Վերջապէս տեսնելով, թէ Բագւի քահանայութեան թշնամական դիրքը քանի գնում, այնքան սաստկանում է, որոշեցի այդ կողմից

առանձնանալ. մի ընդարձակ խնդրագրով դիմեցի սրբազան առաջնորդ Անանեա արքեպիսկոպոսին, բացատրել, որ Բաղւի քահանայութեան իմ դէմ լարուած դրութիւնը, իմ ընտանեկան կեանքի պայմանները և այն, թէ ինչպէս պիտի ունենամ ազատ միջոց, որ կարողանամ Բալախանում եկեղեցի կառուցանել տալ, որ միանգամից առանձնանալով, այլ ևս գործ չունենամ Բաղւի քահանայութեան հետ, սակայն այս դէպքումն էլ Բաղւի քահանայութիւնը հանգիստ չի մնաց, նկատի ունենալով, որ կարող եմ անդրկասպեան երկրում ունեցածս ծրագրով գործել և առ Բալախանի, որ իրանց շահերին վնաս կբերի, դրա համար էլ Եփրեմ վարդապետի միջնորդութեամբ չթողեցին, որ սրբազան առաջնորդը կատարէր իմ խնդիրը իր ժամանակին:

Բաագւի քահանայութիւնը նկատի ունենալով, որ կարող եմ բարձրագոյն իշխանութեան կարգադրութեամբ իմ ծրագիրը յառաջ գնել— այսինքն եղբօրս որդի ճեմարանավարդ Տէր Արշակին ինձ օգնական բերել ու ազատ լինելով եկեղեցոյ շինութեան գործը Բալախանում շուտով գլուխ բերեմ, այս դէպքում էլ գործակալ Մատթէոս վարդապետի միջնորդութեամբ են աշխատում կաթողիկոսի դիւանումն յօրինել մի շօջաբերական կարգադրութիւն, որ այլ ևս մեկ թեմից միւս թեմը քահանայ չի փոխադրւի. իսկ

այս կարգադրութիւնը այլ թեմերում գոյութիւն չունի, որովհետև Բագուի քահանայութեան կազմի պէս կամակոր քահանայութեան կազմ չկայ։

Տեսնելով թէ այլեւս հնարաւորութիւն չունեմ Բագուի քահանայութեան կազմի մէջ որևիցէ քահանայավայել գործնէութեան ընթացք ունենալ, գործակալ Զաւէն վարդապետի և սրբազան առաջնորդի խորհուրդով դիմեցի նաւթարդիւնաբերութեան խորհուրդի կառավարիչ պարոն Դաստակեանցին և խնդրեցի Բալախանւոյ Հայոց եկեղեցւոյ կառուցանելու հարցի մասին տեղեկութիւն, իսկ պարոն Դաստակեանցը յայտնեց, որ ես դիմեմ իրա օգնական պ. Բէկզադեանցին։ Բէկզադեանցն էլ ասաց, թէ այդ մասին իրանցում ոչ մի գրաւոր բան չկայ, միայն եղել են խօսակցութիւններ և մնացել են անկատար։ Դարձեալ Զաւէն վարդապետի խորհրդով գրաւոր դիմում են Իմուշչեստվեննի պալատի կառավարչին, որ յայտնում է ինձ նախարարութեան վճիռը Բալախանում Հայոց եկեղեցւոյ կառուցման համար յատկացրուած են № 334, 335, 336, հողաբաժինները, ուստի նորէն խնդրագրով դիմում եմ պալատի կառավարչին, որ եկեղեցւոյ, ուսումնարանի, արհեստանոցի համար հարկաւոր քանակութեամբ հողաբաժին որոշեն իրա սահմաններում՝ շինութեան գործը շարունակելու. իսկ կառավարիչը պահանջում է շինութեանց յատա-

կազմին ու ծրագիրը, որ ըստ այնմ որոշւի շինութեանց համար հարկաւոր գետնի քանակութիւնը։ Այս մասին նորէն դիմում եմ պ. Բէկզադեանցին յիշեալ ծրագիրը պատրաստելուն համար, իսկ Բէկզադեանցը դժւարանում է կամեցած ծրագիրները կազմել տալու, առարկելով թէ այդ քանակութեամբ գետին չեն տալ մեզ, ծրագրի աշխատանքը իզուր կկորչի։ Յետ որոյ դիմում եմ ուրիշ ինժինէրի իմ կամեցած քանակութեամբ յատակագիծ և ծրագիր կազմել տալիս. Նորէն խնդրագրով ներկայացնում պալատի կառավարչին և նա նշանակում է պետական երկրաչափին, որին իմ ծախսով տանում եմ Բալախանի համաձայն ծրագրի պահանջի քանակութեան գետինը չափում է և սահմանները որոշում։ Դարձեալ դիմում եմ պարոն Բէկզադեանցին և խնդրում կարգադրել, հիմնարկութեանց համար որոշւած գետինը նախապէս տախտակով ցանկապատել և անմիջապէս պատրաստել այնպիսի մի ամբար, որ առ այժմ ծառայէ որպէս բնակարան հայ Թրքական կոտորածի առթիւ գիւղերից եկած՝ փողոցներում անօթի մնացած բանւորներին, որ այդտեղ ժողովենք, գործիքներ տանք բարահանքերում շինութեանց համար քար պատրաստելու, յաջորդաբար բոլոր գործարաններում, որ բանւորի կարիք ունեցողն այդ տեղից բանւոր վերցնէ, ապագայում էլ այդ ամբարը

կծառայ՝ որպէս մթերանոց եկեղեցւոյ, ուսումնարանի, արհեստանոցի իրեղէնների համար։ Արոչւեց, որ ես գնամ Բալախանի ինժինէր Խիզանեանցի հետ խորհելու, իսկ Խիզանեանցը յայտնեց, որ սպասենք, շուտով պիտի կայանայ ինժինէրական ժողով պասեօլկա կառուցանելու համար և այդ հարցը այն ժողովում կվերջացնենք, ես էլ սպասում եմ մինչի այսօր։

Իսկ մերկ, անօթի, անտուն, անգործ բանւորը չէր կարող սպասել. Նրանց կենսական կարիքները ստիպեցին թողնել այն ամենը, ինչ որ աշխատասէր հայ երիտասարդին բնածին շնորհքն էր այն է արդար վաստակով հաց ուտելը որին նրանք սիրահար են, պատւով պահպանել իւրեանց գերդաստանը, իրանց քաջառողջութեամբ ամենուրեք իւր ազգին պատւար լինելը՝ այս խանգավառ յուսով Բագուն յաճախողները ինչ տեսան մեր աղնիւ ճոռոմաբաններից,—ոչ ինչ, միայն թէ ինչպէս նոքա զբաղւած են իրանց յաճախելու երջանկավայրերը ցքեղագարդ, հագնւել ու... միայն և միայն քէֆ անել ուրիշին զրկելով առանց ամօթի։ Ուստի յուսահատութիւնից ստիպւեցան, դիմեցին օրիկայութեան անախորժ արհեստին, որոնց դառն պտուղներն ճաշակում ենք և պիտի դեռ երկար տարիներ ճաշակենք եթէ չդառնանք, չասենք թէ լաւ է ուշ քան երբէք։

Աւելորդ չեմ համարում այստեղ յիշել, որ բանւորութեան ժողովելու նպատակս երկու էր. առաջինը՝ ազատւած լինելով ներկայ դառն կեանքի ճնշող հանգամանքներից, հնարաւորութիւն կտրւեր նրանց հեռու մնալ ապագայի գալիք անախորժ և չարաբաստիկ փորձանքներից, իսկ երկրորդը այն էր, որ ունեմ բանւորների վերաբերեալ մի ծրագիր, որ կազմել եմ 1874 թւին Մասկւաբնակ աւագ Թաւրիզեանի աջակցութեամբ, որը բաղկացած է 48 պարբերութիւնից: Այդ մասին ես վաղաժամ համարեցի յայտնել պ. Բէկզադեանցին, իսկ իմ ծխականներին քանիցս յիշել եմ ծրագրի բովանդակութիւնը, որ նման է Արտելների համար կազմած ծրագրերին, որի մասին գեներալ նահանգապետ Ֆադէևին խնդրել եմ և նա ուրախութեամբ յարգեց իմ խնդիրը խոստացաւ հաստատել այդ ծրագիրը, համաձայն որոյ վերջին անգամ մի բազմամբոխ հանդէսում առաջարկեցի բանւորութեանը կազմել մասնաժողով ծրագրի բովանդակութիւնը վերաքննելու ժամանակի կարիքների համապատասխան ու նորէն մշակելու, որ ներկայացնէի Ֆադէևին ի հաստատութիւն, և այդ հանդիսին ներկայ էր Յովհաննէս քահանայ Տէր-Յարութիւնեանցը. և ես ուրախ էի Տէր Հօր ներկայ լինելուն համար, որ ինքը ևս կխրախուսէ այդ ծրագրի փութանակի գլուխ բերելուն, բայց իրա-

կանապէս իմկ արծիքը սխալ էր. Նրա վերաբերեալ։

Եթէ Բագւի քահանայութեան կազմը չլսէր իրանց պարագլուխ եղիշէ քահանայ Գեղամեանցին և սրբազան առաջնորդ Անանեա արքեպիսկոպոսն էլ նոյնպէս չլսէր յիշեալ հերետիկոսին, իմ մտադրութեանս արգելք չդառնային, ես վաղուց հասած կը լինէի իմ բարի նպատակներին, իրագործած կլինէի յիշածս բոլոր ծրագրերը, Բագու յաճախող հայ երիտասարդներն փողոցներում անտէր, անօգնական մնացած չէին մտնել արիկայութեան անախորժ արհեստին, եթէ ես ունենայի ազատ ժամանակ միթէ կարիք կունենայի նաւթարդիւնաբերութեան խորհուրդին դիմելու և երկար գնալ գալով գործելու տեղ իզուր ժամանակը վատնելու։ Միթէ Բալախանու վեց հայ միլիոնների տէր գործարանատէրերի միջոցին չէի կարող կառուցանել տալ եկեղեցին, ուսումնարանը, արհեստանոցը համաձայն այն ծրագրին, որին միշտ անդադար բացատրել եմ իմ ժողովուրդին։ Իմ սիրելի ժողովուրդ, այս մասին ես վերջին անգամ մի ընդարձակ խնդրագրով դիմել եմ սրբազան առաջնորդ Անանեա արքեպիսկոպոսին, աղերսելով, որ խոչնդոտ չհանդիսանայ, ազատ թողնէ ինձ իմ բարի ծրագիրը իրագործելու, բայց նա անգթաբար իմ խնդիրը յանձնում է իմ թշնամիներիս՝ Բագւի քահանայութեանը, երևի այն նպատակով, որ

Նոքա աւելի կտրուկ ճանապարհով գիտեն կտրել առաջս, և ինչպէս էլ կտրեցին ու աքսորի մատնեցին ինձ։

Ես համոզուած եմ, որ այդ քահանայ եղեռնագործները նոյն իսկ թեմական իշխանութեան պատուէրն են կատարում եթէ այդպէս չլինէր իմ նրանց դէմ բողոքելս ըմբոստութիւն ու ազգի, ազգի զեղծումներ չէր համարել այդ իշխանութիւնը և որի համար էլ քաղաքական իշխանութեան միջոցաւ չէր ինձ աքսորել Սևան, իմ տունս աւերակ դարձնելով, իմ անմայր զաւակներին իրանց չար կրքերին զոհելով և փողոցային թափառականներ դարձնելով։ Բագւի ուսումնատենչ քահանայութիւնից, Շամախւոյ թեմական առաջնորդից և ս. Սինոդի ժէնտէլմէն կազմից սրանից էլ աւելի գործնէութիւն և քաջագործութիւն պահանջել կարելի չէ։

Իմ սիրելի ժողովուրդ, մեր արդի հոգևոր աշխարհի նշանաբանն այս է. նրա ստորագրեալը եթէ կամենայ Մեծ վարդապետ Փրկչի պատուէրը կատարել—իւր խնամքին յանձնուած ժողովրդի շահերին ծառայել և ոչ հոգևոր աշխարհի անակորոյն ներկայացուցիչներին, ինձ պէս կլինի նորա վիճակն ու բաժինը, որովհետև նոքա ճիշտ գիտեն, որ դուք իրանց հանդէպը համր, խուլ ու կոյր էք։

Ի՞նչ անեմ ո՜վ մարդիկ ուխտադրժութիւնը

*թուլամորթներին վերապահուած սահմանն է, իսկ իմ թշնամիքս էլ անխիղճ ու անգութ եղեռնագործ հրէշներ են.*

*Սիրելի ընթերցող, այս խօսքերս Բագուի քահանայութեան պարագլուխը Եղիշէ ա. քահանայ Գեղամեանցին Տաճատ ա քահանայ Մարաղեանցին և Աբգար քահանայ Տէր-Յարութիւնեանց և Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանցին են վերաբերուած, որովհետև այս լոյս աշխարհում իմ լոյս օրերը դոքա են խաւար գիշեր դարձրել։*

*Ո՞վ Բագուի մարդասէր քահանայութիւն չէ որ արդէն հասել էք Ձեր նպատակին. քայքայեցիք, կործանեցիք տունս. անմայր, անտէր, անպաշտպան զաւակներիս փողոցային թափառականներ դարձրիք, այդ էր ձեր քահանայական պատուի ուխտի երկար տարիների անխոնջ աշխատութիւնը. հիմա ազատ կոչեցէք իմ հասցէին. բժիշկ, բժշկեա զանձն քո։*

*Բագուի քահանայութիւն այդ է ձեր նշանաբանը. „Հարիցուք զհովիւն, ցրուեցին ոչխարք նորին, զի տիրեսցուք նոցա“:*

**Վերջ առաջին մասի**

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

*Պաշտօնական փաստաթղթեր*

### Ա

*Ի* 30 *Նոյեմբերի* 1892 *ամի. Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին Ամենայն Ռուսաց, ի Լուսաւորչական Հայոց Սինոդի սրբոյ էջմիածնի լուան զէկուցումն։*

*...Յետ որոյ սրբազան առաջնորդն ընդ յայտաբարութեան ի* 15-*ըն յունիսի թիւ* 133 *մատուցանելով զբողոքագիր գործակալին Բագուայ Հայոց՝ թէ Տէր-Ոսկանեանց քահանայն անկեալ ընդ քննութեամբ Աստաբաթ քաղաքի առաքեալ է անդ ի Բագու իբրև բանտարկեալ յանցաւոր, որ ընդ երաշխաւորութեամբ բարեկամաց իւրոց կայ և շրջի ի Բագու քաղաքի և ձեռնամուխ լինի ի գործոյն քահանայից, խանգարէ զբարեկարգութիւն եկեղեցեաց և զխաղաղութիւն ժողովուրդաց տեղւոյն, ինքնագլուխ օրհնէ զտունս*

ժողովրդոց և զգերեզմանս նոցին և անպատուեալ է գործակալ աւագ քահանայն, ուստի և խնդրեալ էք առաքել զնա ի Ղուբայ քաղաք, ուր կարեւորութիւն կայ երկրորդ քահանայի։

Առ այս թէպէտ ըստ հրամանաց Սինոդի թոյլ ետ Մեսրովբ քահանային քահանայագործել ի ս. Լուսաւորիչ եկեղեցոյ Բագու քաղաքի, բայց նա մեղադրեալ ի քաղաքական յանցանս ըստ տնօրէնութեան ժանդարմային կառավարութեան եդեալ էր ի բանտի, որ արդ արձակեալ է անտի ընդ երաշխաւորութեամբ, ուստի և ըստ տրամադրութեան 1023 յօդ. քրէական դատաստանագրոյ համարի հրաժարեալ ի պաշտօնէ և մինչ ոչ արդարասցի ի նկատեալ յանցանս, ոչ կարէ մատչիլ ի պաշտօնավարութիւն, և իբրև մերձաւոր հոգևոր իշխանութիւն յիւրմէ կողմանէ վտանգաւոր համարի թոյլ տալ նմա առնել քահանայագործութիւն ի Բագու քաղաքի առաջի աչաց քաղաքական բարձրաստիճան պաշտօնատարանց, որոնց քաջ յայտնի է նա ամենայն գործողութեամբ իւրովք։ *)

Ապա գործակալն եկեղեցեաց Բագու քաղաքի ընդ յայտարարութեան ի 17-ըն հոկտեմբերի անցելոյ թ. 255 մատոյց զբողոքագիր քահա-

---

*) Տեսնում էք ժողովուրդ Հայոց, լսում էք այն խօսքերը թէ ինչ անձնուէր ոստիկանի դեր է կատարում հոգևոր իշխանութիւնը իմ մասին։

նայից Բագու քաղաքի ի տնօրէնութիւն որին, յորում ի միջի այլոց գրեն թէ Տէր-Ոսկանեանց քահանայն յետ կալանաւորութեան յանդըկաս-պեան երկրի աքսորեցաւ ի հայրենի Հադրութ գիւղն իւր, իսկ ի բանդէն Բագւայ արձակեցաւ ընդ երաշխաւորութեամբ Յովսէփայ Թումայեանց և առանց լսելոյ հրամանայ և հեռագրաց ա-ռաջնորդին առնէր քահանայագործութիւն, և զարմանք կալաւ նոցա իբրև յետ խօլերայի հրաման ի ձեռն յայտնեցաւ քահանայ Բագւայ առանց խնդրելոյ ժողովրդեան և քահանայից, զորս խռովէ նա անխաղաղասէր բնաւորու-թեամբ իւրով։

Հրամայեցին, Ծանուցանել առաջնորդին Շամախւոյ դերապատիւ Մեսրովբ արքեպիսկո-պոսի ի ձեռն որոյ և քահանայից Բագու քաղա-քի՝ թէ տնօրէնութիւն Սինոդիս վասն կարգման Մեսրովբ քահանայի Տէր-Ոսկանեանց Բագու քա-ղաքի մնալոց է անփոփոխ, ի նկատ առեալ դժւարին դրութիւն նորա՝ թէ ըստ բարոյա-կանին և թէ ըստ նիւթականին, մինչ ցվերջա-ւորութիւն գործոյն նորա։ Ստորագրել են տեղա-կալն ու սինոդի անդամները. *)

---

*) Այդ գարշելի մատնութեան հանդէպ այսպիսի արդար վճիռ տալ միայն Սեդրակեան եպիսկոպոսը գիտէր

## Բ

Հրաման Սինոդի ս. Էջմիածնի։ Կոնսիստորիային Հայոց Շամախւոյ ի 11-ըն նոյեմբերի 98 ամի № 1994, և ի 30-ն նոյեմբերի 1898 ամի։ Իսկ № 4 յառաջի արարեալ թերթին տեսանի զի անձինք թւով 77 հանգամանօրէն բացատրեն զանարդար վարմունս վերոյ յիշեալ գործակալ Գեղամեանցին, որ ոչ սիրէ ասեն, զՄեսրովբ քահանայն և ջանայ վնասել նմա յամենայն դէպս։ Եւ որպէս ապացոյց գործադրեալ ի վերայ ժողովրդեանն ճնշմանն ի ժամանակի ընտրութեան քահանայից տեղւոյն ի միջի այլոց պատմեն, թէ որպէս պ. կառավարիչն կասպեան ընկերութեան Սամիկոնն Ստեփանեան զրկեաց ի պաշտօնէն զստորագրեալս իւր, որք ցանկային ունել զՄեսրովբ քահանայն։

Տեղեկութեամբ ի գործոց Սինոդիս երևի նախ՝ զի Հադրութեցի քահանայորդի Մարգարէ Տէր-Ոսկանեան, այժմ Տէր-Մեսրովբն, ըստ օրագրոյ կազմելոյ ի 17-ըն ապրիլի 1887 ամի ձեռնադրեալ է քահանայ ի վերոյ Ասխաբաթ, Ղզըլ-արվատ և Մերվ քաղաքաց, երկրորդ զի ըստ առաջադրութեան սորին 7-ըն սեպտեմբերի 1892 ամի թ. 2565 կարգեալ է նա ի Բաղու քաղաքի ի քահանայագործութիւն ցվախճան գոր-

Ծոյն նորա ի մարմնաւոր ատենի։ Երկրորդ ըստ օրագրոյ սորին կազմելոյ ի 21-ըն մարտի 1894 ամի հրամայել էր ի պատճառս դատապարտման հնդամեայ աքսորանաց Մեսրոպը քահանայի ի Տօբօլ գգլոգրութեան վասն կարգման նորա ի քահանայութիւն ժողովրդեան Բագու քաղաքի կարճել։ Հրամայեցին։ Հաստատել ընդմիշտ զՏէր Մեսրոպ քահանայն Տէր-Ոսկանեանց ի վերայ հայ ժողովրդեան Բալախանոյ տալով նմա նաև զհարիւր (100) տուն ծուխս ի հայ ժողովրդոց Բագու քաղաքի, պատուիրելով այսու բաւականանալ և մնալ միաբան ս. Աստուածածին եկեղեցւոյն Բագուայ, ըստ կարգադրութեան Կոնսիստորեայի Հայոց Շամախւոյ, զորմէ ի կատարումն հանել հրաման յղեալ Կոնսիստորեային։ Ստորագրել են կաթողիկոսը և անդամք Սինոդի

## Գ.

Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստծոյ եպիսկոպոսապետ և կաթողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն պատրիարք Համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր եկեղեցւոյ սրբոյ կաթողիկէ Էջմիածնի։

Վիճակային Կոնսիստորեայն Հայոց Շամախւոյ։

Ատեանդ հիմնեալ ի վերայ բողոքանաց գործակալին Բագուայ զրկեալ է քահանայագործութենէ՝ զՄեսրովբ քահանայն Տէր-Ոսկանեանց և վերջինս յաղագս պաշտպանութեան իւրոյ դիմեալ յարդարադատութիւն մեր և Սինոդին բազմաստորագիր համախոսականաւ ծխականաց իւրոյ հակառակ առաջնոյ և վերջնոյն ի վերջին աւուրս եհաս մեզ բողոքագիր մի յառաջաւորացն Բագուայ, որք նոյնպէս խնդրէին հեռացուցանել յինքեանց զՄեսրովբ քահանայն Տէր-Ոսկանեանց:

Առեալ ի նկատ զերկուսին խնդիրսն զայնոսիկ մեղադրական ու պաշտպանողական, մենք ի 19-ըն ամսոյս կոնդակաւ մերով Թ. 1341 պատւիրեցաք Սինոդին թողուլ Մեսրովբ քահանայի առնել քահանայագործութիւն համաձայն որոշման Սինոդին, որ 30 նոյեմբերի 1898 ամի Թ. 1894, որով պատուէր ի վերայ ատեանիդ դնիւր տալ 100 տուն ծուխ ի քաղաքէն Բագուայ և երկրորդ թողուլ ի հովուութիւն նորին զծուխս Բալախանւոյ ուր արեք և իցեն թէ ի քաղաքի և թէ այլուր. երրորդ՝ թողուլ նմա կատարել զօրինակատարութիւնս իւր յայնմ եկեղեցւոյ, ուրանօր ծխականք նորին ցանկան որպէս հերթապահի և չորրորդ՝ նշանակել ընդ փոյթ քննիչ ոմն արտաքոյ ի թեմէն Շամախւոյ յաղագս արարմաց Մեսրովբ քահանայի, որպէս ասեն բողո-

քարկուբս։

Այլ քանզի կարէ յապաղել հրաման Սինոդի՝ մեր սովին կոնդակաւ մերով պատուիրեմք ատենիդ Թողուլ ըստ առաջնոյն Մեսրովբ քահանայի պաշտել զքահանայութիւն իւր համաձայն վերոյիշեալ հրամանաց մերոց մինչ ցաւարտումն գործոյ քննութեան. ուստի և ի յայտ գալ յանցանս նորին և ունի ըստ այնմ դատապարտիլ կամ արդարանալ։

Ի 29-ըն Նոյեմբերի 1899 ամի
և ըստ տոմարիս ՌՅԽԹ. ի հայրապետութեան մերում է ամի Մկրտիչ կաթողիկոս արարատեան Մայր Աթոռ ս. Ամենայն Հայոց Էջմիածնի ի Վաղարշապատ Թ. 1381.

Դ.

Ի վիճակային Կոնսիստորիայն Հայոց Շամախւոյ։

Բագու քաղաքի ս. Լուսաւորիչ եկեղեցոյ միաբան Մեսրովբ քահանայ Տէր-Ոսկանեանից։

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հեռագրով իրաւունք էի խնդրել անձամբ ներկայանալ Կոնսիստորայի ատեանը իմանալու

Կոնսիստորայն, որպիսի եղանակաւ է ինձ յանցաւոր ճանալել Տէր-Աբգարի դիմացը, և թէ յանցաւոր ճանաչելուց ինչի ինձ չէ յայտնել, որ ես իմ անմեղութիւնը օրինական ճանապարհով ներկայացնէի Բարձրագոյն Իշխանութեան կարգադրութեանը, և որ գլխաւորն է խնդրէի տալ ինձ նոյն գործի պատճէնը և խնդրէի որոշել միջոց, որպէս զի ես կարողանամ իմ անմեղութիւնը ապացուցանող փաստերով դիմել Նորին ս օծութեան Վեհափառ կաթողիկոսին՝ Սինոդի այդ կարգադրութիւնը փոխելու համար և որի համար այսու ամենախոնարհաբար խնդրում եմ ուշադրութեան արժանի առնէք իմ այս խնդիրը, շնորհէք ինձ խնդրածս պատճէնը և նոյնպէս կարգադրէք քաղաքիս գործակալին հեռագրով, որ ինձ ազատ թողնէ քահանայագործելու մինչ ցվախճան գործոյն, և որի համար ընդ սմին ներկայացնում եմ 6 րուբլի փող, որից 5 րուբլին պատճէն արտագրելու գրագրի ծախք, իսկ 1 րուբլին հեռագրի, քաղաքիս գործակալի միջոցով յայտնել ինձ խնդրիս հետևանքը։ *)

---

*) Միթէ քիչ շատ խելք ու գութ ունեցողը այս յայտարարութեան մէջ օրինազանցութիւնկամ ըմբոստութիւն կնշմարէ արդեօք բացի ամօթն ու պատկառանքը ոտքի տակ տւող անպարունը, բայց ահա թէ ինչ են եզրակացնում մեր հոգևոր հայրերը այս անմեղ յայտարարութեանս առթիւ.

19-ըն փետրուարի 1903 ամի Բագու.

*Մեսրովբ քահանայ Տէր-Ոսկանեանց*

## Ե.

*Ի Լուսաւորչական Հայոց Սինօդն ս. Էջմիածնի վիճակային Հայոց Կոնսիստորիայի Շամախոյ*

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեսրովբ քահանայն Տէր-Ոսկանեանց Բագուայ չնայելով ի ներողամիտ կարգադրութիւն Սինօդիդ ս Էջմիածնի ըստ գործոյն յաղագս անվայել արարմանց նորին և անպատուելոյ զԱբգար աւագ քահանայն Տէր-Յարութիւնեանց՝ որ մեղացուցանելով զսահմանեալ նմա վճռով ատենիդ ի 10-ըն ապրիլի 1902 ամի պատիժն վասն հեռացուցանելոյ զնա ի վանն Սևանայ յապաշխարութիւն՝ որոյ գործ գտանի տակաւին ի Սինօդիդ հրամանաւ ի 29-ըն նոյեմբերի նոյն ամի № 1679 զիջողաբար ենթարկեալ է զնա միայն մի ամսեայ ապաշխարութեան՝ յանդգնի յայտնել դժգոհութիւն վճռոյ Սինօդիդ և առանց ակնածութեան մատնի ի Կոնսիստորեայս անպատշած յայտարարութեամբ՝ խնդրելով զպատճէն այն մեկ վճռոյ ի բողոքել Վեհափառ կաթողիկոսի Ամենայն Հայոց: Ընկալեալ ի նկատ զայս օրինակ ծայրահեղ յանդգնութիւն քահանային Մես-

սրովբայ, որ յօրէ անդի քահանայութեան թօյլատրելով զբաղմամբ օրինազանցութիւնս՝ խուսաբեալ է մինչ յարժանապարտ պատժոյ և այժմ ևս ձգտի հակառակ օրինաց բողոքել գիջողաբար վճռոյ ծայրագոյն հոգևոր իշխանութեանդ, ի նկատ առեալ նոյնպէս և զայն՝ զի Տէր-Ոսկանեանց քահանայն որքան և բարդին և ծանրանան բողոք ի նմանէ ի Կոնսիստորիայիս, նոյնչափ առաւել ևս աներկիւղ և անպատկառ յաճախէ յապարիցի անարժան գործողութեանց իւրոց, և ոչ բնաւ զգաստացեալ դառ յուղղութիւն և ի հնազանդութիւն, ուստի վիճակային ատեանս մատուցանելով Սինոդին զյայտարարութիւն յիշեալ քահանային՝ ամենախոնարհաբար խնդրէ զտնօրէնութիւն վասն զսպելոյ զյանդգնութիւն նորին ի խրատ նմա և ի զգուշութիւն միւսոյ հոգևորականաց։ Ընդ սմին յայտնի է, թէ ատեանս զմատուցեալ ի Մեսրովբ քահանայ է 6 րուբլի դրաման ի միասին ընդ այսմ դարձոյց նմա ընդ ձեռն գործակալի եկեղեցեաց Բագւայ։ Անդամք Կոնսիստորիայի՝ Եփրեմ վարդապետ, Տաճատ աւագ քահանայ Մարաղեանց, Մակար քահանայ Անտոնեանց։ Ատենադպիր՝ Ա. Շահվերդեանց։ № 392 ի 20 փետրուարի, 1903 ամի. ի քաղաքն Շամախի։

## Ջ.

Լւան ղեկուցումն. Կոնստարիայն Շամախոյ առաջի աչաց ունենալով զհանգամանս գործոյն, յայտարարութեամբ 7-ըն մայիսի 1902 ամի Թ. 672 խնդրէ ի Սինոդէս արկանել զՄեսրովբ քահանայն Ոսկանեանց ընդ եկեղեցական ապաշխարութեամբ ի Վանս Սևանայ անորոշ ժամանակաւ։ Լսելով զայս գործ՝ Սինոդս ըստ օրագրի ի 25 նոյեմբերի նոյն 1902 ամի պատուիրէ Կոնսիստորիային զգուշացուցանելով զԱբգար աւագ քահանայն Տէր-Յարութիւնեանց յաղագս կատարելոյ նորա զպսակ Գեղամայ Գալստեան, որ ի ժողովրդենէ այլ քահանայի, պահանջել ի նմանէ զդրամս վասն պսակին և յանձնել Մեսրովբ քահանայի Տէր-Ոսկանեան, իսկ զվերջինս, զՄեսրովբ քահանայն՝ յաղագս անպատուելոյ զԱբգար քահանայն արկանել ընդ եկեղեցական ապաշխարութեամբ մի ամսեայ ժամանակաւ, *) յանձնելով զհովուութիւն ժողովրդեան նորա, ըստ ընտրութեան նորա այլում քահանայի, զի սա զմի երրորդ մասն յարգեանց առցէ ինքեան և զմնացեալսն յանձնեսցէ ի սնունդ ընտանեաց Մեսրովբ քահանայի։ Ապա Կոնսիստորիայն յայ-

---

*) Իմ ծուխս յափշտակել պսակել է Տէր-Աբգարը՝ Սինոդը միայն կզգուշացնէ և փողը կառնէ ինձ կտայ. իսկ ինձ զրկւածիս պատժում է.

տարարութեամբ ի 20-ըն փետրուարի 1903 ամի, ի 392 յայտ առնէ Սինոդիս՝ զի Մեսրովբ քահանայն ոչ հաճեցեալ ի մեղմ պատիժ, սահմանեալ ի Սինոդէ, ոչ կամի կրել զայն, այլ յանդգնեալ է յայտարարութեամբ խնդրել զպատճէն գործոյն վասն բողոքելոյ Վեհափառ կաթողիկոսի յաղագս փոխելոյ զվճիռ Սինոդի։ Ապա Կոնսիստորիայն ի 12-ըն ապրիլի նոյն ամի թ. 631 յայտ առնէ Սինոդիս՝ զի որպէս յայտնէ դիւան Վեհափառ կաթողիկոսի՝ նորին սրբութիւն թոյլադրեալ է Մեսրովբ քահանայի պաշտել զքահանայութիւն իւր ցվախճանական տնօրինութիւն։ Հուսկ ապա Մեսրովբ քահանայն ընդ երկոքին յայտարարութիւնս, 13-ըն փետրուարի և ի 16-ըն մարտի նոյն 1902 ամի մատուցանելով զ-15-ական ռուբլիս ի դիւանական ծախս և յայտնելով՝ զի բողոք զնմանէ է անհիմն և նիւթեալ ի չարակամաց նորա՝ քահանայից Բագու քաղաքի խնդրէ տալ ինքեան զպատճէնս գործոյն Սինոդիս և Կոնսիստորիային զի ապացուսցէ նա զթշնամութիւն քահանայիցն և խնդրեսցէ ի Վեհափառ կաթողիկոսի փոխել զվճիռ Սինոդիս։ Հրամայեցին, ունենալով առաջի աչաց՝ զի յանցաւոր Մեսրովբ քահանայն Տէր Ոսկանեանց անտեղի պատճառաբանութեամբ մինչ ցայժմ խոյս տայ ի կրելոյ զպատիժն ըստ հրամանի Սինոդիս ի 29 նոյեմբերի 1902 ամի թ. 1679

այն է զմի ամսեայ եկեղեցական ապաշխարանս յաղագս անպատուելոյ նորա զԱբգար քահանայն, ուստի պատուիրել Կոնսիստորիային Շամախւոյ նախ բաց յայտ մի ամսեայ ապաշխարանացն արկանել զՄեսրոպը քահանայն ընդ ապաշխարանօք ևս զմի ամիս վասն ըմբոստ վարմանց *) նորա ընդամենայն զերկուս ամիսս. վարելով վասն հովւութեան ժողովրդեան նորա ըստ վերոգրեալ հրամանի թ. 1679. և երկրորդ՝ տալ Մեսրոպը քահանայի զխնդրեալ պատճէնս, **) յետ կրելոյ նորա զսահմանեալ ի Սինոդէս պատիժն։ Ի շուտափոյթ կատարման վճռոյս տալով հրաման Կոնսիստորիային Շամախւոյ՝ պատուիրել նմին զկատարածն յայտ առնել Սինոդիս։

## է.

Դ. Էջմիածնի Սինոդին ներկայացրած զեկուցագիրը

1) Տէր աբգարը Բալախանի ժողովրդից իւր հաստատուն ցուցակի մէջ մտցնելու գործում

*) Եթէ անմեղ տեղը մարդու պատժեն. ոչ ոք իրաւունք չունի օրինական ճանապարհով իրեն արդարացնելու միթէ ըմբոստութիւն է գործի պատճէն պահանջելը. այսպէս են Աստծու սպասաւորների արդարադատութիւնը իմ վերաբերութեամբ։

**) Հրամայում են պատճէն տալ՝ փողը կրկնակի ստանալով, բայց չեն տալիս, իսկ եթէ խնդրեմ նորից, որ իրենց հրամայածը կատարեն, այդ ըմբոստութիւն են համարում ու կրկնակի պատժում։

օգտուել է Տաճատ քահանայի աջակցութեամբ։ Այս իմ ասածը հաստատելու համար ներկայացնում եմ փաստաթղթերը և խնդրում եմ իմ ծախսով հեռագրով պահանջէք Շամախւոյ Կոնսիստորիայից Բագւայ ծխաբաժնութեան գործը և ծխերի մայր ցուցակը

2) Թէ Տէր Աբգարը իմ ծուխս համոզելով գրաւել էր և պսակ կատարել. այդ բանին բացառապէս ապացոյց է Տէր-Եղիշէի ցուցմունքը, որով իմ բողոքը արդար ճանաչելով հրամայում է Տէր-Աբգարին պսակը չանել, և նոյն իսկ Սինոդի որոշումը որով հրամայում է Տէր-Աբգարից պահանջել պսակի արդիւնքը և ինձ յանձնել։

(Փաստաթղթերը մատեանումն են)։

3) Ես բնաւ երբէք հայհոյել չեմ Տէր-Աբգարին և ոչ նորա որդի Տէր-Յովհաննէսին ոչ եկեղեցում, և ոչ եկեղեցու բակում, ոչ խորանում, որովհետև ես այդ օրը եկեղեցի չեմ եկել և ոչ ճանապարհին Բալախանու կայարանում, ուր միայն հանդիպել եմ, բայց ոչ հայհոյել, այլ այդ ամենը սուտ են և արդիւնք թշնամութեան, որ գլուխ են բերել ինձ մեղաւորեցնելու համար կողմնապահ և բնիկ Տաճատ ա. քահանայ Մարաղեանցի շնորհիւ, որը յուսակնութիւն ունենալով գալ Բագու իբրև Կոնսիստորիայի անդամ և հաստատուել իմ ծխերի վրայ, որովհետև երկրաշարժի պատճառով առաջարկութիւն էր եղած, որ Կոնսիստորիան փոխադրելու էր Բագու։

4) Թէ Տաճատ ա. քահանայն կողմնապահութեամբ է արել այդ գործի քննութիւնը, այդ արդէն ապացուցանում է իւր արած քննութեան անհեթեթութիւնը, որովհետև նա ծածուկ է քննութիւն արել և բնաւ ինձ չէ յայտնել, որ Տէր-Աբգարը վկայ ունի, որով ինձ զրկել է հնարաւորութիւնից պաշտպանելու վկաների ցուցման դէմ, վկաներ, որոնք իմ ոխերիմ թշնամիներս են։ Ոչ մի տէրութեան հողի վրայ չունի գոյութիւն մի այնպիսի օրէնք, որ յանցաւորին պատժեն առանց նորա մեղքը իւր երեսին կարդալու և լսելու նրանից մեղաւոր կամ արդար լինելու պատասխանը։ Սակայն ահա մեր հոգևոր իշխանութիւնը ինձ պատժել է, առանց այս տարրական արդարութիւնը պաշտպանելու։ Ապացոյց, որ ինձ մեղադրող վկաների մասին բնաւ տեղեկութիւն չեմ ունեցել, ինձանից բացատրութիւն պահանջելու ժամանակ. ներկայացնում եմ նոյն իսկ քննիչ Տաճատ քահանայի ինքնաձեռագիր հարցական յօդուածների թերթը և նոյն իսկ Սինօդի 29 նոյեմբերի 1902 ամի թ. 1679 հրամանը, որտեղ ասած է, թէ „Մեսրովբ քահանայն հանդէպ մեղադրանացն չբացատրէ ինչ“։ Ի՞նչ կարող էի բացատրել, որ բնաւ չեմ լսել ոչ մի վկայի ձայն, որ ինձ մեղադրէր։

5) Քննիչ Մարաղեանցն վկաների ցուցմունքը առնելուց յետոյ գրում է քննութեան մէջ. „կար-

գացի արձանագրութիւնը և բովանդակութիւնը ի լուր ամենեցուն“։ Արդեօք ովքեր են այդ „ամենեցունները“, որոնք իրաւունք ունեն լսելու ինձ դատապարտելու գործը, իսկ ես ոչ։

6) Վկաների ցուցմունքը բոլորովին սուտ է, անխիղճ զրպարտութիւն, արդեօք կայ այնպիսի մէկը, որ չկամենայ վրէժ լուծել իւր թշնամուց՝ ես բնաւ չեմ վրդովում, որ Տէր-Եղիշէն աղաւաղում է իմ խօսքերը, ես նրան իբրև իշխանաւորի ասացի «ինչու ընթացք չտւիք իմ բողոքներին, որոնք տւել եմ Ձեզ Տէր-Աբգարի յափշտակութեանց վրայ. ինչ է Ձեր միտքը, այնքան էք անում, որ մենք գնանք ատրճանակով կըռւենք»։ Տէր-Եղիշէն այնքան ազնիւ է գտնւել, որ Տէր-Աբգարի պէս ատրճանակը ձեռքս չտւել, այլ բաւականացել է ասելով, թէ „ինձ յայտնեց, որ որոշել է գնալ և սպանել նախ Տէր-Աբգարին և ապա իրան“ (այսինքն ինձ)։ Տէր-Եղիշէն սուտ է ասում, մակագրած իմ յայտարարութիւնը ինձ չէ տւել, որ տանեմ Տէր-Աբգարին յանձնեմ։ Տէր-Եղիշէն թէև ճարպիկ և առաձգական է խօսքի և գրչի մէջ, բայց այստեղ չարաչար բռնւում է. նախ ասում է «տեսնելով Տէր-Ոսկանեանցի հոգեկան յուզմունքը և երկիւղ կրելով, որ նա եթէ իւր այդ յուզւած դրութեամբ գայ եկեղեցի և Տէր-Աբգարին պատահի, կարող է մի որևէ սկանդալ պատահի եկեղեցւոյ

մէջ»։ Բայց միևնոյն ժամանակ իւր մակագրական պատուէրը ինձ է տալիս որ տանեմ Տէր-Աբգարին յանձնեմ, արդեօք մի ուրէ տրամաբանական կապ կա՞յ այս ցուցմունքի մէջ։ Ապա ուրեմն պարզ է, որ սուտ է նրա ցուցմունքը և վերջապէս Տէր-Եղիշէն ինչպէս կարող է վկայ լինել իմ վերայ, երբ ես նրա վրայ գանգատ եմ տուել ս. Սինօդին, որ ինձ անպատուել է, վերարկուս պատռել է և գործը մինչև օրս էլ դեռ չէ վերջացել, և թէ Տէր-Եղիշէն ինձ թշնամի է, վկայ են բոլոր Բագւեցիք։ Փաստաթղթերը ներկայացնում եմ։

7) Սուտ է և իսպառ զրպարտութիւն Արսէն քահանայ Բիւրըչեանի վկայութիւնը. նախ՝ որ ինձ հետ սարսափելի թշնամի է, որի հետ արդէն դատուել ենք և այժմ էլ վէճ ունենք. հետևաբար թշնամի ենք մէկ մէկու, ուրեմն և մեր վկայութիւնը իրար վրայ չի անցնում։ 2. Տէր-Արսէնը վկայում է թէ փետրուարի 18 ին ս. պատարագը դուրս գալուց յետոյ եկեղեցու գաւթում անպատուել, հայհոյել եմ Տէր-Աբգարի որդուն Տէր-Յովհաննէսին, խռնուած ահագին բազմութիւնը տեսնում և լ ում էր այդ խայտառակութիւնը։ 1902 թուի փետրուարի 18 ին երկուշաբթի էր օրը և ոչ կիրակի, որ պատարագ լինէր. և եթէ պատարագ էլ լինէր, եկեղեցու գաւթում յի օրը ահագին ժողովուրդ պարապ չէր կարող մնալ այնտեղ. իսկ եթէ ահագին խռնուած ժողովրդի մէջ եմ անպատուել

Տէր-Աբգարի որդուն, ինչո՞ւ մի մարդ անգամ չէ ցոյց տուել վկայ բացի իմ երդուեալ թշնամուց. Փետրուարի 18-ին ես բնաւ ներկայ չեմ եղել և տեսել ու լսել ս. պատարագը, այլ նոյն իսկ օրը եղել եմ Բալախանի և այնտեղ կատարել եմ չորս մկրտութիւն, ինչպէս արձանագրուած է ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ չափաբերական մատեանի մէջ ընդ համարներով 82, 83, 84 և 85. բացի դրանից ես պարտաւոր եմ ամենայն երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ներկայանալ հիւանդանոց Բալախանիի հիւանդներին այցելելու և այդ միջոցը տևում է առաւօտուայ ժամի 9-ից մինչև ճաշուայ 2 ժամը: Սուտ է նոյնպէս Տէր-Արսէնի միւս վկայութիւնը, որ ասում է թէ „նոյն գիշերը (այսինքն փետրուարի 18 ի գիշերը) մտայ եկեղեցւոյ խորանը. Տէր-Ոսկանեանցը տիրացուների հետ խօսում էր ծաղրական տոնով Տէր-Աբգարի մասին և վիրաւորական խօսքեր ասում նրա հասցէին. րոպէապէս գրգռուեց, դռան չէմքին կանգնեց, կէս հեգնական և կէս զայրացկոտ հայհոյեց. պիտի ասեմ, որ եկեղեցին ծայրէ ի ծայր լիքն էր. 3 պսակ սպասում էր, մէկն էլ պսակում էր Տէր-Գրիգորը“: Զարմանալի է, որ միշտ անհամար ժողովրդի առաջ անպատւում եմ և միայն լսում է ու տեսնում Տէր-Արսէնը, իմ ոխերիմ թշնամին. ո՞վ կարող է հաւատալ, եթէ ոչ նա, որ կուրացել և խլացել է

կաշառքով և թշնամութեամբ, փետրւարի 18-ին գիշերը ինձ հայհոյել է տալիս եկեղեցում Տէր-Արսէնը, իսկ իւր տիրացուն 17-ին է ինձ հայհոյել տալիս դարձեալ նոյն եկեղեցու՝ խորանում. ինարկէ Տէր Աբգարին։

8) Սուտ են նոյնպէս տիրացուների—Մկրտիչ Տէր-Ստեփանեանի, Յովհաննէս Տէր Յարութիւնեանի, և Արմենակ Յակոբեանի—վկայութիւնը, որոնք ասում են թէ իբրև ես փետրւարի 17-ին երեկոյեան եկեղեցւոյ խորանում հայհոյել եմ Տէր-Աբգարի հացէին և ապա չքաւականացած դուրս եկել խորանից և եկեղեցու դասում կանգնել և բազմաթիւ ամբոխի առաջ սարսափելի հայհոյանք եմ թափել Տէր-Աբգարի հացէին, այն էլ բարձրաձայն գոռում գոչումով։ Եթէ փողոցում բազմութեան առաջ մի մարդ կանգնի ու առանց մէկի հետ կռւելու յանկարծ սկսէ ինքն իրան հայհոյել մի աներևոյթ անձի այն խօսքերով, ինչ որ այդ վկաները վերագրում են ինձ, անշուշտ նրան կը բռնեն և կը տանեն գժանոց բայց ինչու չտարան ինձ և չեն տանի գժանոց, քանի որ ես քահանայ էի, աւելի մեծ և ծանր պիտի պատժւէի, երբ նոյնպիսի գժի դեր էի կատարում եկեղեցոյ մէջ բազմութեան առաջ։ Բիչ շատ դատողութիւն ունեցող մարդը արդէն քաջ կըմբռնէ այս վկայութեան արժանիքը։ Նոքա, այդ վկաները, թող ցոյց տան, թէ

ում պսակն էր. եթէ պսակի տէրը ցոյց տային, հետեւաբար և կը գտնւէր մի մարդ այդ հարսանիքաւորներից, որ բազմութեան հետ եկած լինելով եկեղեցի, պիտի լսէր և իմանար իմ տւած սարսափելի հայհոյանքը։ Եթէ չկան պսակւողների անունները մէջ տեղ, հետեւաբար չեն լինի և հարսանիքաւորները—բազմութիւնը, որոնց մօտ հայհոյել եմ. ապա ուրեմն սուտ են խօսում։ Տէր-Արսէնը վկայում է, որ „ես մտայ եկեղեցու խորանը, Տէր-Ոսկանեանցը ծաղրական տօնով խօսում էր տիրացուների հետ Տէր-Աբգարի մասին“։ Իսկ այդ երեք տիրացու վկաները ասում են, թէ „Տէր-Արսէնը և իրենք ներսն՝ խորանն էին, յանկարծ ներս մտաւ Տէր.Ոսկանեանցը և սկսեց հայհոյել Տէր-Աբգարին, որ բացակայ էր“։ Դարձեալ տիրացուները ցոյց են տալիս. „պէտք է նկատած որ երբ Տէր-Մովսէսը այդպէս կատաղած խօսում էր, հետաքրքիր բազմութիւնը սկսեց առաջ վխտալ դէպի խորանը և լսում էր։ Այդ դրութիւնը տեւեց մինչև պսակի գալը, որով և վերջացաւ այդ տգեղ տեսարանը“։ Իսկ Տէր-Արսէնը ասում է, „նորից միջամտեցինք, թեւից քաշեցինք, զօռով դուրս պրծաւ, կանգնեց քահանայից դասի վանդակների առաջ և նոյն խօսքերն էր կրկնում և ամեն

անգամ ձայն բարձրացնում։ Պիտի ասեմ, որ եկեղեցին ծայր է ի ծայր լիքն էր, երեք պսակ սպասում էին, իսկ մինն էլ պսակւում էր, եթէ չեմ սխալւում պսակողն էլ Տէր-Գրիգորը պիտի լինէր“։ Արդեօք ո՞րն է ուղիղ, ես յանկարծ ներս մտնել ու խելագարի պէս միբաշ հայհոյել եմ Տէր-Աբգարի հասցէին, ըստ ցուցման երեք վկայից, որ Տէր-Արսէնն էլ այնտեղ է եղել, թէ՞ տիրացուների հետ ծաղրական տօնով խօսում էի Տէր-Աբգարի մասին, ըստ ցուցման Տէր-Արսէնի, երբ ինքն, Տէր-Արսէնը ներս մտաւ խորան։ Դարձեալ արդեօք ո՞րն է ուղիղ, տիրացուների վկայութիւնը, որ ասում են պսակը գալուն պէս տիրեց խաղաղութիւն և վերջացաւ այդ ագեղ տեսարանը, թէ Տէր-Արսէնի ասածը. „պիտի ասած որ եկեղեցին ծայրէ ի ծայր լիքն էր բազմութեամբ, երեք պսակ սպասում էր, իսկ միւսն էլ պսակւում էր Տէր-Գրիգորը“։ Ո՞ր տեղ ծաղրական տօնով տիրացուների հետ խորանում խօսելը և ո՞ւր տեղ յանկարծ ներս մտնել ու հայհոյելը։ Ո՞րտեղ պսակի գալուն պէս խաղաղութիւն տիրելը և ո՞րտեղ քահանայական դասից հայհոյանք շարունակելը՝ երբ եկեղեցին ծայրէ ի ծայր լիքն է, երեք պսակ սպասում է, իսկ մէկն էլ պսակւում է։ Այս ամենը կարծեմ շատ տարբեր են իրարուց։ Այս երեք տիրացու վկաների ցուցմունքն էլ կուներայն շատ տարբե-

րութիւն, եթէ Տաճատ քահանայի գրչի տակից
չանցնէր նոցա ցուցումը. ցուցում, որ տուել են
այդ մարդիկը իրարու հետ միասին, միաբան
միակամ և միախորհուրդ քննիչի և գանգատա-
ւորի հետ։

Աւելացնում եմ և այս, որ այդ տիրացու-
ները ինձ վերայ մի քանի անգամ սուտ վկայու-
թիւն են տուել և գործը գտնւում են Կոնսիստո-
րում. տիրացու վկայ Արմենակ Յակոբեանը Տէր-
Եղիշէի դրդմամբ իւր տանը ծնած ապօրինի
ծնունդը երդմամբ ինձ հաւատացրեց թէ օրի-
նաւոր է, ես էլ օրինաւոր գրեցի մկրտութեան
ժամանակ և ապա իմանալով Արմենակի այդ
խարդախութիւնը, բացատրութիւն տւի Կոն-
սիստորին։

9) 1902 թւի փետրւարի 17-ին Եղիշէ քա-
հանայի մօտից, այսինք գործակալական դիւա-
նատնից դուրս գալով երեկոյեան ժամի 8-ին
ուղիղ գնացի Բալախանի և այնտեղ երկու կետ-
րոնում երկու պսակւողների հանդերձ օրհնեցի և
մի այլ կետրոնում մի նշան օրհնեցի, որը ար-
ձանագրւած է Նշանօրհնութեան պաշտօնական
ժապաւինեալ մատեանում, որ այժմ գտնւում է
գործակալի իրաւունքի տակ, և ուղիղ ժամի 1-ին
գալիս եմ եկեղեցի, անմիջապէս կատարել եմ
յիշեալ երկու պսակի խորհուրդը, ապացոյցը չա-
փաբերական մատեանը, որի մէջ արձանագրւած

են այդ պսակները փետրուարի 18-ին ընդ համարով 27 և 28։ Բացի այս փետրուարի 17-ին ես ամբողջ օրը զբաղուած էի օրինակատարութեամբ, ցերեկը կատարել եմ երկու մկրտութիւն, որոնք գրել եմ չափաբերական մատեանում ընդ յօդւածով 80 և 81։ Ուրեմն ես այդ օրը առաւօտեանից մինչև կէս գիշերը զբաղուած եմ եղել օրինակատարութեամբ, էլ որտեղ ժամանակ ունեցայ, որ երկու անգամ եկեղեցի գայի և դատարկաբանութեամբ անցկացնէի օրս։

10) Սուտ է նաև Յովսէփ Տէր-Աւետիքեանի վկայութիւնը, որ ցոյց է տալիս իբրև թէ ես մօտեցել եմ կառքին և բացատրութիւն պահանջել Տէր-Աբգարից պսակի առթիւ և սկսել սարսափելի խօսքերով հայհոյել և ասել „շան որդի“ „քեօփակ օղլի“։ Իսկ Տէր-Աբգարը կառքի մէջ նստած ոչինչ չէ ասել և ինքը ինձ գրկել է, որ հեռացնէ, որպէսզի չհայհոյեմ։ Ա. որ այս վկան ինձ հետ թշնամի է, և նամակով սպառնացել է ինձանից վրէժ առնել և այդ ինքնաձեռագիր նամակը ներկայացրել եմ Սինօդին իմ խնդրագրի հետ, որ տուել եմ 24-ին սեպտ. ներկայ թւի։ Բ. պարոնը իւր թշնամութիւնը և ատելութեանը թոյնը թափելու համար գանգատաւորից աւելի թունդ ու պինդ խօսքերով է մեղադրում. օրինակ՝ Տէր-Աբգարը ասում է. „մօտենում է մեզ հարցնում, ո՞ւր էք գնում“. իսկ Տէր-Աւետի-

քեանը ասում է։ „Մոտեցաւ և բացատրութիւն պահանջեց, թէ ի՞նչ իրաւունքով և այլն“։ Գ. այդ պարոնը ի՞նչ էր նեղութիւն քաշում կառքից իջնելու և ինձ բռնելու, որ չհայհոյեմ, աւելի լաւ չէր լինի կառքից չիջնէր ու քշել տար կառքը և գնար, որ ամեն բան կը վերջանար և շատ մարդ, մանաւանդ թուրքերը, այլազգիները ոչինչ չէին հասկանայ, թամաշի չէին կանգնի մեզ, ինձ—կռուողիս և հայհոյողիս և նրանց՝ խաղաղացնողին և անպատուութիւն կրողին։ Բայցորպէս գի աւելի ծանր յանցանք բարդեն վերաս, նրանց ձեռնտու է կառքը կանգնեցնել և ինձ քաշքշել։ Գ. Տէր-Աբգարը ասում է „խնդրում եմ հեռանալ, լռել, ամօթ է“։ Իսկ վկան ասում է ոչինչ չէ ասել, բոլորովին լուռ մ·ացել։ Ո՞վ կարող է հաւատալ թէ այն մարդը, որ գրաւոր, այն էլ պաշտօնական յայտարարութեամբ գրում է աւելի խիստ հայհոյական խօսքեր, իսկ կուի ժամանակ ոչինչ չէ ասել։ Օրինակ, նա՝ Տէր-Աբդարը իւր յայտարարութեան մէջ, որ տուել է Կոնսիստորին, 19 փետրուարի 1902 թւի. թ. 15, իմ հասցէին ասել է „սկսեց պիղծ բերանը բանալ“. „աւելի է կատաղում“. „փլթած հսկայ հասակը“։ Միթէ այս գրաւոր պաշտօնական թղթով հայհոյանք տալու համար չպիտի պատժուի նա։ Տէր-Աբգարը միշտ ասում է իւր յայտարարութիւնների մէջ.

Ա. „յարձակւում է որդուս վերայ խուռն բազմութեան առաջ, որ եկեղեցուց նոր դուրս էին գալիս“. բ. „յարձակւում է գործում վրաս, հայհոյում, ճիչ տրձակում, սպառնալիքներ անում Բալախանի կայարանում, որտեղ կար ահագին բազմութիւն, զանազան ազգերի պատկանող:“ Գ. եկեղեցում երբ որպէս թէ հայհոյում եմ ժամը 9-ին «այդ ժամանակ մեծ բազմութիւն է ժողոված լինում եկեղեցում». դ. գերեզմանատանը դարձեալ „բաւականին բազմութեան առաջ նոյն մարդասպանութեան խօսքերը կրկնում“: Զի՞ գտնուի մի ճշմարտասէր մարդ—դատաւոր, որ հարց տայ Տէր-Աբգարին, թէ երբ քեզ չորս անգամ հայհոյել է միևնոյն գործի համար զանազան տեղերում «խուռն, ահագին, մեծ և բաւականին» բազմութիւնների առաջ, ինչո՞ւ այդ ներկայ գտնուող բազմութիւններից մի երկու երեք մարդ վկայ չէ կարող ցոյց տալ, այլ միայն գնում է գալիս որտող որ լինի իմ թշնամիների ձեռքից բռնած քաշում է առաջ իբրև վկայ:

11) Թէև Շամախու Կոնսիստորիային իր կազմութեան մեծամասնութեամբ այսինքն անդամները ու ատենադպիրը (իմ վճռի ժամանակ առաջնորդ չէ եղել այնտեղ) թշնամի լինելով ինձ, հայրապետական կոնդակով 39 նոյեմբերի 1899 թ. 1381 իսպառ արգելած էր այդ Կոն-

սիստորիայի ոչ միայն անդամներից մէկին կամ միւսին իմ գործերը քննելու, այլ և ոչ ոքի չպիտի թոյլ տրւէր այդ թւի միջից իմ գործերին վերահասութիւն գործելու, եթէ հարկ լինէր քննիչ նշանակել՝ այդ անձը պիտի լինէր „արտաքոյ ի թեմէն Շամախւոյ“։ Բայց Կոնսիստորիայն թշնամութեամբ լցւած մոռացել է հայրապետական այդ պատւէրը և սկսել դարձեալ իւր ատելութեան և վրէժխնդրութեան թոյնը թափել թշւառիս վերայ, այն էլ դարան մտած, գաղտնի, առանց խղճի և օրինական տարրական կանոնները պահպանելու, վճռում է կրկնակի պատիժ, դադարեցնել քահանայութիւնից և աքսորել Սևան։ Այդ ատեանը Սինոդին տւած իւր յայտարարութեան մէջ գրում է. „յանցելումն ամի Տէր-Ոսկանեանց քահանայ թոյլտրեալ է նոյնպէս և զնման օրինակ արարս ընդ Արսէն քահանայի“։ Բայց դարձեալ չի քաշւի այդ Արսէն քահանայի վկայութիւնը հալած իւղի տեղ ընդունելով ասել՝ „կատարելապէս հաստատի (իհարկէ վկայութեամբ Տէր-Արսէնի) բողոքը Աբգար քահանայի զՄեսրովբ քահանայէ“։ Ո՞ր աշխարհի օրէնքը թոյլ է տալիս վրէժխնդիր թըշնամին թշնամուն վկայ լինելու։ Ես խայտառակել, անպատւել զարկել եմ Տէր-Արսէնին, նա էլ վրէժ առնելու համար դիմել է Կոնսիստորին ինձ պատժել տալու։ Տարակոյս չկայ,

եթէ ձեռքիցը գայ, կարգադրուրկ կանէ ինձ, ուրեմն կոնսիստորիայն օրէնքը պահպանելու համար, Տէր-Արսէնի վկայութիւնը երբէք չպիտի ընդունէր իբրև փաստ, նոյնպէս և Տէր-Եղիշէի ու Արմենակ Ցակովբեանի վկայութիւնները, որոնց հետ թշնամի եմ և այդ մասին Կոնսիստորիայն լիքն է իմ և նրանց բողոքներով, որ տուել ենք մէկ մէկու վերայ։ Ու Կոնսիստորիայն իւր վրէժխնդրութիւնը կատարեալ գլուխ բերելու համար, յիշում է այդ իւր տեսակի մէջ նշանաւոր յայտարարութեամբ. „որպէս յԱնդրկասպեան երկրի, նոյնպէս և յետ փոխադրութեան ի Բագու անբարիշտ և յանդուգն բնաւորութեամբ չէ կարացել երբէք վարել զպաշտօն քահանայութեան վայելուչ քաղաքավարութեամբ, միշտ յափշտակելով զարդիւնս նոցին. Թոյլադրեալ է անթիւ զեղծմանս և ապօրինի գործողութիւնս ընդդէմ պաշտօնի, որոց վասն թէև կարգեալ է զքննութիւն, սակայն չէ հանգեալ ի վախճանական անօրէնութիւն»։ Այս խօսքերը կարդացողը պիտի ասէ, որ ես մի սրիկայ եմ կամ խելագար, բայց իմ ժողովուրդը, որոնց հովւում եմ, ոչ միայն մի մարդ մի տնգամ գոնէ իմ վերաս բողոքած չէ, այլ ընդհակառակը, իւր բազմաստորագիր խնդիրներով գովաբանել է ինձ հոգևոր բարձրագոյն իշխանութեանց առաջ ի նախատինս իմ հակառակորդ քահանաներին և ի

*սադտանս Կոնսիստորիային Շամախու։*

*Ես բողոքում եմ յանուն օրինաց պետութեան և եկեղեցւոյ հայաստանեայց, Կոնսիստորիայի անարդար յայտարարութեան մասին. Ինչ իրաւունքով ինձ, սրբազան կոչումն ունեցող քահանայիս, «անբարիշտ» է անւանում. թող ցոյց տայ իմ անբարշտութիւնը, թող ապացուցանէ իմ արած «անթիւ զեղծմունքը և ապօրինի գործողութիւնները։ Սուտ են այդ ամէնը և խնդրում եմ ենթարկել Կոնսիստորիայի այն ժամանակւայ կազմը պատասխանատւութեան տակ պատժական օրինաց* 236 *յօդւածի* (о ложномъ доносеніи)*, որ պաշտօնական վճռական յայտարարութեան մէջ այդպիսի զրպարտութիւններ է բարդում իմ վերայ բարձրագոյն հոգևոր իշխանութեան մէջ։*

12) *Թէև ս. Սինոդը իւր օրագրի մէջ գործի զեկուցման ժամանակ դտնում է, որ իմ կողմից ոչ մի պատասխան տւած չէ վկաների ցուցման ժամանակ և գրում է „Մեսրովբ քահանայն հանդէպ մեղադրանաց չբացատրէ ինչ“. բայց դարձեալ ինձ մեղաւոր է ճանաչում առանց ինձանից բացատրութիւն պահանջելու։ Այդ բարձրագոյն վճռի առաջ խոնարհելով հէնց ինձ յայտնած նոյն օրը՝ իսկոյն իմ ծուխս յանձնեցի ուրիշ քահանայի և յայտարարութեամբ յայտնեցի գործակալին, որ ես ահա կապաշխարեմ Սի-*

նոդի վճռի համաձայն. բայց որովհետև ես բոլորովին անմեղ էի և հաստատ համոզուած լինելով որ Կոնսիստորիայն խարդախութիւն է՛արել, ինձ անմեղիս պատժելու, ստիպուած եղայ դիմել Կոնսիստորին՝ խնդրելով տալ ինձ իւր վճռի սևը, որով ինձ այդպէս պատժել է, Մերժումն ստանալով դիմեցի նոյն խնդրով սրբազան Սինոդին, որը մինչ այժմ չէ կատարել խնդիրս. հուսկ ուրեմն իմ աղերսանքը սփռեցին առ ոտս Ամենայն Հայոց գթառատ Հայրապետին, որ թէև բարեհաճեցաւ դադարեցնել վճռի կատարումն մինչև գործի վերստին քննութիւնը, բայց ես արդէն 26 օր ապաշխարել էի և մնացել էր միայն 4 օր, որ մի ամսեայ պատիժը կրած լինէի։ Սակայն ի՞նչ եղաւ իմ արդարութիւն հայցելուս հետևանքը։ Այն որ կրածս պատիժը հրամայեցաւ դարձեալ կրկնակի ժամանակով, այն է երկու ամիս էլի կրել։ Ահա թէ որպիսի արդիւնք ունեցաւ երկրաւոր դատական-ձևական արդարութիւնը, որի հիւսուածքը Կոնսիստորիայի խարդախութեան հենքի վրայ էր յերիւրուած։

Սինոդը իւր այս անփոփոխելի վճռով իսպառ զրկում է ինձ պաշտպանելու իրաւունքից։ Վճռաբեկ բարձր ատեանները ամեն ուրեք Տաճկաստան թէ Պարսկաստան հնարաւորութիւն կտան դատապարտեալին պաշտպանելու իւր դէմ յարուցած ամբաստանութիւնից, իսկ ինձ բոլո-

լրովին գլացեց այս օրինական տարրական սկզբունքը. ուրեմն ես ի՞նչ անեմ, ո՞ւր դիմեմ, երբ այս Միածնաէջ գահի առաջ իմ ձայնը, որ արդարութիւն է հայցում, լռեցնում են կրկնակի պատժով։

18 հոկտ. 1904 ամի Ի. ս. Էջմիածին
Մեսրովբ քահանայ Տէր Ոսկանեանց

Նորին բարձր սրբազնութեան առաջնորդի թեմին
Հայոց Շամախոյ գերապատիւ Անանիա
արքեպիսկոպոսին
Մեսրովբ ա. քահ. Տէր-Ոսկանեանից

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բարձր ս. Հայր, Բագւի քահանայական յանձնաժողովը ամսոյս 3-ին № 747 հաղորդագրութեամբ յայտնում է ինձ թէ թեմիս սրբազան առաջնորդը Ձեր յայտարարութիւնը յանձնել է մեզ ի տնօրէնութիւն։ Բայց նոյն յայտարարութիւնով Ձեր միտքը որոշ չէք յայտնել թէ դուք Բալախանին էք ուզում, թէ քաղաքի ծուխը։ Այդ առաջարկութիւնը ես համարում եմ զըրպարտութիւն, իմ պահանջը յայտնուած է յիշեալ խնդրագրի երկրորդ պարբերութեան 16-րդ տողից Նաա որոշ եղանակով։

Բարձր ս. Հայր, տարւոյս սեպտեմբեր ամ-

սոյ 30-ին երեկոյեան քահանայական ժողովում հէնց Ձեր ներկայութեամբ լսեցի նոցա ոչ օրինական ճանապարհով դիպա ինձ ունեցած վարմունքը ծխաբաժնութեան վերաբերեալ, որից սախպւած ամսոյս 1-ին № 132 յայտարարութեամբս դիմեցի Ձերդ բարձր սրբազնութեան, իմ իմացածին չափ բացատրելով թէ իմ միտքս և թէ ծուխը օրինական ճանապարհով բաժանելու եղանակը, այլ և բացատրելով՝ եթէ կարգադրութիւն է արուած ծխերը նորէն բաժանելու համար պիտի ամենքս մեր ունեցած ծխերը դնենք մէջ տեղ ու հաւասար բաժանենք վիճակահանութեամբ, իսկ եթէ ոչ օրինական ճանապարհով կարգադրութիւն էք ձեռք բերել միմիայն ինձ զրկելու համար զանազան պատրւակներով Տէր-Սահակին մէջ բերելով, թէ կամ „Տէր-Սահակի համար որոշած թաղը վեր առէք կամ Բալախանին“։ իսկ ես ասում եմ, արժանապատիւ քահանայք Բագւի, Տէր-Սահակին որ այդչափ սիրում էք Ձեր ինչ ինչ կարիքների համար, ինչու չէք հէնց Ձեզանից մէկն ու մէկի թաղն ու ծուխը հաւասարեցնում նորան և փոխում նորա հետ. իսկ եթէ իմ ծխականներս մի այլ քահանայի կարիք ունեն, ես ինքս կառաջարկեմ իրանց համար քահանայ ընտրելու օրինական ճանապարհով և այս առաջարկութիւնը ես իմ ժողովրդին արդէն արել եմ, որպէսզի ընտրեն

մի այնպիսի արժանաւորին, որ զերծ լինի իմ ուխտեալ թշնամիների դիպա ինձ ունեցած չար հակումներից: Եւ ոչ թէ մեզնից իւրաքանչիւրն իւր անիրաւացի շահերը և չար „եսը“ առաջ տանելու համար իմ ծխականների վզին փաթաթես այնպիսի անձնաւորութիւնների, որ պիտի խլրտումներ յարուցանեն իմ չարքաշ ու տանջուած ժողովուրդի մէջ, փոխարէն հոգեպարար խաղաղութեան:

Բարձր ս. Հայր, այսու նորէն դիմելով Ձեզ, նորէն յայտնում եմ իմ օրինական պահանջը. եթէ կարգադրութիւն է արուած հին կարգադրութիւններն փոխելու և ծխերը նորէն բաժանելու, ես ևս համաձայն եմ ինչպէս ամսոյս 1-ին № 132 յայտարարութեամբս յայտնել եմ թէ բոլոր ժողովուրդին, ընիկ թէ եկւոր, որոնք ընտանիք են կազմում, որոնք քահանայի կարիք ունեն թէ քաղաքում և թէ արւարձաններում, հրաւիրենք ժողովի նրանց մասնակցութեամբ թաղեր որոշենք, հաւասար ծուխ բաժանենք վիճակահանութեամբ, այս է արդարութեամբ գործելու եղանակը և իմ առաջին և վերջին խօսքը այդ մասին: Իսկ եթէ խաղաղութիւն ամենեցուն կանչող իմ ընկեր քահանայքը այս տարրական արդարութիւնը գործադրելն արհամարհում են, ուրեմն յայտնի է, որ նոքա երկար տարիներ ինձ դէմ գործած չարիքներով չեն

բաւականացել, այժմ էլ ուզում են երկպառա-կութեան չար սերմեր ցանեն արդէն 11 տարի խաղաղութեամբ հովւած ժողովրդիս մէջ:

Սրբազան հայր, իմ հովւած ժողովրդների իններորդ մասը հասարակ բանւոր են, որոնք գործի եղած ժամանակ հազիւ հաց իրանց գերդաստանի օրեկան պարէնն են հայթհայթում, վաստակում, իսկ անգործ ժամանակը թէ ինչի նման է նորանց կացութիւնը և ինչ դրութեան մէջ են գտնւում այդ միայն խիղճ ունեցողը կարող է տեսնել և ո՞չ թէ ընկերին չարաչար զրկանքների ենթարկողներն: Իսկ մի մասն էլ որոնք փոքր ի շատէ գործավարութեան միջոցում կարող են ապահով ապրել նրանց էլ իմ քարե-խիղճ ընկերներս ոմանց խնամէական հաշիւնե-րով, ոմանց էլ ով գիտէ, ինչ զրպարտութիւն-ներով, ինչպէս Տէր-Սահակին են պատւիրել, որ իմ ծխականներին ամէն ուրեք յայտնէ թէ Տէր-Ոսկանեանցը վարակւած է վարակիչ հիւան-դութիւնով, ի՞նչի էք ընդունում որպէս քահա-նայի: Ահա այսպիսի ոչ քահանայավայել ստոր վարմունքով են տիրում յիշածս դասակարգի աչքի ընկնողներին էլ: Իմ ընկերակիցները առար-կում են, որ իմ կատարած օրէնքների թիւը իրանցից աւել է: Ճշմարիտ է, ես կատարում եմ թափառականների և անգործների օրէնքները թւով շատ, նիւթականով քիչ. իսկ նրանք կատա-

րում են ընիկ ժողովրդի և միլիօնատէրերի օրէնքները, թւով քիչ՝ նիւթականով շատ, իրանք քաղաքի փայլուն կառքերն են նստում և մաքուր մայթերի վրայ քայլում յարմար ու որոշւած ժամերում, օրէնք կատարելու յաճախում, իսկ ես նաւթահանքերի մրոտ կառքերն եմ նստում կրկնապատիկ ծախքով և ժահահոտ ցեխի ու փոշու մէջ թաթախւելով անժամանակ, անհանգիստ ու անդադար տարադիր չարքաշների օրէնքներն եմ կատարում, որոնց չատերի տուրքը ճանապարհածախս չի ծածկում. բայց և այնպէս ես երբէք առարկած չեմ թէ ինչի՞ Ձեր բաժինը այդպէս է, իմը այսպէս։ Այն ծխական ցուցակները, որ քաղաքի յանձնաժողովը կազմել է 1896 թւին Համբարձում Մելիքեանի տանը հոգևոր իշխանութեան միջոցիւ յանձնել քաղաքի քահանաներին, նոքա ընիկ և յայտնի ծխականներ են, որոնց համար ոչ մի դժւարութիւն չկայ ամեն ժամանակ վերանորոգելու, նորէն ներկայացնելու. բացի յաւելեալներենը որոնց թիւերը քիչացնելու և թագցնելու սիստեմների վրայ են միայն տատանում Յիսուս Քրիստոսի ուխտեալ աշակերտները։ Իսկ յիշեալ յանձնաժողովը ինձ ծխական ցուցակ չի տւել, որովհետև Բալախանին չեն կարացել ցուցակագրել այն առիթով, որ ըստ Աւետարանի աղուէսներ, որջունին, թռչուններ բոյն, իսկ իմ չարքաշ ծխականներին

գլուխ դնելու տեղ չեն ունեցել, դրա համար էլ իմ դառն չարչարանքներով բազմաթիւ ցուցակներս մէկը միւսին համեմատ չեն գալիս. Բայց և այնպէս իմ սիրելի և պաշտելի ընկերներս իւրեանց նախապէս ծրագրած խարդախութեանց պատրւակը իմ ցուցակով են քօղարկում: Այս ամենին կարող է ծառայել որպէս փաստ հոգաբարձութեան կազմած ցուցակը, որտեղ յայտնի են անգործների թիւն ու քանակութիւնը և չափաբերական մատեանում գրւած օրէնքներն, այդ ամեն զրկանքներն ես անտրտունջ տանում եմ, համարելով եմ հովւական պարտքը և ահա յայտնի փաստը, որ աշխարհի ամեն ծայրերից հաւաքւած և զանազան անսակի բնաւորութիւն ունեցող համայնքներին խաղաղ ու անվրդով հովւելուս համար միշտ նրանց համակրանաց և բազմաթիւ ուգերձների եմ արժանացել, որոնք ներկայացրել են բարձրագոյն իշխանութեան:

Քահանայից յանձնաժողովի խորհրդի պատէ պատ սուրքովի հաղորդագրութեան համաձայն յայտնում եմ, որ երկար տարիների ընթացքում ես լաւ ծանօթ եմ նրանց չահասէր բնաւորութեանը և այժմ էլ նրանց գործունէութիւնը միայն ինձ զրկելու համար է, և այս մի այնպիսի ճշմարտութիւն է, ինչպէս արեգակի լոյսը, ապա ո՞նց կարող եմ ես այնքան խենթ ու խելառ լինել և չասել թէ այդ կազմը որ սկզբից մինչ

այսօր՝ ինձ դէմ չահագրգռւած են գործել, այժմ էլ իրանց չար դիտաւորութիւններն չեն իրագործում։ Ի՞նչ է նշանակում այս, որ երկար տարիների ընթացքում իրանց հովւած բնիկ ծխականները վերջին հայ թրքական դէպքի առթիւ քաղաքի մի կենտրոնն են ժողովել այն էլ ժամանակաւորապէս, որ ծխականը քահանային է ճանաչում, քահանան էլ ծխականին, այդ դժւարութիւն են համարում իրանց համար։ Չէ որ իմ ծխականները գաղթականներ են և թափառական, այսօր աստ՝ վաղը անդ, այսօր Մարկոսն է, վաղը Թորոսը, և ես առանց դժւարանալու հովւում եմ նրանց, որտեղ էլ լինում են. այլ է՝ թէ մէկի ծուխը աւելացել է, միւսինը պակասել, ես հակառակ չեմ, եթէ օրինական ճանապարհով հաւասարեցնեն։

Բարձր. ս. Հայր, այս ամենից յետոյ առաջարկում եմ և իմ այս խոնարհ խնդիրը ընդ սմին այն համախօսականի պատճէնը 334 ստորագրութեամբ, որը 1896 թւին Բագւի բնիկ ժողովուրդը ներկայացրել է Թեմիս առաջնորդ հանգուցեալ Կարապետ սրբազանին, խնդրելով կամ հաւասար ծուխի բաժին միւս քահանայից նման կամ հաստատել խնդրատուներիս համար մշտնջենաւոր քահանայ Տէր-Ոսկանեանցին, բայց

թէ որ բարի պտուղների խրատով Համբարձում
Մելիքեանը իւր ազգական Պօղոս Մելիքեանցին
է խրատում, որ այդ համախօսականին նախ ինքը
ստորագրէ և ապա իւր ազգականների մի երկու-
սի տեղին էլ ստորագրէ, որպէսզի ապագայում
առիթ ունենան այդ խնդիրը ապօրինի յայտա-
րարելու, և այդպէս էլ անում է պ. Համբար-
ձում Մելիքեանը, բայց որովհետև բացի ազգու
մարդոց ստորագրութիւնը նաև այդ խնդիրը 4
յայտնի մարդով տանում, ներկայացնում են ս.
առաջնորդին։ Այդ 4 մարդոց երկուսին լաւ յի-
շում եմ, որ մէկը ինժիներ Ջումշուդ Յակովբեանն
էր, միւսը Գաբրիէլ Բէգլարեանցն էր, ս. առաջ-
նորդը նկատելով որ այդ հարցում Համբարձում
Մելիքեանը գործում է միայն Ղևտական կազմի
հետ, դրա համար էլ այդ ամենը պահում է
որպէս գաղտնիք, մինչև մի ժամանակ ստանում
եմ Սինօդից կարգադրութիւն, ինձ հաստատել
են մշտնջենաւոր քահանայ Բալախանու։ Այս
ամենը յիշելուց յետոյ խոնարհաբար խնդրում
եմ կամ վերոյիշեալ համախօսականի ստորա-
գրած ծխականներին հանէք բահանաների ցու-
ցակներից, յանձնէք ինձ օրինական եղանակով
և կամ թոյլ տւէք ինձ իմ ծխականներին հով-
ւեմ, ինչպէս միւս քահանայքը հովւում են ի-
րանց ծուխերին, և կամ ժողովուրդին նորէն
ժողովի հրաւիրեցէք հաւասար ծուխ բաժանեցէք

վիճակահանութեամբ։ Սրբազան հայր անա այս է իմ խոնարհ խնդիրը, որ մէկն էլ ուզում էք, այն էլ կարգադրեցէք, ես շատ և շատ ուրախութեամբ կընդունեմ։ Ի 11-ըն հոկտեմբերի 1907 թ. Մեսրոպ ա. քահ. Տէր-Ոսկանեանց։

## Ջ.

*Գործակալ եկեղեցեաց Հայոց Բագուայ № 880 ի 4-ըն դեկտեմբերի 1907 ամի ի Բագու։*

*Արժանապատիւ Տ. Մեքրոպ աւագ քահանայ Տ. Ոսկանեանց։*

*Նորին Բարձր սրբազնութիւն թեմիս առաջնորդ Տ. Անանիա արքեպիսկոպոսը ի 19-ըն նոյեմբերի տարւոյս թ. 214 հրամանագրում է. *) «Յանձն առնեմք Եբձ. Տ. Զաւէն գործակալ եկեղեցեաց, Հայոց Բագուայ հրաւիրել զՄեսրոպ աւագ քահանայ ի հնազանդութիւն տալ զցուցակ ծխականաց քաղաքի—ընթացս միոյ եօթնեկի, ի հակառակ դէպս դադարեցուցանել ի քահանայագործութենէ. և տալ զընթացս ծխաբաժանութեան.» որ և յայտնում եմ Ձեզ ի գիտութիւն և ի կատարումն։*

*Գործակալ եկեղեցեաց Հայոց Բագուայ*
*Զաւէն վարդապետ*

---

**) Ահա տեսէք թէ ինչպիսի արդար վճիռ են տալիս զրկանքի ենթարկուած բողոքաւորիս համար։*

## Է.

Նորին Բարձր սրբազնութեան առաջնորդի թեմին Հայոց Շամախոյ գերապատիւ Տ. Անանիա արքեպիսկոպոսի.

Մեսրովբ աւագ քահ.
Տէր-Ոսկանեանց

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բարձր սրբազան Հայր.

Անցեալ դեկտեմբեր ամսին է լինում, որ քաղաքիս քահանաներն իրենց տիրացուներին ուղարկում են՝ կազմելու իրենց ծխականների ցուցակը, ես էլ իմ կողմից իմ տիրացու Միրզա Ներսեսեանցին եմ ուղարկում միաժամանակ նոյն նպատակի համար և պատուիրում ամենայն ճըշտութեամբ և ջանասիրութեամբ գլուխ հանելու ցուցակի գործը և մինչև յունուար ժամանակ եմ տալիս նրան։ Այս բանն անելով, ես ուզում էի միաժամանակ երկու նպատակի հասնել, համ ցուցակը պատրաստել տալ, համ էլ անօրհնէքի ժամանակ չկորցնել ցուցակ կազմելու վրայ, որ բաւական շատ ժամանակ է խլում։ Նոյն նպատակն ունեցել են և միւս քահանաները. երբ նրանք նախօրօք կազմել էին տալիս ցուցակները։

Գալիս է յունուարը, սակայն իմ տիրացուն չէ բերում որևէ ցուցակ, ասելով թէ չի կարո-

ղացել միւս տիրացուների նման լիակատար ցուցակ կազմել։ Բայց ըստ իս երևի կաշառուածէ միւս քահանաներից. տիրացւի զանցառութեան շնորհիւ անյարմար դրութեան մէջ գրուած լինելով, միւս կողմից էլ տեղեկանալով, որ իմ ծխականներից շատերին ցուցակագրել են միւս տիրացուները և մուծել իրենց ցուցակի մէջ, յունուարի 2-ին № 1 յայտարարութեամբս դիմում եմ Բարձրապատիւ Զաւէն վարդապետին խնդրելով, որ արգելի միւս քահանաներին ձեռնամուխ լինելու տնօրհնէնքի ժամանակ իմ ծխականներին, որպէսզի ես հնարաւորութիւն ունենամ տնօրհնէնքի ժամանակ կազմելու ծխականներիս ցուցակը և յանձնելու հոգևոր իշխանութեանը։ Սակայն քահանաներից մանաւանդ Տէր-Ներսէս Տէր-Կարապետեանցը, Տէր-Արսէն Քիւրքչեանցը, Տէր-Յովհաննէս և Տէր-Աբգար Յարութիւնեանցները, Տէր-Տաճատ Մարտղեանցը ապօրինաբար մտել են և հէնց առաջին անգամ իրենց թաղերում եղած իմ ծխականների տներն են օրհնել, մինչդեռ ամեն քահանայ պարտաւոր է եղել իր թաղի միմիայն իր ծխականների տներն օրհնելու, ինչպէս այդ կարգը ճշտիւ պահպանել է միւս քահանաների վերաբերութեամբ։ Այսպիսով իմ ծխականների մի անգամ արդէն օրհնուած տները երկրորդ անգամ մտնել և օրհնել միանգամայն անյարմար համարելով, զրկւում եմ բա-

ցի ինձ հասնելիք արդիւնքներից, նաև ծխականներիս լիակատար ցուցակը կազմելու հնարաւորութիւնից: Միմիայն պատած 'տների ցուցակը կազմած լինելով, սրա հետ միաժամանակ այն ներկայացնում եմ Բագւի Բարձրապատիւ գործակալին, իսկ քաղաքիս իմ մնացած ծխականներին. տեղիս քահանաները ծխականներիս կամքի հակառակ իրենց ցուցակի մէջ են առել:

Այս մասին պարտք համարեցի յայտնելու Ձերդ սրբազնութեան և ի տեղեկութեան:

Ի 11-ըն փետրուարի 1908 ամի №

## Ը.

*Գործակալ եկեղեցեաց հայոց բագւայ № 210*
*18 մարտի 1908 ամի ի Բագու*
*Արժանապատիւ Մեսրոպ աւագ քահ. Տ. Ոսկանեանցին*

Շամախու թեմի Հայոց Կոնսիստորիայն տարւոյս մարտի 8-ին № 312 հրամանագրութեամբ պատուիրում է հետևեալը—„Որովհետև Մեսրովբ աւագ քահանան Տ. Ոսկանեանց յօրէ անդի մուտ գործելոյ ի վիճակս չճանաչելով զչափ և զսահման կոչման պաշտօնի իւրոյ, անհամեստ բնաւորութեամբ և ազգի ազգի անվայել գործողութեամբ առիթ լեալ է միշտ անախորժ գժտութեանց և անբաւականութեանց և յարուցեալ է բողոքս միաբանակցաց իւրոց և

ամենայն ներողամտութեամբ մերձաւոր և բարձրագոյն հոգևոր իշխանութեան, գործադրեալք յուղղութիւն նորա ապարդիւն անցել են և փոխանակ գալոյ ի հնազանդութիւն և առ ի պարտաճանաչութիւն. սաստել ևս յաճախի ի կամակոր յընթացս իւր և զի ի նկատ առեալ թէ թողուլն զնա ի Բագու յայնպիսում ըմբոստացեալ դրութեան չունի նա ընաւ դադարել ի քահանայագործութենէ, այլ յուզմունս յարուցանել ի ժողովրդեան և յառաջ բերել զչարիս. ուստի դադարեցուցանել զնա ի քահանայագործութենէ անորոշ ժամանակաւ առաքել ի Վանս Սեւանայ մինչ զգաստանալ նորա և ի հնազանդութիւն գալն. ի կատարումն այսորիկ եզրակացութեան, և եթէ դարձեալ ոչ հնազանդեսցի և չարունակեսցէ ըմբոստութիւն իւր յայնժամ յայտնել ատենիս առ ի անօրինել զարժանն վասն առաքելոյ զնա ի նշանակեալ տեղին ընդ ձեռն քաղաքական իշխանութեան և զծխական ժողովրդականս նորա յանձնել այլում քահանայի ըստ ընտրութեան նորա, զմի մասն յերից ի քահանայական արդեանց բառնալ ի վարձ աշխատանաց հովւողին և զերկուս մասունս հատուցանել ընտանեաց նորա ի կառավարութիւն: Զայսմանէ յայտնել խոնարհաբար ի սրբազան Սինոդին ս. Էջմիածնի»:

Յայտնելով ատենի վճիռը արժանապատւութեանդ, առաջարկում եմ ս. ներկայացնել

1907 *թուի չափաբերական մատեանը և* 1908 *թուի կատարած օրէնքների ցուցակ։ բ. մատնացոյց անել միաբան քահանաներից մէկն ու մէկին Ձեր ծխերի հովուութեան համար և գ. թէ ատեանի հրամանը և թէ վերոյիշեալ պահանջները կատարելու համար տրւում է ձեզ* 3 *օր ժամանակ։* *)

*Գործակալ Հայոց եկեղեցեաց Բագւայ*

*Զաւէն վարդապետ*

---

*) *Սիրելի ընթերցող, տեսնում էք, որ ինձ անորոշ ժամանակով Սևան են աքսորում, բայց չեն ասում թէ ինչ եմ արել, ում եմ մի մազի չափ վնաս տուել. մինչև անգամ ինձանից գանգատաւոր էլ չկայ, եթէ ակնարկում է «յարուցեալ է բողոքս միաբանակցաց իւրոց»․ չէ որ Բագւի միաբանութիւնը — քահանայութիւնը ներկայ տարւայ «Մշակ» լրագրի № 147-ում յայտնեց թէ «Տէր Ոսկանեանցը պատժւած է մեզանից անկախ պատճառներով»։ Արդ՝ սրանցից որն է ստութեան որդի՝ Բագւայ քահանայութի՞ւնը, թէ միւսը*

*Գերազնիւ և պատւական եղբայր խմբագիր «Մշակ»-ի, Դուք, որ իմ պատասխանը չտպեցիք Բագւայ քահանայութեան այդ ստութեան դէմ, այժմ Ձեզ դատաւոր եմ ընդունում վճռեցէք, ես որի՞ց գանգատւեմ, քահանայութիւնի՞ց, թէ Կոնսիստորից։*

## Թ.

*Նորին ամենապատուութեան Տեղակալին հայրապետութեան Ամենայն Հայոց Տէր-Գէորգ արքեպիսկոպոսի Սուրէնեանց։*

Մեսրովբ ա. քահանայ
Տէր-Ոսկանեանից

## ԽՆԴԻՐ

Բագւայ քահանաների և թեմական իշխանութեան իմ դէմ թշնամութեան չափը կարող է տեսնել ամենապատուութիւնդ սրա հետ ներկայացրած կաթողիկոսի կոնդակի պատճէնից, որով հրամայում է իմ և նրանց մէջ ծագած բողոքը պիտի քննէ ամ արտաքոյ ի թեմէն Շամախոյ։ Եւ, հէնց որ Վեհափառ հայրապետը կնքեց իւր մահկանացուն, իմ հակառակորդները սկսեցին նորէն ծայրայեղ յարձակուել իմ վրայ, կամենալով զրկել ինձ իմ սեպհական ծխերից հակառակ Սինոդի հրամանի 30-ըն նոյեմբերի 1898 ամի Թ. 1994, որով իրաւունք է տուած ինձ հովուել „զ100 տուն ծուխս ի Բագու քաղաքի, թողլով ի հովուութեան նորին, (ինձ) և զծուխս Բալախանիի ուր ուրեք և իցեն թէ ի քաղաքի և թէ այլ ուր“։ Յաջողացրին ծխերս յափշտակել որոնք առանց այդ էլ արդէն հայ-

թրքական ընդհարումների միջոցին ցրուել էին Բալախանին աւերուելու պատճառով

Դեռ ինձանից ոչ ոք ցուցակ չպահանջած, սրբազան առաջնորդը, իւր հրամանով 19-ըն Նոյեմբերի 1907 ամի Թ, 214 պատուիրում է գործակալին հրաւիրել ինձ ի հնազանդութիւն, տալ զցուցակ ծխոց քաղաքի յընթացս միոյ եօթնեկնի ի հակառակ դէպս դադարեցուցանել ինձ քահանայագործութիւնից։ Այս հրամանը. . ինձ յայտնեց գործակալը. 15 օր յետոյ դեկտեմբերի 4-ին 1907 ամի Թ. 808. Թեմական իշխանութեան այս խիստ վարմունքը ես համարում եմ արդիւնք միմիայն ատելութեան, աչառու վրիժառութեան. որովհետև ես արդէն 1906 թուի դեկտեմբերին ներկայացրել էի գործակալին իմ ծխականների ցուցակը այբբենական կարգի վերածած և այդ չի կարող ուրանալ ոչ գործակալը և ոչ Նորին Բարձր Սրբազնութիւնը— առաջնորդը, ուրեմն որն է իմ անհնազանդութիւնս, թող ցոյց տան, իսկ այդ վերջին հրամանը ստանալուս պէս իսկոյն կարգադրեցի որ իմ տիրացուի ձեռքով կազմել տամ նոր ցուցակ, սակայն բնած չէին իմ թշնամիները, գործակալը ու իր խորհրդականները՝ Եղիշէ աւագ քահանայ Գեղամեանը, Տէր-Աբգարը, Տէր-Տաճատը և Տէր-Ներսէսը արգելք դառան տիրացուիս ձեռքով ցուցակ կազմելուն զանազան ստոր ու ա-

նարժան միջոցներով, որի մասին յայտնել եմ գրով իշխանութեանը. ու ինձ զրկեցին հնարաւորութիւնից լիակատար ցուցակ կազմելու և ես ստիպուած ներկայացրի մի ցուցակ առ ձեռն կազմած, որից յետոյ Հայր-գործակալը արձակեց իւր վճռողական հրամանը ինձ քահանայութիւնից դադարեցնելու 15-ին փետրուարի 1908 ամի Թ. 152 որի պատճէնը ներկայացնում եմ: Գործակալի եղիտական եղեռնագործութիւնը իր գագաթնակէտին հասցնելու հիմն պէտի ծառայէ այդ նզովեալ հրամանը, որ բանալի է նորա դիւական ծրագրի իրագործմանը—աքսորել տալ ինձ Սևան, որ ինքը Տէր ու Տնօրէն դառնայ իմ գերդաստանիս: Վեհապատիւ Տէր, թէև խիստ ծանր է ինձ իբրև արդար զայրոյթով ու վրէժխնդրութեամբ լցուած հօր տեսնել ու ընդունել իմ դէմ եղեռնագործութիւն անող գործակալին իմ վրայ իշխող և հրամայող, բայց ի՞նչ անեմ, փոխանակ եղեռնագործը պատժելու, ես եմ պատժւել այն էլ անմեղ տեղս, համակերպւի՞նք արդեօք այս բռնակալ բարբարոսութեանը, ինչ է իմ մեղքը, որ ինձ դադարեցնում են քահանայագործութիւնից ցուցակ էր պահանջում, չէ որ ես արդէն ներկայացրել եմ 1906 թւի դեկտեմբերի ամսում և մէկն էլ ներկայացրի 1908 ամի փետրուարի 11-ին և այդ յայտարարութեան մէջ խոստացել էի ներկայացնել լիա-

կատարը և ներկայացրի այն էլ մարտի 5-ին սոյն թ.ի, էլ ի՞նչու ինձ պատժում են, Սևան ուղարկելով անորոշ ժամանակով, եթէ ես չէի կարող կանոնաւոր և չուտափոյթ կազմել, թող հրամայէր մի ծանօթ անձին և նոյն իսկ իմ տիրացուին, որ ձեռնահաս էր. չուտով կպատրաստէին իմ հաշուովս, և ո՛չ թէ ինձ Սևանայ ճանապարհը ցոյց տային, որպէսզի գործակալը կարող լինի անել այն, որ չէր կարող անել իմ ներկայութեանս, այդ մասին ստիպուած եմ լռել։ Աշխարհիս մէջ կայ մի օրէնք, դատարան և վարչութիւն, որ մարդին, թէկուզ մարդասպանին, պատժելիս չպահանջեն նրանից պատասխան և կամ մի խօսք անգամ չհարցնեն, այլ գաղտնի վճիռ կայացնեն և հրամայեն կրել պատիժը։ Ինչպէս տեսնում է Ձերդ Բարձր սրբազնութիւնը, սրա հետ ներկայացրած իմ դատապարտութեան փուրսիշից ինձ Սևան աքսորելու վճիռը եղել է ինձնից ծածուկ, թեմական ատեանը իւր գաղտնի որոշումը մարտի 8-ին թ. 210 յայտնել է ինձ և հրամայել երեք օրւայ ընթացքում գնալ Սևան, թէ չէ ոստիկանութեան միջոցով են ուղարկում։

Արդ՝ Ամենապատիւ Հայր իմ և Տէր, յանուն արդարութեան և ի պատիւ Հայոց ազգի մի՛ք թողնել ինձ անպաշտպան այդ արիւնարբու թըշնամիներիս ձեռքը, որոնցից ազատելու համար

եթէ կը տեսնեմ թէ չկայ արդարութիւն և իրաւունք, ստիպւած կը դիմեմ ծայրահեղ միջոցների, որից յետոյ ազատւելուշ կը լինի, խոնարհաբար խնդրում եմ նախ՝ հրամայել գործակալին թոյլ տալ ինձ շարունակել իմ քահանայագործութիւնը, երկրորդ. կարգել անաչառ քննիչ „արտաքոյ ի թեմէն Շամախայ“։ Իսկ թէ որ այս արդար բողոքս պիտի մնայ ձայն բարբառոյ յանապատի, այն ժամանակ պիտի դիմեմ քաղաքական իշխանութեանը դատ բանալով ում դէմ որ գիտեմ, նախապէս իմ այս բողոքը ու միւս բոլոր բողոքներս յայտարարելով Հայոց և Ռուսաց լրագրներում ի գիտութիւն համայն աշխարհի։

Ի 6 ապրիլի 1908 ամի

№ 74 ի Բագու Մեսրովբ ա. քահ. Տ.-Ոսկանեանց

### Ժ.

Նորին Ամենապատւութեան Տ. Տեղակալի Կաթողիկոսի Ամենայն Հայոց Բարձր Սրբազան Գէորգ արքեպիսկոպոսի Սուրէնեանց։

Յապաշխարող Մեսրովբ աւագ քահանայ Տէր-Ոսկանեանից։

### ԽՆԴԻՐ

Իմ արդարութեան պաշտպանաց հառաչանքը, որ արձագանգ չգտաւ Ներկայ հոգևոր վար-

չութեան մէջ, յոյս մեծ ունեմ, որ երբ Հայրապետութեան գահի վերայից—կվերանայ սև քօղը, այն ժամանակ լսելի կլինի և կը պարզաբանուի անձնիւր անհատի արարքը: Այժմ խոնարհելով խոնարհում եմ ույժի և բռնութեան առաջ, բայց ոչ օրէնքի և արդարութեան, որ իսպառ վերացած է այս իմ գործում: Որովհետև պատժւում եմ առանց իմ պատասխանը տալու մեղադրանքի հանդէպ, բայց որովհետև հրամայւած է ինձ Սևան գնալ, իսկ ես սաստիկ տանջւում եմ ոսկրացաւից և ուրիշ տկարութիւններից, որոնք կարող են բուժւել միայն հանքային ջրերում—Պետիգորսկում կամ Տփխիսում, ինչպէս կտեսնէք սրա հետ ներկայացրած վկայականից—այն ինչ Սևանայ խոնաւ օդը քայքայելով ծերունուս վատ առողջութիւնը և տկարացած կազմւածքը՝ կարող է ինձ գերեզման տանել: Քանի որ, ինչպէս յայտնի ամենքին, հինգամեայ բանտային խոնաւ կեանքը ու աքսորավայրի դժնդակ օդը արդէն քայքայել է առողջութիւնս և խոնաւութիւնը անցել է մինչև ոսկորներս: Ուստի խոնարհաբար խնդրում եմ, Գերապատիւ Տէր, Բարեհաճել հրամայել, որ ես իմ վերայ դրած ապաշխարանքը քաշեմ Տփխիսի Ծիրանաւոր ուխտատեղում, որ խիստ յարմար է թէ իբրև ապաշխարելու վանք առանձնացած կեանքով և թէ մօտ է Տփխիսի հանքային ջրին: Գոնէ այս վերջին խնդիրս յարգեցէք, որովհետև ես այստեղ իմ ծախսովս եմ ապրելու, առանց ծանրաբեռնելու տեղոյն վանահօրը, որին եթէ կամենաք սենեակի վարձն էլ կտամ:

Փոյթ չէ, որ անտէր կմնան իմ 4 որդիքս որոնք ուսումնական ասպարէզի ծայրերին մօտեցած լինելով, այլ եւ նոցա ուսման թոշակագրամներն չվճարելուն պատճառով պիտի արտաքսուին ուսումնավայրերից և ապա կենսական պիտոյքներից զրկված լինելով մերկ ու քաղցած փողոցները թափառելով կոտորուեն, չէ որ Շամախւոյ թեմի Հոգևոր Հայրերը կուրախանան, որովհետև նրանց միակ ուխտն էլ այդ է, որ իմ սերունդը կորուստեան մատնեն, իսկ եթէ այս խնդիրս էլ չպիտի յարգէք, ինչպէս ուզում էք, այնպէս հրամայեցէք, ես իմ կամքովս չեմ գնալ գերեզման—Սևան,—այլ կսպասեմ Տփխիս Ամենապատուութեանդ հրամանին և այս մայիս ամսի 12-ից սկսում եմ ապաշխարել։

*Ի 14-ըն մարտի 1908 ամի № 82*

## ԺԱ.

*Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին Ամենայն Ռուսաց ի Վիճակային Կոնսիստորիայի Հայոց Տփխիսայ Բարեկ. Մեսրովբ ա. քահանայի Տէր-Ոսկանեանց*

Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի Կոնսիստորիայիս լուեալ զհրաման Սինոդի Ս. Էջմիածնի ի 17 յունիսի տարւոյս թ. 1635, յորում գրի „ի Սինոդի“ լեալ զզեկուցումն ըստ գործոյն մեղադրանաց Մեսրովբ ա. քահանայի Տէր-Ոսկանեանց Բաքու քաղաքի ի զանազան զեղծմունս։ Հրամայեցին Զիջեալ ի

հիւանդագին վիճակ Մեսրովբայ ա. քահանայի Տէր-Ոսկանեանց ըստ վկայութեան բժշկաց՝ առաքել զնա յապաշխարութիւն ի վանս Հաղբատայ վեց ամսեայ ժամանակաւ փոխանակ վանուցն Սեւանայ։ Ի կատարումն վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Շամախւոյ և տալ տեղեկութիւն քահանային, որ զարդիս գտանի յուխտատեղւոյզ Ծիրանաւորի, և վանահօր վանուցն Հաղբատայ ի ձեռն Կոնսիստորիային Վրաստանի“ հրամայեցին զայս վճիռ Սինոդի Ս. Էջմիածնի յայտնել ձեզ։ „25“ յուլիսի 1908 ամի ի ք. Տփխիս անդամ Կոնսիստորիայի։

կ. Պ. Ատենադպրի Մ. Վարդանեանց։

## ԺԲ.

*Նորին Ամենապատուութեան Տիառն Տեղակալին Կաթողիկոսի Ամենայն Հայոց Գերապատիւ Գէորգ արքեպիսկոպոսի Սուրէնեանց*

Անիրաւացի դատապարտուած Մեսրովբ ա. քահանայ Տէր-Ոսկանեանից։

## ԽՆԴԻՐ

Յուլիս ամսի 25-ին 2452 ս. ս. թ. 1635, ստացայ Ս. Սինոդի հրամանը, որով խղճացել է

վրաս իբրև հիւանդի, իմ ապաշխարհութեան վայրն է փոխում, Սևանի տեղ Հաղբատ ուղարկելով: Սակայն թող ների ինձ յայտնել նախ՝ չէ որ երեք բժիշկ ինձ քննելով որոշել են, որ ես հանքային ջրերով բժշկուեմ Պեատիգորսկ կամ Թիֆլիս, իսկ Հաղբատում այդ չկայ, և երկրորդ՝ որ Հաղբատը լինելով իմ արիւնարբու թշնամու՝ Աբգար աւագ քահանայ Տէր-Յարութիւնեանցի հայրենիքը, չեմ կարող գնալ, որովհետև այն քահանան, որ իւր քահանայ որդու և համախոհ կարգակիցների հետ ինձ կամեցաւ սպանել գործակալի ներկայութեամբ, որ իբրև թէ ժողովի էր հրաւիրած իր մօտ Բագւի մէջ, նա հեշտութեամբ կարող է իր չարամտութիւնը կատարել այդ ամայի վանքում: Բազմամբոխ քաղաքի հարիւրաւոր ոստիկաններից առանց երկիւղի սպանութեան փորձ կատարողը հեշտութեամբ կարող է սպանել թշնամուն անապատներում: Արդ՝ միթէ ըմբոստութի՞ւն պիտի համարուի այս արդար ու իրաւացի կերպով մարդկային տարրական իրաւունքներիս պաշտպանութեան համար խօսելը:

Թէև այդ սպանութեան փորձի մասին բազմաթիւ խնդիրներով դիմել եմ տեղական հոգևոր իշխանութեանը, բայց ոչ մի պատասխան չեմ

ստացել։ Եւ այդ բողոքի պատճէնները սրա հետ ուղարկում եմ։ Արդեօք ով կերաշխաւորի, որ բժշկական վկայութեան հակառակ Հաղբաթայ վանքում, ուր չկան հանքային ջրեր, այլ կայ թշնամի, իմ անձը վտանգից ազատ կմնայ։

Ամենապատիւ Հայր, իբրև Քրիստոսի աշակերտ խօսում եմ Նրա կտակարանից. "Եթէ կամիս չերկնչել յիշխանութենէ, զբարիս գործեա, զի ընկալցիս գոհութիւնս ի նմանէ"։ Ես ոչ մի չար բան չեմ գործել, հետևաբար կարիք չունեմ իշխանութիւնից՝ այն էլ Նրա անագորոյն ներկայացուցիչներից վախենալու։

Ես կարհամարեմ այն իշխանութիւնը, որ իր զազիր կրքերին զոհ կբերէ ուրիշի նուիրական սրբութիւնը և դրանով չքաւականացած ծայրայեղ չարաթոյն միջոցների կդիմէ այդ սրբութեան տիրոջը մէջ տեղից բառնալու։ Ես գերդաստանովս զոհ եմ դառել Բագւի Գործակալ Զաւէն վարդապետին։ Թէև ես այդ մասին աւելի բացայայտ խնդրագրով բողոքեցի ամենապատւութեանդ, սակայն իմ բողոքը մնաց „ձայն բարբառոյ յանապատի"...

Ես կհնազանդիմ այն իշխանութեանը, որի նշանաբանն է արդարութիւն և իրաւունք և վարձատրութիւն բարեգործին, իսկ այժմեան իշխանութեան ներկայացուցիչների դէպի ինձ բռնած դիրքը հակառակն է այդ ամենին, բըռ-

նութիւն և վրէժխնդրութիւն – բարեգործներին պատիժ, իսկ չարագործներին վարձատրութիւն։

Ո՞վ է ինձանից պահանջում հնազանդութիւն. այն գործակալը, որին ես ներկայացրի քաղաքական իշխանութեանը գեներալ նահանգապետ Փադէևի ձեռքով պատւանշանով վարձատրելու, իսկ ինքը երախտամոռ գոլով գաղտնի գրութեամբ միջամտում է Սինօդին ինձ, որպէս յանցաւոր անարժանի, մատնում փոխարքային, Փադէևը այդ մասին իմ ներկայութեանը սրբազան առաջնորդին իւր ցաւակցութիւնն ու վիշտն էր յայտնում, և յայտնապէս ասաց ինձ. այդ մասին բողոքել փոխարքային։ Բայց ես ի տեղի փոխարքային բողոքելու իմ պաշտօնական յայտարարութեամբս Գործակալ նոր միջոցիւ բացատրութիւն և պատճէն եմ պահանջում ս. Սինօդի ատեանից, և ահա թէ ինչի համար սկսեց վրէժխնդիր լինել ինձանից, ժողովեց իր գլխին իմ հին թշնամիներիս, որոնք թէև առած այդ հոգևորականից, չմնաց չարիք, որ չհանէին իմ գլուխս, էլ ինձ ծեծել, անպատւել, ծխերս յափշտակել և ի լրումն այդ բոլոր չարագործութեան հնարեցին ծխականների ցուցակ պահանջել ինձանից դեկտեմբերի 4-ին եօթն օրւայ ընթացքում և գիտէին, որ իմ աստանտական ծխականների ցուցակ կազմելը այդ կարճ ժամանակում անհնարին էր և երբ ես տիրացուիս ձեռքով ցուցակագրում էի նոքա կաշառեցին տիրացուիս և զրկեցին ինձ հնարաւորութիւնից

այդ հրամանը կատարելու.. բայց այնուամենայնիւ ցուցակը ներկայացրի փետրուարի 11-ին, սակայն դարձեալ արգելեցին ինձ քահանայագործութիւնից, քաջ գիտենալով, որ իմ ազատ հոգին չի կարող տոկալ այդքան վաթարագոյն ու անարգ բռնութեան։ Ասացէք խնդրեմ, ո՞ւր է արդարութիւնը, որ ծխոց ցուցակի համար ինձ պատժում են յունուարին, այն ինչ իմ ընկեր քահանաներից այդ ցուցակը դեռ մինչև մայիսի 11-ը չէր ստացուած։

Ես այս ծանր ու զկցեցուցիչ բառերը նրա համար եմ գործ դնում, որ ինձ դատաստանի մատնէք ու այնտեղ քննութեան ժամանակ բոլոր իմ գործերը, գըրչից դուրս եկած նշանախեցը անգամ պատրաստ եմ ստուգելու. բայց չարագործը ատում է լոյսը, որ իր գործերը չհանդիմանուեն։ Եթէ հոգևոր իշխանութիւնը ունի արդարասիրութեան հակումն, թող քննութիւն նշանակէ և վերջապէս ինչ բարոյական իրաւունքով ինձնից պահանջում են հնազանդութիւն, մինչդեռ իրենք իրենցից մեծի Հայոց Հայրապետի կոնդակը առ ոչինչ համարելով, պատժում են ինձ առանց քննիչի, որ պիտի նշանակուէր „յարտաքոյ ի թեմէն Շամախոյ“ իմ վրայ յարուցած բողոքները քննելու, միթէ թըշնամին թշնամուն կարող է վճիռ տուող դատաւորը լինել։

Ամենապատիւ Հայր, ես այլեւս ոչինչ չեմ խնդրում, որովհետեւ իմ խնդիրներս ոչ լսող կայ եւ ոչ քննող։ Երկու ամիս անցաւ ես այստեղ ապաշխարում եմ ծայրայեղ աղքատութեան մատնուած, հազիւ պատժիս տեղը փոխելու հրաման եղաւ՝ այժմ ինչպէս կամենաք, այնպէս արէք, ես արդէն հասել եմ յուսահատութեան գագաթնակէտին, որի հետեւանքի բոլոր ծանրութիւնը պիտի ընկնի նրա վրայ, որի ձեռքին է այս ալեծուփ կենցաղիս արդարութեան ղեկը։

Մեսրովբ աւագ քահանայ Տէր-Ոսկանեանց
ի 26-ըն յուլիսի 1908 ամի
ի Թիֆլիզ № 85.

Սիրելի ընթերցող, գուցէ հաճելի լինի Ձեզ իմանալ, թէ Եղիշէ քահանայ Գեղամեանցը ինչի է ինձ հալածում, թէ գաղտնի եւ թէ յայտնի առանց կանգնելու որեւէ միջոցի առաջ, այլ ինչ ճանապարհով էլ լինի, միայն աշխատում է ինձ տապալել. ես որպէս աւետարանի աշակերտ պատասխանում եմ մեծ վարդապետ Յիսուսի առակով. „Ծառ բարի ոչ կարէ պտուղ չար առնել եւ ծառ չար ոչ կարէ պտուղ բարի առնել“։ Տէր-Եղիշէն էլ որպէս բնաւորութեամբ չար արարած. ինձ իւր ձգտումներին հակառակ եւ թշնամի ճանաչելով, սկսեց ինձ հալածել եւ ահա թէ ինչպէս եմ տեսնում նրա չարութիւնները բացի իմ դէմ գործածները։ Նրա առաջին անունը Յովակիմ էր,

աշխարհի կույր ժամանակին առաջին անգամ կարողացաւ Ախալցխայի քաղաքագլխի պաշտօն ձեռք բերել և այդ բարձրութիւնից յանկարծ ընկաւ և դառաւ իր բնաւորութեան վայել մի պաշտօնեայ՝ բազարնիկ, իսկ իր բնածին խարդախութեան պատճառով այդ սոր պաշտօնից էլ զրկվեց, մնացած փողոցներում. իրեն համապատասխան դասակարգի հետ ունեցած պարապմունքը թղթախաղութիւնն էլ իրա անյագ կրքին յագուրդ չտւեց. դրա համար էլ դիտաւորեալ դիմակաւորուեց, „Հայկունի“ կեղծ անունով մտաւ Հայոց խոպանացած և անմշակ գրականական անդաստանը, նկատի ունենալով, որ Հայ ազգի կղերականների աչքերը ծակում է այն լոյսը, որ սփռում՝էին Հայ ժողովրդի մէջ հիւսիսից Ստեփանոս Նազարեանը և հարաւից Րաֆֆին, թէև ուրոյն ուրոյն եղանակաւ, բայց միահոգի, իսկ բանսարկու Հայկունին անկոչիկ ոտը դրեց նախապէս նախատեսած նժարի ծանր կողմը խաւարասէր հոգևորականներին հաճոյանալու, միայն և միայն անկոչիկ ոտին կօշիկ ունենալու նպատակով, ընդունած կրէտիկա խօսքի պատրւակով ցեխոտում էր Րաֆֆու գրւածքները, որով կատարում էր Հայոց ազգի Տէր ու Տնօրէնների կամքը. իր ծրագիրը նախապէս իրագործելու և իրա նպատակին հասնելու համար, լուսափետուր Հայկունին հաւաստիացած էր, որ „Հիւսիսափայլին“

լռեցնել տալով ահարկու հերոսի սարսափից ոչ ոք չի համարձակւել պատասխանելու կամ ասելու. ով Նորափետուր Հայկունի, այդ ի՞նչ ես անում. Րաֆֆին խոմ սրբազաններին սիրած սուրբ գրքերի մեկնաբանութիւնը չի արել, որ սխալ համարելով, կրիտիկա ես անում: Այսպէս մեր բազարնիկութիւնից էլ ВОНЪ արած Յովակիմը Սիրամարգի փետուրներով զարդարուած՝ դուրս եկաւ հրապարակ, որ այդ ժամանակի վառվռուն հայրենասէր երիտասարդ Սայատ Ամերեանցին և Սարգիս Տիրազեանցին. դորանց շնորհիւ համախօսական կազմել տւեց Բագւում քահանայ լինելու, բայց Թեմակալ առաջնորդ Թադէոս եպիսկոպոս Ջինականը չկամեցաւ ձեռնադրել. կեղծափետուր Հայկունին նորէն դիմեց պ. պ., Ամերեանցին և Տիրազեանցին և սրանք նրանից ստացած ծրագրով Բագւի հասարակութեան անունով մէկ հեռագիր են յօրինում, թէ մենք կրօնափոխ կլինենք, եթէ Հայկունուն չը ձեռնադրիս: Սարին էնգօլացի 100-աւոր մշակներին ժողովում են հեռագրատան հանդէպ իրանք էլ նրանց կողմից որպէս պատւիրակ ցոյց են տալիս նաչարնիկին մարդկանց բազմութիւնը, նաչալնիկը այդ կեղծ ստորագրութիւնները վաւերացնելով, հեռագրում է առաջնորդին. եպիսկոպոսը ստիպւած կեղծ չարիքից ձեռնադրում է Գեղամեանցին հեղինակաւոր Եղիշէ անւանելով: Անունը ու

պաշտօնը փոխելով, նրա չար բնաւորութիւնը չի փոխւում, մնում է նոյն հին ինտրիգանը, գալիս է իրա նոր պաշտօնավայր Բագու քաղաքը ու անմիջապէս գործ դնում իրա բնածիր շնորհքը—խարդախութիւնները. այդ հանգիստ ու խաղաղ քաղաքում խառնակչութիւններ յարուցանում և քաշքշման բաբիլօն է դարձնում և որի համար Բագուցիները Եղիշէ 3 րդ անունը փոխելով, 4 րդ անունով կնքեցին „Խախամ Ցովել" և իրա գործունէութեան համապատասխան «Խախամ Ցովել» գիրքը հրատարակեցին, որի մէջ նկարագրւած է Տէր-Եղիշէի արժանիքները և ով լինելը:

Ես լաւ ճանաչում եմ Բագւի քահանայութեան ով ու որպիսի դասակարգից լինելը և ամենքն էլ քահանայութեան պաշտօնը ձեռք են բերել միայն և միայն ապրուստի միջոց համարելով, իսկ ես իմ համեստ ապրուստի միջոցը նւիրել եմ միմիայն քահանայութիւն անելու համար. հէնց այս կէտից երևում է, որ մեր պաշտօնավարութիւնը իրար հակառակ են. նոքա շահւելու նպատակով են քահանայական պաշտօն վարում, իսկ իմ նպատակս՝ իմ գաղափարն է. ես էլ խոստովանում եմ, որ մեր արդի հոգևորականութեան թշնամի եմ միակ գլխովս, այդ պատճառով էլ իմ դատը յանձնում եմ նրանց, որոնք անշահասիրութեամբ սիրում են տեսնել Հայ ազ-

դի անդորրութիւնն ու առաջադիմութիւնը:

Բայց ծով դլուխ ունի, որ ազգին-ժողովրդին բանի տեղ դնէ, մեր ինտելլիգենցիան, որ գիշեր ցերեկ աշխատում է, աշխատում և տքնում է կեանքի բաժակը անյագաբար խմել մինչև մրուրը...: Մեր հոգևոր իշխանութիւնը, որի համար գրօշ չարժէ ոչ ժողովուրդ և ոչ ազգ, որովհետև այդ իշխանութիւնը իբրև եկեղեցու—ժողովրդի սպասաւոր պարտաւոր էր լսել հարիւրաւոր ինքնաձեռագիր ստորագրութեամբ ժողովրդի խնդիրը, որ տուեցաւ ս. Էջմիածնի Սինոդին այս տարի մայիս ամսին, նկարագրելով հանգամանօրէն գործի էութիւնը, պատկերացնում են հոգևոր դատաւորների առաջ իմ՝ Տէր-Ոսկանեանցիս անմեղութիւնը ու անիրաւացի դատապարտուելը. իսկ նրանց—ինձ հալածողների անխղճութիւնն ու անիրաւութիւնը, խնդրելով հրապարակական քննութիւն նշանակել մեղաւորին պատժելու ըստ արժանոյն, որ վերջ դրուի այն ամօթաբեր և խայտառակ դրութեանը, որի մէջ գտնւում են Բագուի քահանայութիւն կոչուած տմարդի արարածները:

Սակայն արդի բիւրօկրատ հոգևորականութեան համար մի գործակալ վարդապետի սուտ յայտարարութիւնը հարիւր անգամ բարձր է գնահատւում քան թէ հարիւրաւոր ժողովրդի փաստացի դիմումն ու իրաւացի խնդիրը, այն էլ

հրապարակական քննութիւն պահանջելը, որից փախչում են ինչպէս բուն արևի լոյսից։ Ահա վեց ամիս է անցել դեռ Տէր Մինօդականները ոչ մի պատասխան չեն տւել ժողովրդական խնդրին, որովհետև նրանց համար ժողովուրդը հաւասար է զրօյի, որ դրւելով իրանց տրամադրութեան տակ, իրենց փառքն ու մեծութիւնն է աւելացնում և ուրիշ ոչինչ։

Հաւատում եմ, որ մօտ է այն ժամանակը, երբ այդ զրօն իւր օղակի մէջ առած, այնքան պիտի սեղմէ արդի բիւրօկրատ կղերին, որ մէջքը կոտրելուց յետոյ պիտի դէն չպրտէ իւր միջից որպէս մի անպէտքի։ Փոյթ չէ բնաւ, որ ես ահա քսան տարի է նահատակւում եմ անգթօրէն այդ կղերի անիրաւութիւնից, միայն թէ թող ժողովուրդը գիտակցութեան աստիճանի կանգնի, որ այլևս զրօ չդառնայ չնչին միութիւնները բազմապատկելու համար։

---

Ծանօթ. Վերջին խնդրիս պատասխանը մինչև այսօր հոկտեմբերի 18-ը չեմ ստացել, թէև հասցէս գրաւոր յայտնել եմ Թիֆլիզի Կոնսիստորիային։ Ահա վեց ամիս է, որ Թիֆլիզում ապաշխարելով սպասում եմ նոր կարգադրութեան որ չի լինում։

Այսպիսի անփոյթ վերաբերմունքը հոգ. իշխանութեան կողմից ինձ իրաւունք չի տալիս արդեօք, որ ես իմ գլխիս ճարը տեսնեմ։

(Վերջ առաջին հատորի)